

ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954



Հայ Յեղափոխական Դաշնակցության Պաշտոնաթերթ

(74-րդ տարի) Թիվ- 10(1644) ————— Հոկտեմբեր 2020

Բովանդակություն



«Դրոշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմության թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Սկրուպյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ <https://www.droshak.am>
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ



1- Առաջնորդող

Ա. Շ.

Նոր պատերազմ, հին դասեր (Էջ 1)

2- Հարցազրույց

**Հարցազրույց ՀՅԴ Բիւրոյի անդամ
Բենիամին Պճարչեանի հետ**

«Հայրենի հողի վրայ հայահաւաքը Հայ
Յեղափոխական Դաշնակցութեան համար
ծրագրային նպատակ է» (Էջ 2-4)

3- Հայաստան - Սփյուռք

Սկրտիչ Սկրտիչեան

Հայաստան – ՀՅԴ – Սփիւռք(8) (Էջ 5-7)

**4- ՀՅԴ ծննդյան 130 և հայրենիքում
վերընձյուղման 30 ամյակներ**

Հրայր Կարապետյան

Հայացք 30 տարի անց (Էջ 8-10)

5- Դաշնակցական բեմ

Ավո Գաթրճյան

ՀՀ Դաշնակցութեան օրը հաշուետուութեան
եւ ուխտի վերանորոգման օր (Էջ 11-12)

6- Քաղաքական

Սեդո Պոյաճեան

Լօզանի դաշնագիրը չփոխարինեց Սեւրի
դաշնագիրը (Էջ 13-14)

7- Բնապահպանություն

Արեգ Ղարաբեգյան

Ամուլսարի հանքավայրը չի կարող
շահագործվել, երբ կան անկառավարելի
ռիսկեր (Էջ 15-20)

8- Ընկերական շրույցներ

Վրէժ-Արմէն

«Երկու տողէն անդին...» Հայ դատ, հայեցի
կրթութիւն (Էջ 21-25)

9- Գաղափարական

Վարդան Ղանդիլյան

Հայոց եկեղեցին և քրիստոնէական ազգային
արժեքային համակարգի ձևավորումը
(Էջ 26-31)

10- Հայ կյանք

Վարդան Պետրոսյան

Հայեցակարգային հակասություններ կամ
հայագիտության «հինգերորդ շարասյունը»
(մաս 2-րդ) (Էջ 32-36)

11- Պատմության լուսարծակ

Վահագն Գարագաշեան

Տերսիմի մէջ ՀՅԴ գործունէութեան առնչուող
պատմական ուրուագծեր (Էջ 37-40)

Անի Մելքոնյան

Կարսի անկումը. պատճառներ և դասեր
(Էջ 41-44)

Նոր պատերազմ, հին դասեր

Ա. Շ.


Մեպտեմբերի 27-ին Ադրբեջանը հերթական պատերազմը սանձազերծեց: Երբ դեռ թարմ են տավուշյան դասերը, հարց է ծագում, թե ինչու Ադրբեջանը նախաձեռնեց նոր արկածախնդրություն: Մյուս կողմից՝ ադրբեջանական իշխանությունների՝ վերջին շաբաթների ագրեսիվ հռետորաբանությունը, ռազմական միջոցների և վարձկան ծայրահեղականների ակտիվ ներմուծումը երկիր իրական էին դարձնում հնարավոր պատերազմի հավանականությունը: Բացի այդ՝ թշնամի երկրի ղեկավարի համար միևնույն է, թե իր հանցավոր քայլերը ինչպես կգնահատեն «դրսում»՝ նկատի ունենալով ընթացող բանակցություններն ու պայմանավորվածությունները հակամարտությունը խաղաղ ճանապարհով կարգավորելու վերաբերյալ:

Այլևս ցանկանում է հայությանը ներշնչել, որ երբեք հանգիստ չի տալու, մաշող ու սողացող, պարբերաբար սառչող ու տաքացող հակամարտությունը շարունակվելու է, մինչև հայկական կողմը հրաժարվի Արցախի նկատմամբ հավակնություններից: Սրան կարող ենք ավելացնել ներքին խնդիրները, որոնցից սեփական ժողովրդին մշտապես ձգտում է շեղելու նավթի ու արյունի բռնապետը: Բոլորիս համար ակնառու դարձավ նաև, որ այս անգամ և գուցե այսուհետ գլխավոր թելադրողի դերում է նեոսունահիզմի ցնորքներով համակված Թուրքիայի նախագահը, ով այսօր արդեն իշխում է Նախիջևանում և ձգտում է իր իշխանությունը տարածելու ողջ Ադրբեջանում: Սահմանակից և ոչ սահմանակից տարածաշրջաններում ազդեցության հաստատման համարձակ ու կոշտ մրցակցության մեջ նետված Թուրքիան, կարելի է ասել, որ իրականացնում է իր նվիրական երազանքներից ևս մեկը, ներգրավվում է կովկասյան գործերում և, ձգձգվող հակամարտության մեջ դերակատար դառնալով, փորձում է այն դարձնել գերութերի և մասնավորապես Ռուսաստանի հետ իր աշխարհաքաղաքական առևտրի խաղաղթերից մեկը:

Հայկական կողմը պետք է լրջորեն գնահատի այս իրողությունը և անի ճիշտ հետևություններ՝ առաջնորդվելով միայն իր շահերով և դիմակայելով արտաքին թելադրողների ճնշումներին: Չավարտված այս նոր պատերազմում ևս հայության գլխավոր գենքը իր միասնականությունն է: Այն ողջախոհությունն է, որով առաջնորդվելով՝ ընդդիմության հիմնական ուժերը և առաջին հերթին Դաշնակցությունը հայտարարեցին, որ ճակատագրական պահին անհրաժեշտ է մի կողմ դնել բոլոր ներքաղաքական տարաձայնությունները և համախմբվել միասնական ուժերով երկիրը նոր փորձությունից հաղթականորեն դուրս բերելու նպատակի շուրջ:

Նոր պատերազմի համար Ադրբեջանի

արկածախնդիր ղեկավարությանը հավանաբար ոգևորեցին նաև Հայաստանի ներքին կյանքում արձանագրված որոշ գործընթացներ, որոնց դասը նույնպես մենք պարտավոր ենք քաղել, ինչպես և խաղաղասիրության պատրանքներից սթափվելով՝ մտածել առաջնային անելիքների մասին՝ վերականգնել ներքին միասնականությունը, իրական քայլեր ձեռնարկել տնտեսական կայուն զարգացման մայրուղի դուրս գալու ուղղությամբ, վարել ակտիվ արտաքին քաղաքականություն այն հարթակներում, որոնցում ունենք արդյունավետ գործելու փորձ ու հնարավորություն, ինչպես և շահերի համընկնումներ: Պահի աներկբա թելադրանքն է, որ Հայաստանը Արցախի հետ կնքի ռազմաքաղաքական դաշինք՝ հստակորեն արտահայտվելով այն բաների մասին, որոնցով արդեն իսկ զբաղվում է՝ հավաստելով բազմակողմանի հովանավորությունը հայկական երկրորդ պետության և այնտեղ ապրող ժողովրդի հանդեպ: Քաղաքականորեն ամրագրելով հանձնառությունները՝ պետք է բարեկամ պետությունների համար հիմնավորի Արցախի անկախության ճանաչման իրավական անհրաժեշտությունը: Աշխարհաքաղաքական ուժեր, ակտիվ դերակատար, գրավիչ Հայաստանը կկարողանա վերջնականապես հաղթահարել այն փորձությունը, որը կարելի է անվանել ադրբեջանաթուրքական ֆաշիզմ: Ժամանակն ու թավալգոր զարգացումները սխալվելու և հապաղելու շռայլությունը չեն ընձեռում մեզ: ■



«Հայրենի հողի վրայ հայահափառքը Հայ Յեղափոխական Դաշնակցության համար ծրագրային նպատակ է»

Հարցազրույց ՀՅԴ Բիւրոյի անդամ Բենիամին Պնաքչեանի հետ

«ԴՐՕՇԱԿ».- Յարգելի ընկեր Բենիամին Պնաքչեան, այս տարուայ օգոստոսին գրեթէ ողջ Բէյրութը ցնցուեց հզօր պայթիւնից: Առանց այդ էլ տուական ժամանակ Լիբանանը գրնում էր քաղաքական, տնտեսական և սոցիալական բարդ ինդիքների սարդոստայնում, իսկ վերջին շրջանում դրանց աւելացել է նաև համավարակը: Վերջին աղէտից յետոյ Լիբանանը դեռ լիովին ուշքի չի եկել, ու միաժամանակ կրկին ժողովրդային յուզումներ են, ճգնաժամի շեմին գրնուող կտտավարման համակարգ, ինչպէս և ակնյայտ է դարձել արտաքին ուժերի կողմից Լիբանանի ներքին գործերին միջամտիս լինելու, կամք թելադրելու միտումը: Հարցը տարողունակ է, այնուամենայնիս գանկայի կը լինէր, եթէ ընդհանուր գծերով ներկայացնէիք ներկայ կացութիւնը:



- Լիբանանը իր աշխարհագրական դիրքով ու անկախութենէն (1943) ի վեր հաստատուած քաղաքական համակարգով շրջանային տագնապներու և երբեմն նոյնիսկ միջազգային հակամարտութիւններու թատերաբեմը դարձած է: Արաբ-իսրայէլեան խնդիրը, պաղեստինեան հարցը, արաբական երկիրներու միջև մրցակցութիւնը և այլն Լիբանանի մէջ իրենց անդրադարձը ունեցած են և կ'ունենան, երբեմն՝ քաղաքական գետնի վրայ, երբեմն՝ նոյնիսկ արհիւնալի բախումներու միջոցաւ: Երկրին համայնքային կառուցուածքը, եթէ մէկ կողմէ նպաստած է իբրև գանազան մշակոյթներու բաց հասարակութիւն՝ լիբանանցիին յատուկ կերպարը կերտելու և հարստացուցած է տարբեր կրօնքներու ու էթնիկ արմատներ ունեցող գանազան հասարակութեանց համակեցութեան փորձը, միւս կողմէ նաև առիթ տուած է ու նպաստած հակադիր շահեր հետապնդող արտաքին ուժերու ազդեցութիւններու ու միջամտութիւններու: Տարածաշրջանին հանդէպ միջազգային ու շրջանային հետաքրքրութիւնն ու ախորժակը աճեցան, երբ տասնամեակ մը առաջ Արևելեան Միջերկրականի ծովային ընդերքի մէջ կազի ու քարիտի հսկայ պաշարներ յայտնաբերուեցան, որոնք արդիւնահանուելու պարագային պիտի մրցին Արևմտեան երկիրներու էներկեթիկ մատակարարման աղբիւրներու հետ, ինչպիսիք են Ռուսիան, Քաթարը, Մեքսիկան Արաբիան, Իրանը և Ծոցի երկիրները: Այս մէկը պիտի նպաստէ որոշ երկիրներու մտնաշնորհէն ձեռքազատուելու ու աղբիւրներու մէջ այլազանութիւն մտցնելու, ինչպէս նաև փոխադրածախսերու ու գիններու նուազեցման:

Օգտուելով միջնարևելեան երկիրներու ազգաբնակչութեան էթնիկ և կրօնական տարբերութիւններէն, այդ երկիրներու կոռումպացուած

քաղաքական վերնախաւէն, ընկերային-տնտեսական տագնապներէն ու հիմնուելով ժողովրդային դժգոհութեան ալիքին վրայ՝ արտաքին ուժեր կը փորձեն գանազան միջոցներով իրենց կամքը պարտադրել: Գունատր յեղափոխութիւններէն մինչև քաղաքացիական պատերազմները, կրօնական հակամարտութիւններէն մինչև պատժամիջոցները իբրև միջոց կ'օգտագործուին հակակշիռ բանեցնելու համար: Լիբանանը՝ իբրև Միջին Արևելքի մէկ մասնիկը, գերծ չէ նման փորձերէ, ու հոկտեմբեր 2019էն ծայր առած ժողովրդային բողոքի ալիքը, որ ունի իր առարկայական պատճառները, պէտք է դիտարկել իբրև երկիրը ապակայունացնող ազդակ, որուն կը զուգորդուին նաև տնտեսական շրջափակումն ու սուր տագնապը: Անցնող ամիսներուն լիբանանեան թղթոսկին աւելի քան հինգ անգամ արժեզրկուեցաւ, ու պետական ծրագրուած տնտեսական քաղաքականութեան մը բացակայութեան դրամատունները սահմանափակած են գործառնութիւնները: Առայժմ միջազգային և շրջանային դերակատարները իրենց դիրքերը ամրապնդելու կը նային ու չեն նախաձեռնէր բանակցութիւններով իրենց հակադիր շահերուն հասարակ յայտարար գտնել: Հետևաբար պէտք չէ մօտիկ ապագային ակնկալել Լիբանանի տագնապին ունէ հիմնական լուծում: Բնականաբար, նաև համաճարակը իր ժխտական անդրադարձը կ'ունենայ երկրի տնտեսական ու ընկերային ճգնաժամը աւելի ևս սրելու իմաստով:

«Դ».- Մի փոքր էլ խօսէք հայ համայնքի վիճակի մասին: Աղէտը նաև մեր հայրենակիցների կեանքերի կէտ, ինչքի, նիւթական և այլ միջոցների զգայի

կորուստներ եղան: Համայնքային կառույցները արագորէն վերականգնումի և օժանդակութեան ծրագրեր կազմեցին, աշխարհի փարքեր ծագերից հայութիւնը օգնութեան ձեռք մեկնեց: Ինչ էլ յաջողուել անել, ինչ ծրագրեր են ընթացքի մէջ: Ի դէպ, այս աշխարհաքննարկի ծիրում ակնատու էր Դաշնակցութեան դերակատարութիւնը:

Բ. Պ.- Օգոստոս 4ին Պէյրութի նաւահանգիստին պայթումը անսխալ ընթաց էր իր տարողութեամբ և պատճառած մարդկային ու նիւթական վնասներով: Հիմնականին մէջ նաւահանգիստին մերձակայ՝ Արևելեան Պէյրութի շրջանները, որոնք հայահոծ թաղամասեր են, անխտիր ահաւոր քանդումի ենթարկուեցան: Ըլլայ գոհուածներու թէ վիրաւորներու, ըլլայ հիմնահատակ քանդուած ու անբնակելի դարձած հազարաւոր բնակարաններու, ատերուած գրասենեակներու, վաճառատուներու թէ գործատէրիներու շուրջ տասնհինգ տոկոսը կը կազմեն հայերը և հայապատկան ինչքերը, ինչ որ համայնքին համար հսկայական կորուստ է ու հարուած՝ գաղութի ուժականութեան: Համահայկական բոլոր կարիքներուն ու ծրագիրներուն, ըլլան անոնք Հայաստանի, Արցախի թէ Սփիւքի մէջ, իր արժանավայել մասնակցութիւնը բերած երբեմնի հզօր գաղութը այսօր ինք օժանդակութեան կարիք ունի: Պայթումէն առաջ տնտեսական տագնապը դիմագրաւելու համար ՀՅԴ Բիւրոն արդէն իսկ նախաձեռնած էր Լիբանանի օժանդակութեան դրամահաւաքի, իսկ աղէտէն անմիջապէս ետք ՀՅԴ Բիւրոն կոչ ուղղեց ուղեկից կառույցներուն անյապաղ համագաղութային մեր ուժերը վերստին լարելու և լիբանանահայութեան զօրակցելու: Պէտք է հաստատել, որ Հայաստանէն, Արցախէն թէ Սփիւքի տարբեր գաղութներէն համահայկական զօրակցութիւնը երբէք չզլացուեցաւ, և անսակարկ նուիրումով ու եռանդով օժանդակութեան արշաւները կազմակերպուեցան: Համայնքի քաղաքական, կրօնական թէ հասարակական կառույցները համախմբող Լիբանանի վերականգնումի մարմինը երեք առաջնահերթութիւն ճշդած է՝ բնակարաններու վերանորոգում, ուսումնական համակարգ և առողջապահութեան ոլորտ: Վերականգնումի աշխատանքները կամաւորներու կողմէ կազմակերպուած ու արդիւնաւէտ ձևով կը տարուին: Վստահ ենք, որ իր հայրենակիցներու օժանդակութեամբ լիբանանահայութիւնը պիտի կարողանայ դիմագրաւել աղէտին հետևանքներն ու վերականգնիլ:

«Դ.»- Վերը թուարկուած իրադարձութիւնների յորձանուպում կարծես քննարկման գայթակղիչ թեմա դարձաւ լիբանանահայութեան հայրենադարձութեան հարցը: Այսօր, երբ գրեթէ երկու ամիս է անցել ծանր աղէտից, ինչ միայնութիւններ կան այս հարցի շուրջ ինչ եզրակացութիւնների է յանգել համայնքը:



Քննարկ 4. 08. 2020

Բ. Պ.- Հայրենադարձութիւնը զգայուն և լուրջ հարց է, որ իր ռազմավարական նշանակութեամբ ուղղակիօրէն կ'առնչուի համահայկական մեր տեսլականին ու իղձերուն: Թէ ինչպէս կը պատկերացնենք հայութեան տեղաբաշխումը, ինչ դեր կը վերապահենք Սփիւքին, քաղաքական և Հայ դատի առումով ինչ նշանակութիւն կը ներկայացնեն Միջին Արևելքի գաղութները, Հայաստանի ժողովրդագրական ինչպիսի պատկեր կ'ապահովէ հայրենիքի կայուն զարգացումն ու անվտանգութիւնը, այս բոլորը հարցադրումներ են, որոնք կը կարօտին համագգային քննարկումի: Քննարկում, որ պէտք է նկատի ունենայ մեր պետական հնարաւորութիւնները և սփիւքեան կառույցներու փորձառութիւնն ու ներուժը: Հետևաբար աղէտի մը հետևանքով տուեալ պահի մը քննարկման թեմա չէ: Համագգային ընդունուած ծրագրի մը բացակայութեան անպատասխանատու յայտարարութիւնները միայն խուճապ կը ստեղծեն ու կ'առաջնորդեն անտեղի յուսախաբութեան: Հայրենի հողին վրայ հայահաւաքը Հայ Յեղափոխական Դաշնակցութեան համար ծրագրային նպատակ է, ու կարելի չէ շեղիլ անկէ, սակայն թեմայի կարևորութիւնը մեզ կը ստիպէ լրջութեամբ ու պատասխանատուութեամբ ծրագրել և կազմակերպել հայրենադարձութիւնը: Դժբախտաբար, այս նպատակով հայրենի իշխանութիւններուն մեր բոլոր դիմումները առ այսօր մնացած են անպատասխան:

«Դ.»- Քաղաքական, տնտեսական համայնքային և այլ խնդիրներ ծառայած են այսօր միջինարևելեան ողջ փարսաճաշրջանում: Գիտենք, որ դեռևս մերահոգի է մնում իրավիճակը Սիրիայում: Նշածս

և դրանից էլ ընդարձակ աշխարհաքաղաքական գոյրում իր սաղրիչ զաթոնական գործունեությունն է ծառայում Թուրքիան. սրա կողքին, անշուշտ, կան այլ ակտիվ դերակատար ուժեր: Գարձնայ ընդհանուր գծերով եթե անդրադառնանք, ինչպիսին է կացութիւնը, և ինչ հեռանկարներ են ուրուագծում:

Բ. Պ.- Միջազգային տարբեր ուժեր, հիմնականին մէջ ԱՄՆ, Ռուսիա և Եւրոպա, հետաքրքրուած են միջինարևելեան տարածաշրջանի ռազմավարական դիրքով ու հարուստ ընդերքով: Անոնց շահերը կը հակադրուին, ու պահը չէ հասած ընդհանուր համաձայնութեան մը:

Օգտուելով այս անորոշութենէն՝ նախքան միջազգային թէ տեղական ուժերու վերջնական դասաւորումը Թուրքիա, մտահոգ տարածաշրջանի մէջ իր դերակատարութեան հաւանական նուագումով, կը փորձէ իր ազդեցութեան գոտին ընդլայնել:

Հակառակ տասնամեակ մը առաջ յայտարարած իր «դրացիներու հետ գերօ խնդիր» կարգախօսին՝ այսօր Թուրքիա իր շրջապատի գրեթէ բոլոր երկիրներուն հետ հարց ունի: Սուրիոյ մէջ ահաբեկչական խմբաւորումներու հետ իր անվերապահ գործակցութիւնն ու օժանդակութիւնը ակնկալուած արդիւնքը չտուին, Լիպիոյ մէջ թէ Արևելեան Միջերկրականի իր նախաձեռնութիւնները միջազգային թէ շրջանային ուժերու բռնն հակազդեցութեան արժանացան, իսկամ եղբայրներուն իր գորակցութիւնը արաբական երկիրներու թշնամանքը ապահովեց, յաջողեցաւ շրջանի մէջ քրտական գործոնը ամբողջութեամբ չէզոքացնել: Լիբանանի պարագային ան կը փորձէ սիննի համայնքը սիրաշահելով ազդեցութեան գոտի ունենալ ու դերակատարութիւն ապահովել ապագայ շրջանային դասաւորումներուն մէջ: Այս ձևով անխուսափելիօրէն ան կը հակադրուի սիննի համայնքի արևմտական հովանաւորներուն՝ Սէուտական Արաբիոյ և Եգիպտոսի: Վերջին շրջանին նաև Հայաստանի վերաբերեալ իր թշնամական ու ռազմաշունչ յայտարարութիւններով ուղղակիօրէն կը սպառնայ Հարաւային Կովկասի մէջ Ռուսիոյ դերակատարութեան: Նկատի ունենալով հակամարտութիւններու այս լայն ընդգրկումը, Թուրքիոյ դիմագրուած տնտեսական սուր տագնապը, ծաւալապաշտական իր նկրտումներն ու իշխանութեան կառչած մնալու իր մոլուցքը հաշուի առնելով՝ Երտոզան կրնայ դիմել անկանխատեսելի քայլերու, որոնք ուղղակիօրէն կը սպառնան տարածաշրջանի, ներառեալ Հայաստանի, կայունութեան և անվտանգութեան:

«Գ.»- Դաշնակցութեան նախաձեռնած կամ կուսակցութեան մասնակցութեամբ շարք ծրագրեր յայտնի պատճառներով ընթացիկ փարում չգործադրուեցին կամ գործադրուեցին մասնակիօրէն: Որպէս «ԱՐԻ» հիմնադրամի փնտրէնների խորհրդի



Արիավան

անդամ ինչ կ'ստէք Արցախում արդէն մի քանի փարի իրականացուող վերաբնակեցման ծրագրերի ընթացքի մասին:

Բ. Պ.- Համավարակի պատճառով «ԱՐԻ»-ի (Art-sakh Roots Investment) ծրագիրները կանգ չառին, ու, հակառակ տնտեսական ճգնաժամին, «ԱՐԻ»-ն ոչ միայն կարողացաւ իր բաժնետէրերուն բոլոր պարտաւորութիւնները ամբողջութեամբ հոգալ, այլև Արցախի մէջ իր ներդրումային ծրագիրները շարունակեց: Այս իմաստով՝ գիտատնտեսութեան զարգացման թէ անասնապահութեան համար յատկացուած վարկերը այս տարի ևս մատչելի ձևով Արցախի «Գիտ» հիմնադրամին միջոցաւ տրամադրուեցան Քաշաթաղի ու Նոր Շահումեանի վերաբնակիչներուն: Պէտք է ըսել, որ անցնող տասնմէկ տարուան ընթացքին բազմահարիւր ընտանիքներ օգտուած են սոյն ծրագիրներէն ու ոչ միայն նպաստած հսկայ տարածքներու մշակման ու Արցախի տնտեսութեան զարգացման, այլ նաև բարելաւած իրենց կենսամակարդակը:

Ինչպէս յայտնի է, «ԱՐԻ»-ի ջանքերուն շնորհիւ կառուցուած Արիաւանի 50 առանձնատունները արդէն իսկ բնակեցուած են, և շուտով յատկեալ 12 նորակառոյց բնակարանները բազմազաւակ ընտանիքներու կը յանձնուին: Մօտ օրէն լիբանանահայ գործարարներու նուիրատութեամբ կ'ամբողջանայ նաև համայնքի նորակառոյց մանկապարտէզը: Զուգահեռաբար Քարվաճարի մէջ, «ԱՐԻ»-ի նախաձեռնութեամբ, աստրալահայ և լիբանանահայ գործարարներ ձեռնարկեցին 15 առանձնատուններով նոր թաղամասի մը կառուցման: Թաղամասը արդէն պատրաստ է ընդունելու շրջանին զարգացման համար այնքան կենսական մասնագէտներու ընտանիքներ: Իր տասնամեայ յաջող փորձառութեամբ «ԱՐԻ»-ն փաստեց, թէ փոխշահաւէտ հիմունքներով ու համահայկական ներուժի արդիւնաւէտ օգտագործմամբ ինչպէս կարելի է տնտեսութիւնը զարգացնել ու հայրենիքը շինացնել: ■

Հայաստան – ՀՅԴ – Սփիուք (8) (եզրակացութեան փոխարէն՝ համահայկական հասարակութիւնը)

Մկրտիչ Մկրտիչեան
«Համագային» կրթամշակութային միութեան կեդրոնական վարչութեան ատենապետ

Պատմական անպատեհ պայմաններու բերումով հայութիւնը երկար ժամանակահատուածներ ի վիճակի չէ եղած համախմբուած ապրելու իր հայրենիքին մէջ: Փաստօրէն, Կեդրոնական Ասիոյ ցեղախումբերու՝ Փոքր Ասիա արշաւանքներէն ի վեր հայութիւնը իր հողերէն կամովին արտագաղթած կամ յաճախ բրտօրէն տեղահան եղած է՝ ուղղուելով դէպի օտար ափեր. հայը դարձած է աշխարհաքաղաքացի՝ բազմաթիւ սերունդներու երկայնքով իր մտքին մէջ շարունակ պահելով լքուած հայրենիքի յիշատակը:

Հայկական մշակոյթի տարրերու հետքերը մարդոց մտքին մէջ մնացած են դարեր շարունակ:

20րդ դարու ցեղասպանութիւնը պատճառ դարձաւ վերջին զանգուածային հայրենագրկումին, որ առ այսօր կ'ալեկոծէ հայութեան հոգին. անհատոյց մեծ անարդարութիւնը գործադրումէն ահա աւելի քան դար մը ետք կը մնայ անժամանցելիօրէն կենդանի, որովհետև վերապրողներու ժառանգորդները տակաւին ուժգնօրէն կը զգան արհաւիրքի պատճառած ցաւն ու կորուստի ահաւորութիւնը:

Մեր օրերուն հայութեան մօտ երկու երրորդը կ'ապրի հայկական պետական կառոյցի սահմաններէն դուրս: Կազմաւորուելով մշակութային տարբեր միջավայրերու մէջ՝ հայութիւնը այս ձևով կը կազմէ մշակութային գունագեղ խճանկար մը, որ ունի որոշ՝ առաւել կամ նուազ ցայտուն հասարակաց հայկական յատկանիշներ:

Իրերու այս վիճակը ունի, անշուշտ, իր մեծ անպատեհութիւնները՝ հայկական համայնքներու միջև աստիճանական մշակութային օտարում, իրաքանչիւր համայնքէն ներս հայկական յատկանիշներու աղաւաղում կամ տոգունացում, հայերէնի գիտութեան աստիճանի անկում և այլն: Բայց և այնպէս, օտարութեան մէջ, հակառակ ժամանակի գործած աւերին, բազմաթիւ սերունդներ կը շարունակեն պահել հայկականութիւնն ապահովող քանի մը հիմնական յատկանիշներ, որոնք, փաստօրէն, կապուած են անհատական, ընտանեկան և աւելի մեծ խմբաւորումի մը պատկանելիութեան առհասկան յիշողութեան: Անոնք բաւարար կը հանդիսանան յաճախ կրաւորական, բայց կարգ մը պարագաներու նաև՝ բացառիկ կերպով հայկականութեամբ տոգորուած գործունեայ անհատներու յայտնութեան: Ինքնին հասկնալի է, որ սփիւքեան համայնքները հայրենիքի դէպաններն են հիւրընկալ երկիրներէն ներս: Անոնք ճիգ չեն խնայեր հայկական պետութեան թիկունք ու յենարան հանդիսանալու հասարակական կեանքի հիմնական՝ քաղաքական,



տնտեսական, կրթական, նոյնիսկ ապահովական և այլ ոլորտներէ ներս:

Կը մնայ, որ հայութեան խայտաբղէտ աշխարհացրի համայնքներու միջև և անոնց իրաքանչիւրին հետ հայկական պետութեան կապերը ըլլան ծրագրուած, հետևողական, նպատակաւայաց և հետևաբար արդիւնաւետ: Անցողակի կերպով թող այստեղ նշուի, որ այս աշխատանքին համար Սփիուքի նախարարութեան նման բազմաճիղ հաստատութիւն մը յաջողութեան հասնելու համար աւելի յարմար գործիք է, քան յանձնակատարի մը յանձնուած և այլապէս բազմազբաղ վարչապետի մը ղեկավարութեան տակ գործող տերևաթափ գրասենեակ մը: Սփիուքով զբաղող կառոյցը չի կրնար ծայրահեղ խնայողութեան պայմաններով առաջնորդուիլ. եթէ հայրենիքը Սփիուքէն 2024-ի ներդրումներ պիտի ակնկալէ, պէտք է նաև ինքը այդ մարզէն ներս իր անհրաժեշտ բարոյական և նիւթական ներդրումները կատարէ:

Վերջիվերջոյ, կ'ենթադրեմ՝ Հայաստան-Սփիուք յարաբերութիւններու խորքային վախճանական նպատակը ժամանակի ընթացքին համայն հայութեան՝ մէկ ուժեղ բռունցքի վերածումն է, որ անպարտելի կը դարձնէ երկնքն ալ՝ խմբելով, համադրելով, փաղանգելով ողջ հայութեան այլազան առաւելութիւնները:

Համահայկական կազմակերպ հասարակութեան ստեղծումը հայկական բոլոր ուժերու, բայց յատկապէս ՀՀ բոլոր իշխանութիւններու տևական մտատանջութիւնը պէտք է դառնայ:

Կայ ներկայիս այդ ուղղութեամբ գործադրուող ճիգ: Աւելորդ է այդ մասին վիճիլը: Նպատակին

Հայաստան - Սփյուռք

հասնելու համար անհրաժեշտ է, առաջին հերթին, ներհայկական համերաշխություն: Կարծես թե տեղի կ'ունենայ ճիշդ հակառակը: Թաշաղայ նշանաբանով և սիրոյ խոստովանություններով ատի թան երկու տարի առաջ իշխանութեան հասած վարչախումբը հասարակութիւնը բաժնած է նորերու և նախկիններու, գործատէրերու և օլիգարխներու, մեղապարտ ու բարերար թալանչիներու, ատելութիւն սերմանող մեքենան առիթ չի փախցնէր ատենը անգամ մը բարձրացնելու ներքին լարուածութեան աստիճանը: Միւս կողմէ՝ քաղաքական ու դիւանագիտական ապիկարութիւնը զգալի հարուած հասցուցած է հայկական պետութեան միջազգային վարկին: Այս բոլորը կը պատահին թրքական և ազերիական սպառնալիքներու ուղեկցութեամբ, որոնք կրնան որևէ ատեն իրականանալ, ինչպէս պատահեցաւ Տաուշի սահմանին վրայ ընթացիկ տարուան յուլիսին, ինչպէս ցոյց տուաւ թուրք-ազրպէյճանական միացեալ երկարատև ռազմափորձերու կայացումը:

Բարերախտաբար, քաղաքական բեմն ու հասարակութիւնը տկարացնող քաղաքական բացարձակ պատակտումը տակաւին չէ ազդած հայկական բանակի բարձր բարոյականին վրայ: Ի դէպ, 1998էն մինչև 2018 երկարող ժամանակաշրջանին Դաշնակցութիւնը ճիգ չինայեց ՀՀ քաղաքական բեմին վրայ քաղաքական հոսանքներու միջև յարաբերութիւններու քաղաքակիրթ մշակոյթ զարգացնելու. այդ ճիգերը իրենց ատենին զգալիօրէն արդիւնաւորուեցան:

Ժամանակն է կրկին սթափելու, քանի դեռ ուշ չէ. ներկայ վիճակը բաւական վտանգաւոր է:

Յարատև ճիգով հայութիւնը պէտք

է օժտուի անխորտակելի միութեամբ: Համահայկականութիւնը, սակայն, զարդ չէ, որպէսզի սպառնի զայն միայն ազգային անվտանգութեան ռազմավարութեան մէջ իբրև ազգային արժէք նշելու և անցնելու. ան ազգային պետութեան լինելութիւնը ապահովելու և ամրապնդելու կոչուած հսկայական ծրագիր է, որ տակաւին պէտք է գիտական մեթոտաբանութեամբ մշակել և գործադրութեան մէջ դնել: Ատոր համար անհրաժեշտ է Սփյուռքի յանձնակատարի գրասենեակը այնքան ընդլայնել, որ գոնէ նախարարութեան մը չափն ու կարևորութիւնը ստանայ: Ամէնոր մեծ ու թեկուզ փոքր չափերով աշխարհասփիռ հայկական հաւաքականութիւնները ի մի բերելով, զանոնք իսկական ազգի վերածելով՝ հսկայական ուժի տէր կարելի է դառնալ:

Համահայկական կազմակերպ հասարակութեան կայացումը, անշուշտ, այլ՝ ատելի վերացական գաղափարի մը գործնականացման երեսներէն մէկն է, ան ազգային գաղափարախօսութեան դրսևորումներէն մէկն է, որ նկատի կ'առնէ հայութեան աշխարհագրական իրողական վիճակը: Առանց ազգային կամ այլ՝ վերացական գաղափարախօսութեան մը յենուելու՝ համահայկական հասարակութիւնը կը վերածուի լոկ տնտեսական գործարքի, որ, ըստ յաջողութեան աստիճանի, կ'ուռնանայ կամ կը փոքրանայ, բայց համեմատաբար կարճատև գոյութենէ մը ետք անպայման կը քայքայուի, մինչդեռ գաղափարական հիմքը երկարակեցութեան երաշխիք է, կատարուող գործողութիւններու ուղղութիւնն ու իրաւացիութիւնը ճշդողն ու հակակշռողն է, երկար



ժամանակի վրայ իրաքանչիւր առնուելիք քայլի տրամաբանութիւնը սահմանողն է:

Բնական է՝ հաւաքականութեան մը անդամները իրենց պատկանելիութիւնը զգալու համար պէտք է տէր ըլլան իրարու նմանող յատկանիշներու. անոնք պէտք է ունենան մշակութային հասարակաց դաստիարակութիւն, անոնց ներկան կապուած պէտք է ըլլայ նոյն անցեալին, ապագայի մասին անոնց պատկերացումը գետեղուած պէտք է ըլլայ նոյն գիծերուն մէջ, ինչքան ալ լայն ըլլայ այդ գիծերով սահմանուող միջոցը: Մէկ խօսքով՝ համահայկական հասարակութեան անդամները կարելիութիւնը պէտք է ունենան կազմաւորուելու նոյն կրթութեամբ ու դաստիարակութեամբ: Իր բացարձակութեան մէջ ասիկա համահայկական մասշտապի վրայ անկարելի է անշուշտ, բայց կարելի է ստեղծել կրթական ծրագիր, որ պարփակէ որոշ հիմնական մշակութային յատկանիշներ՝ մշակոյթի զանազան ոլորտներէն առնուած: Այսպէս՝ նմանութիւնները կը բնորոշեն հաւաքականութիւնը, իսկ աշխարհագրականօրէն պայմանաւորուած ազդեցութիւններէն բխող տարբերութիւնները հիմը կը կազմեն անոր ուժին: Ինչքան շատ ըլլան նմանութիւնները, այնքան ուժեղ կ'ըլլայ հաւաքականութեան յարակցութիւնը (cohesion), ինչքան շատ ըլլան տարբերութիւնները, այնքան երկար կ'ըլլայ համահայկական հասարակութեան ազդեցութեան ծիրը. ասկէ կը բխի աշխարհացրիւ հայութեան բազմակողմանի կարողականութիւնը:

Կասկածէ վեր է, որ ազգային գաղափարախօսութիւնը հիմնական դեր ունեցած է սփիւռքահայութեան հայապահպանման ճիգերը որոշ յաջողութեամբ պսակելու գործին մէջ. առանց այդ ճիգերուն՝ վիճակը շատ անելի ժխտական պիտի ըլլար, քան իրողապէս է ներկայիս: Երբ կը խօսինք համահայկական հասարակութեան մասին, ապա անոր մէջ հիմնական դերակատարութիւն վերապահուած է հայրենիքին, յատկապէս՝ անոր իշխանութիւններուն: Արդ վերջին շրջանին անոնց կողմէ հրապարակուած հայագիտական նիւթերու չափորոշիչները ազգային գաղափարախօսութենէն որոշ հեռաւորութիւն պահելու ձգտում մը ցոյց կու տան: Պէտք է յուսալ, որ հայ-թրքական ապագայ յարաբերութիւններու բարելաման միտող ծրագրուող կրթական բարեփոխումներու գործադրութիւնը կը յետաձգուի անելի յարմար ժամանակներու, երբ Թուրքիա առնուազն պաշտօնապէս ճանչցած ըլլայ իր գործած ոճիրը, այլապէս այս բարեփոխումները անպտուղ զիջումներ են, որոնք անելի ևս կը տկարացնեն հայկական կողմը: Առանց հայրենի իշխանութիւններու գործօն ու դրական մասնակցութեան՝ համահայկական հասարակութեան կազմաւորումը զայն ան-


իրականանալի դարձնելու չափ կը դժուարանայ:

Նոյն ծիրէն ներս՝ ներհայկական յարաբերութիւններու բարդութեան մէջ, կարևոր դեր կ'իյնայ լեզուին՝ հայերէնին: Լեզուն ինքը մեր պարագային իրայատուկ բարդութիւն մը կը ներկայացնէ արդէն. արևելահայերէն, թէ՛ արևմտահայերէն, Մեսրոպեան, թէ՛ Աբեղեանական ուղղագրութիւն, մասնակիօրէն ձգտում կայ նաև որդեգրելու «գործածական» հայերէն մը, որ ան անելի կը բարդացնէ կացութիւնը սփիւռքեան համայնքներէն ներս: Այս կացութեան մէջ ինչ կը նշանակէ արևմտահայերէն, որ ատենէ մը ի վեր ազգովին պաշտպանելու և պահպանելու ելած ենք, խօսքը դասական, գրական արևմտահայերէնի մասին է, թէ՛ իրաքանչիւր գաղութի մէջ առօրեայ ստեղծուող՝ համայնքին յատուկ խառնիճաղանճին: Լեզուն, ինքնութիւն սահմանող իր հանգամանքէն անկախ, նաև հաղորդակցութեան միջոց է, սփիւռքեան համայնքի մը այլ գաղութներու և հայրենիքին հետ հասկցուելու գործիք է, ինքնաճանաչման լուսագոյն բանալին է: Ասիկա չի նշանակեր, թէ հաղորդակցութեան այլ միջոցներու գործածութիւնը անտեղի պէտք է նկատել, բայց ամէնէն հասարակացն ու հարազատը, հարկաւ, հայերէնն է, որուն համատարած ուսուցման համար կարելիութիւնները պէտք է բազմապատկել: Ամէն մարդ գիտէ այլևս, որ հայկական դպրոցը անհրաժեշտ, բայց ոչ բաւարար միջոց է հայերէնի և մշակոյթի տարածման համար:

Մեր օրերուն Արևելեան Միջերկրականի հայկական գաղութները աղիտալի վիճակի մէջ են:

Հայկական պետութեան կայունութիւնը օրէ օր անելի խնդրոյ առարկայ կը դառնայ. ան կը պահուի շնորհիւ շատերու գիտակցութեան և անչափելի համբերութեան: Համահայկական համերաշխութեան վերահաստատման նախաձեռնութիւնը կը պատկանի ՀՀ իշխանութիւններուն, մասնաւանդ որ իրենք եղան զայն քանդողները: ■

Աթէնք, 16 օգոստոսի 2020



Հայացք 30 տարի անց

Հրայր Կարապետյան

ՀՀ արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար, մանկավարժական գիտությունների թեկնածու

Հայաստանում ՀՅԴ «վերընձյուղման» 30-ամյակի առթիվ այս հոդվածը գրելիս անդրադարձա, որ այդ տարիներին վերաբերող շատ ու շատ հիշողություններ են արթնանում և ավստու կլիներ դրանցից մի քանիսը չարձանագրել այսօր, երբ մանավանդ, ի տարբերություն ավելի հեռու անցյալի, ՀՅԴ վերջին շրջանի գործունեության մասին կամ շատ քիչ է գրվել, կամ եթե գրվել է, որոշ դեպքերում՝ խիստ կամայական մեկնաբանություններով: Իհարկե, ես նույնպես հավակնություն չունեմ ամբողջությամբ անդրադառնալու ՀՅԴ գործունեության վերջին 30-ամյա պատմությանը (կարծում եմ դա հետագայում մանրագնին կերպով կանեն պատմաբանները), սակայն որոշեցի, որքան հնարավոր է, հիշողությամբ վերարտադրել նրա որոշ, իմ կարծիքով՝ կարևոր դրվագները: Ինձ համար դժվար է որոշ իրադարձությունների ճշգրիտ ժամանակագրությունը տալ (1990-ականների սկզբներին բնակարանի խուզարկությունների առիթով, ցավոք, ոչնչացրել էի անձնական օրագիրս), սակայն վերհիշելու համար երբեմն օգնության եմ դիմել այն օրերի ականատեսներից ունանց, որոնցից շատերը դեռ պայքարի շարքերում են:

Ինչպես արդեն նշել էի, Գարդմանի 40-ից ավելի հայկական գյուղերի հայաթափումից հետո ազերիները, 1988 թվականից սկսած, թիրախավորել էին Հյուսիսային Արցախի մի շարք հայաբնակ գյուղեր, որոնցից հետո ավելի դյուրին կլինեին նույն իրականացնել Գետաշենի տարածաշրջանի, իսկ այնուհետև՝ Շահումյանի շրջանի գյուղերում:

1989 թվականի վերջին ետ մղվեց Ազատ և Կամո գյուղերի վրա հերթական հարձակումը: Ազերիների՝ մինչև ատամները զինված մի քանի հարյուր բաշխոգուկներին ղեկավարում էր Ադրբեջանի ազգային ճակատի ղեկավար Ալի Նադիրովը: Տեղացի հայերի ինքնապաշտպանական ջոկատներին, որոնք զինված էին միայն որսորդական հրացաններով, իրենց ինքնաշեն ականանետներով ու զենքերով օգնության էին եկել «Միացում»-ի մի խումբ տղաներ՝ Ռուբիկ Ավետիսյանի գլխավորությամբ: Տալով բազմաթիվ զոհեր և թողնելով մեծ քանակությամբ տեխնիկա՝ ազերիները, դիմադրությունից անակնկալի եկած, դիմեցին փախուստի: Մեր կողմից խլված ադրբեջանական դրոշը մի քանի օր անց Իզոր Մուրադյանը հանդիսավորությամբ նետեց Գերագույն խորհրդի նախագահի ոտքերի տակ: Անհաջողությունից կատաղած՝ 1990 թվականի հունվարի 16-ին ազերիները նախաձեռնեցին նոր՝ ավելի հզոր հարձակում նույն ուղղությամբ: Այս անգամ գրոհին մասնակցում էին նաև խորհրդային բանակից վարձկաններ՝ օգտագործելով նաև մարտական զրահատեխնիկա: Մեր հաշվումներով՝ շուրջ 16-17 հազար գրոհայիններին դիմագրավում էին մոտ 100-



Հանրության հեղինակի մամուլային հրայր Կարապետյանը կուսակցական ընկերների հետ

ի չափի հայ կամավորներ: Հայաստանից ժամանած տղաներին տեղացիներն ակնածանքով անվանում էին ֆեդայիներ, որոնց շարքում արդեն փորձառու ընկերների կողքին հատուկ ուզում եմ առանձնացնել Գավառի փոքրաթիվ ջոկատի հրամանատար Ռ-Ազմիկ Ամիրխանյանին՝ Բզո մականունով: Զրկված երկու ոտքից՝ նա անիմների վրա, ինքնաձիգը ձեռքին, աննախադեպ ոգևորության և հերոսության օրինակ էր բոլորի համար: Գիշերային մարտի ժամանակ տղաները մի զավեշտալի հնարքի դիմեցին. էլի վրա կապելով ինքնաշեն ականանետը և երկու մարտկոցով լուսավորելով՝ բաց թողեցին մարտադաշտ՝ ազերիների մեջ խուճապ առաջացնելով, թե հայերը լազերային զենք են կիրառում: Ի դեպ, ինքնաշեն ու անընդհատ կատարելագործվող ականանետներն ու ռումբերը պատրաստվել էին Երևանի Ջրվեժի գործարաններից մեկում՝ հավատավոր ընկեր Լավրենտի Հարությունյանի ջանքերով: Ցավոք, նա հետագայում զոհվեց ականանետի փորձարկումներից մեկի ժամանակ: Տալով բազմաթիվ զոհեր և թողնելով մեծ քանակությամբ զենք ու տեխնիկա՝ ազերիները նորից սահանջեցին՝ հետագայում իրենց խայտառակ պարտությունը բացատրելով, թե իբր ռուսներն են իրենց դավաճանել ու փախել... Ցավոք, մենք ունեցանք երկու զոհ և մի քանի վիրավորներ, որոնք ուղղաթիռով տեղափոխվեցին Երևան:

Այդ օրերին տեղի ունեցավ նաև մի աննախադեպ իրադարձություն. Գետաշենի տղաների մասնակցությամբ հատուկ գործողության շնորհիվ առևանգվեցին ադրբեջանական բարձրաստիճան մի քանի սպաներ և դատախազ, որոնք հետո փոխանակվեցին հունվարին Մարտունաշենում սպանված հայորդու թաղման ժամանակ դավադրաբար գերեվարված Շահումյանի շրջանի ղեկավարների հետ, որոնց թվում էին Շահեն Մեղրյանն ու Վոլոդյա Աղաջանյանը:

Խորհրդային իրավապահների օգնությամբ ձերբակալվեցին և Կիրովաբադի բանտում մեկ ամսից

ավելի պահվեցին Իգոր Մուրադյանը, «Գետաշեն» հայրենակցական միության նախագահ Բենիամին Միսյանը և ուրիշներ, որոնց նույնպես հաջողվեց ազերիների ձեռքից ազատել անասելի ջանքերի գնով: Գնալով վիճակը լարվում էր նաև Շահումյանում և Արցախում: Հայկական գյուղերի վրա ազերիների անընդհատ կրկնվող հարձակումների հետևում ակնհայտորեն երևում էր խորհրդային բանակի հակահայ գործելակերպը, որն էլ քաջալերվում էր խորհրդային իշխանությունների համապատասխան քաղաքականությամբ ու քարոզչությամբ: Որպես հետևանք՝ 1990 թվականի փետրվարին իշխանությունը Արցախում կենտրոնացվեց, այսպես կոչված, կազմկոմիտեի նախագահ Վ. Պոլյանիչկոյի ձեռքում, պարետ նշանակվեց հակահայ հայացքներով հայտնի Վ.Մաֆոնովը: Նրանց առջև խնդիր էր դրված Արցախում ոչնչացնելու հայ «էքստրեմիստ» անջատողականներին, հայաթափելու այն գյուղերը, որոնք կապում էին իրար մեծ բնակավայրերը (օր.՝ Կուշչի-Արմավիր գյուղը, որը կապում էր Գետաշենը Շահումյանի հետ, հայաթափվեց և բնակեցվեց ազերիներով): Խորհրդային պաշտպանության նախարար Յազովի հրամանով արգելվեցին ուղղաթիռների թռիչքները, որպեսզի իսպառ խզվի կապը Հայաստանի հետ. 1989 թվականի սկզբից ցամաքային ճանապարհը ամբողջությամբ փակ էր: Այնուամենայնիվ, աներևակայելի ջանքերի գնով, օգտագործելով «սանիտարական թռիչքներ» կոչված հնարավորությունը, հաջողվում էր որոշ խմբեր օգնության տեղափոխել Արցախ: Այստեղ պետք է նշել մեր հայ օդաչուների աննախադեպ հերոսությունը և հայաբնակ գյուղերի ղեկավարների գործուն օժանդակությունը: Երբեմն օրերով Գավառի կամ Երևանի «Էրեբունի» օդանավակայաններից թույլ չէին տալիս թռիչքները, իսկ երբ թռիչքը վերջապես թույլատրվում էր, վայրէջքի վայրում ուղևորներին մանրակրկիտ զննում էին խորհրդային զինվորները: Տղաների մեծ մասն ուներ նախօրոք պատրաստված տեղական գրանցման վկայականներ, կամ հանդես էին գալիս որպես գործուղված բժիշկներ...

1990 թվականի սկզբին Երևանի Մալաթիա թաղամասում ընկերներից մեկի տանը, հրավիրվեց ժողով, որին մասնակցում էին ՀՅԴ Բյուրոյի, Հայաստանում այդ ժամանակ գործող բյուրոյի գործիչներ (տե՛ս «Դրօշակ»-ի 2020 թ. 9-րդ համարում տպագրված սույն հոդվածի՝ 1-ին մասը) և Հայաստանում գործող կոմիտեների այն ներկայացուցիչները, որոնք չբացահայտված հանգամանքով, տարբեր անուններով էին գործում Հայաստանում: Օրակարգի հիմնական հարցն էր «Արցախում տիրող վիճակը և մեր անելիքները»: Նախքան ժողովը Բյուրոյի ներկայացուցիչ Հրայր Մարուխյանը, ուշադիր լսելով թարմ զեկույցս Հյուսիսային Արցախում կատարված դեպքերի մասին, խորհուրդ տվեց նույն զեկույցը ներկայացնելու ժողովում և առաջարկով հանդես գալու: Կարծում



Ուղղաթիռի սպասելիս

եմ, որ զինյալ ինքնապաշտպանության մասին ՀՅԴ Բյուրոն վաղուց ուներ որոշում. ըստ երևույթին, ընկ. Հրայրը ցանկանում էր, որ ժողովում առաջարկը հնչեր տեղի ընկերների կողմից: Այդպես էլ եղավ: Այդ ժողովում կայացվեց իմ կարծիքով պատմական մի որոշում, ըստ որի ՀՅԴ-ն բոլոր միջոցներով և իր ամբողջ ներուժով լծվում էր Արցախում ազգային-ազատագրական պայքարին: Իհարկե, մինչ այդ էլ շատ նորաթուխ դաշնակցականներ տարբեր կազմակերպությունների անվան տակ (տե՛ս հոդվածի՝ «Դրօշակ»-ի 2020 թ. 9-րդ համարում տպագրված 1-ին մասը) ակտիվ գործունեություն էին ծավալել թե՛մ կենտրոնում, ինչպես, օրինակ, Հյուսիսային Արցախում, Բերդաձորում (հավատավոր ընկեր Բերդաձորի Անդրանիկի գլխավորությամբ) և այլ վայրերում: Բուն Արցախում նույնպես ՀՅԴ գործիչների օգնությամբ ոչ բացահայտ արդեն գործում էր կազմակերպական կառույց, որի կայացման գործում մեծ դեր ունեին Արթուր Մկրտչյանը, Արկադի Կարապետյանը, Աշոտ Մարգարյանը, Ժաննա Գալստյանը, Աշոտ Ղուլյանը (Բեկոր) և այլք: Այդ գործունեությունը օրօրի ավելի մեծ թափ էր ստանում, դառնում ավելի կազմակերպված ու ազդեցիկ: Ստեղծվում էին նոր կազմակերպական միավորներ, զենքի ու տեխնիկայի հսկայական օժանդակությունը գնալով մեծանում էր, ու դրան զուգահեռ տարվում էր համապատասխան քաղաքական ու քարոզչական մեծ աշխատանք ժողովրդի պայքարի ոգին բարձրացնելու ուղղությամբ: Ընթացքի մեջ էր Դաշնակցության ուղեկից կառույցների ստեղծումը: Այդ օրերին կազմավորվեց Լեռնապարի պատասխանատու մարմինը (անվանումն առաջարկել է Հրանտ Մարգարյանը՝ ոգեկոչելով Վանի ինքնապաշտպանության ժամանակ գործող կուսակցական մարմնի անվանումը): Մարմնի կազմից նշանակվեցին տարբեր ուղղությունների պատասխանատուներ. Գետաշենի տարածաշրջանում Թաթուլ Կրպեյանը, Շահումյանում Շահեն Մեղրյանը, նշանակվեցին գործիչներ Շոթա Քերոբյանը և Մուրիկ Հարությունյանը: Պատասխանատուներ նշանակվեցին Վահան Հովհաննիսյանը և տողերիս հեղինակը: Ընդհանուր պատասխանատուն Հրանտ Մարգարյանն էր:

Այդ օրերին հսկայածավալ կազմակերպական աշխատանք էր տարվում Երևանում և Հայաստանի տարբեր շրջաններում շարքերը համալրելու ուղղությամբ: Կուսակցական խմբերը ձևավորվում էին ՀՅԴ կանոնագրի խստագույն պահպանմամբ: Նրանք, ովքեր պատրաստակամ էին մասնակցելու ինքնապաշտպանական գործին, Սփյուռքից ժամանած մի քանի փորձառու մարզիչների գլխավորությամբ շաբաթներով մարզվում էին, ծանոթանում զինվորական գործին և ունկնդրում դասախոսություններ՝ պատրաստվելով նաև գաղափարապես: Այդ նպատակով աչքից հեռու տարբեր վայրերում կազմակերպվում էին նաև բանակումներ: Կուսակցական գործունեության ընթացքում շատ առիթներ են եղել լինելու երդման արարողության կնքահայր, սակայն ամենից շատ տպավորվել է այն, թե ինչպիսի ոգևորությամբ և ավյունով էր Թաթուլ Կրպեյանը մի խումբ ուսանողների հետ Ծիծեռնակաբերդի անմար կրակի առջև կրկնում ՀՅԴ երդման տեքստը:

Կազմակերպական աշխատանքներն ընթանում էին խիստ գաղտնիության պայմաններում, ինչը, ինչպես ժամանակը ցույց տվեց, լիովին արդարացված էր: Հիշում եմ Թաթուլի դրան առնչվող մի զավեշտալի դեպք, երբ Հրանտի հետ միասին զրուցում էինք Թաթուլի երաշխավորած մի քանի տեղացի երիտասարդների հետ, ներկայացնում ՀՅԴ մոտեցումները, գաղափարներն ու սկզբունքները, որոնց հետ նրանք անառարկելիորեն համաձայն էին: Մի քանի հանդիպումներից հետո, երբ արդեն անդամագրության համար պետք էր երդում տալ, նրանցից մեկը, չբացատրելով, թե ինչու, հրաժարվեց երդվել: Հետագայում պարզվեց, որ նրա հետ օրեր առաջ այլ կուսակցական գործիչներ էին հանդիպել, և նա արդեն երդվյալ անդամ էր, ինչը նա չէր ուզում բացահայտել:

Խմբերում հաճախ ներգրավվում էին նաև զիտնականներ, մտավորականներ, ինչպես հետագայում Մարտունաշենում հերոսացած Միմոն Աչիկզոյանը (Դեդր): Տպավորվել է՝ այդ օրերին դաշնակցական գործիչ Վարանդ Փափազյանը (ցավոք նա հեռացավ կյանքից, երբ այս հոդվածն արդեն պատրաստ էր տպագրության) ինչպես էր պատկերավոր բացատրում խմբային վիճակի էությունը, երբ կարկատած շավարով բանվորը և նրա կողքին նստած զիտնականը խմբում ունեն նույն իրավունքներն ու պարտականությունները:

Ինքնապաշտպանության կազմակերպմանը զուգահեռ՝ կուսակցական միավորներ էին ստեղծվում Շահումյանում (Շահենին օգնում էին գործուղված գործիչները) և Գետաշենում (Թաթուլը 1990թ. սեպտեմբերից արդեն այնտեղ էր): Կարճ ժամանակում ծանոթանալով տեղանքի պայմաններին և իր ձեռքը վերցնելով ամբողջ ինքնապաշտպանության գործի կազմակերպումը՝ Թաթուլը տղաների հետ ազատ ժամերին օգնում էր գյուղացիներին հավաքելու ու

տեղավորելու բերքը, միաժամանակ պատմություն էր դասավանդում տեղի դպրոցում, երեխաներին սովորեցնում էր հայրենասիրական երգեր ու ազգային պարեր, վերանորոգում էր գյուղի եկեղեցին, հոգևոր հավատի շուրջ համախմբում մարդկանց՝ նրանց հաղորդելով լավագույն ապագայի ձգտելու ոգի, դժվարություններ հաղթահարելու կամք և փորձություններին դիմակայելու կորով: Թաթուլը ոչ միայն վայելում էր տեղացիների սերն ու հարգանքը, այլ նաև անառարկելի հեղինակություն էր բոլոր այն ջոկատների տղաների համար, որոնք արյան կանչով և գեների թելադրանքով պարբերաբար միանում էին ինքնապաշտպանությանը: Դրանցից էին «Արաբո» (հրամանատար՝ Մանվել Եղիազարյան), «Տիգրան Մեծ» (հրամանատար՝ Տիգրան Մարգարյան), Մալաթիայի (հրամանատար՝ Վահան Զատիկյան), ՀԱԲ (Ռազմիկ Վասիլյան, Արամ), Պողոսյանի, Աբովյանի, Մարտունու, Հրազդանի և այլ ջոկատներ, որոնք, իրենց մարտական մկրտությունը ստանալով այստեղ, հետագայում դարձան մեր ազգային բանակի հենասյուները, իսկ նրանք, ովքեր հերոսաբար զոհվեցին այս մարտերում, դարձան մեր նորակազմ բանակի զինվորների համար ներշնչանքի աղբյուր և հերոսության օրինակներ:

Մի քանի տողով անդրադառնանք այն օրերի քաղաքական իրավիճակին: 1989 թվականի վերջերին մի շարք կազմակերպությունների նախաձեռնությամբ (հիմնականում ՀՅԴ ազդեցության տակ գտնվող) կազմակերպվեց հասարակական հզոր շարժում՝ այն ժամանակվա Գերագույն խորհրդի կողմից Հայաստանի և Արցախի վերամիավորման մասին որոշում կայացնելու պահանջով: Նշված կազմակերպություններին միացել էին Հայաստանում գործող գրեթե բոլոր ուժերը (աջակցողների թվում էր նաև «Սահմանադրական իրավունք» միությունը՝ Հրանտ Խաչատրյանի և Հայկ Բաբուխանյանի ղեկավարությամբ): Նրանց վերամիավորման պահանջին չէին միացել միայն կոմունիստները և ՀՀԸ-ն, սակայն բազմամարդ հանրահավաքների և ժողովրդական ճնշման ազդեցությամբ նրանք էլ շուտով տեղի տվեցին, և Գերագույն խորհուրդը 1989 թվականի դեկտեմբերի 1-ին կայացրեց Հայաստանի և Արցախի վերամիավորման մասին պատմական որոշումը: Այդ որոշումը սեփական ուժերին ապավինած հայ ժողովրդի հավաքական կամքի արտահայտությունն էր (նախկինում խորհրդային իշխանություններին խնդրագրերով դիմելու փոխարեն), նրա պատմական իղձերի արտահայտությունը, որով սկիզբ դրվեց Հայ դատի՝ իր սեփական իրավունքների և արդար պահանջների համար պայքարի մի նոր հանգրվանի: ■

(շարունակելի)

ՀՅ Դաշնակցության օրը հաշուետուության եւ ուխտի վերանորոգման օր

Աւօ Գաթրճեան

«Նորութիւն է մեր կեանքի մէջ «Հ. Յ. Դաշնակցության Օր»ը, որ հաստատուեց 10րդ Ընդհանուր ժողովի կողմից և որ այսուհետև, ամէն տարի, Հոկտեմբեր ամիսին պէտք է տօնուի ամէն տեղ, ուր ապրում են դաշնակցական գաղափարները դաւանող հայ աշխատատրական գանգուածներ: Ամէն տարի դաշնակցական ընկերներն ու համակիրները պէտք է յատկացնեն մի օր՝ ապրելու համար Դաշնակցության աշխարհայեացքով և ապագայ գործունէության ծրագիրներով, ընդհանուր գործին նուիրելով իրենց մէկ օրուայ աշխատանքի արդիւնքը»:

«ԴԻՕՇԱԿ», «Հայ Յեղափոխական Դաշնակցության» օրգան, Դեկտեմբեր, 1925, N 6, էջ 186:

ՀՅ Դաշնակցության տասներորդ Ընդհանուր ժողովը, որ գումարուած է Փարիզ 1924 Նոյեմբեր 17էն մինչև 1925 յունուար 17, որոշեց այդ օրէն սկսեալ յիշատակել և տօնել «ՀՅԴ օր»ը, կամ «Մեր օր»ը: Առ այդ, 1925 թուականին, աշխարհի տարածքին իրաքանչիւր շրջան, ուր գոյութիւն ունի ՀՅԴ կազմակերպական կառոյց, սկիզբ կ'առնեն Դաշնակցության տօնակատարութիւններ և հանդիսութիւններ:

1925 թուականին Սիմոն Վրացեանի և Արշակ Զամալեանի խմբագրութեամբ վերահրատարակող «Իրօշակ»ի իրարայայտող թիւերուն մէջ լայն տեղ կը գտնեն Դաշնակցության օրուան նշումները:

Դաշնակցության օրուան յիշատակման առիթով կ'արժէ մէջբերել հոս «Իրօշակ»ի 1926ի թիւ 8-9-ի (օգոստոս-հոկտեմբեր)՝ Դաշնակցության օրուան յիշատակման երկրորդ տարուան առիթով «Արթուն և ամուր» խորագրուած յօդուածը, որուն առաջին հատուածը մեզի կը պատգամէ. «Հեռու սնամէջ ցուցամոլութենէ, այդ «Օր»ը կը յատկանշէ ինքնաճանաչման արտայայտութիւն մը, որ կազդուրիչ է ամէն կերպով: Ինչքան ալ կաղկանձեն «Հայոց պատմութեան» փերեզակները, կամ իսկապէս ոճրապարտ հոգիները, «Դաշնակցության օր»ը պիտի դառնայ նախատօնակը հաւատամքի մը, որ ամէն բանէ առաջ ինքն իր ուժին վստահելու, իր ճակատագիրը վարելու կորով ներշնչեց ստրկացած բազմութեան և ազգային գիտակցութեան առաջնորդեց բանաւոր հօտը»: Այնուհետև յօդուածը կ'աւարտի նշեալ խորագրի երկու բառերու յիշատակումով ու անոնց խորքի շեշտադրումով. ««Դաշնակցության օրը» եթէ հպարտութեան տարեդարձն է, միննոյն ատեն ազդարար մըն է բոլոր վեհերոտներուն և սկեպտիկներուն: Որովհետև, այսօրը այնքան յուսահատական չէ, որքան այն պահը, երբ «Ֆետայի»ն առանց փամփուշտի կը մնար լերան կատարը, իր աչքին առջև տեսնելով անզէն ժողովուրդին կոտորումը: Եւ վախճանը անլի հեռու



չէ, քան այն պահուն, երբ առաջին յեղափոխական խումբը կը կազմուէր տապալելու համար «Սուլթանին գահը»:

Արթուն՝ ինչպէս սահմանին վրայ կեցած պահակը, ամուր՝ ինչպէս Արարատը, մենք մեր ճամբան պիտի երթանք այն գիտակցութեամբ, թէ Դաշնակցության օրերը տօնի համար չեն, այլ քայլերգեր՝ «բախտաւոր օրերու» համար»:

ՀՅ Դաշնակցության պաշտօնական օրգանը, բնականաբար, արտայայտիչն ու պատգամաբերը կը հանդիսանայ այն միտքերուն և գործերուն, որոնք կը բնորոշեն ՀՅ Դաշնակցության անցեալի արձանագրութեան ու գնահատութեան և վաղուայ ընելիքներու ճշդորոշման:

Դաշնակցության օրը ամէն բանէ առաջ հաշուետուութեան և ուխտի վերանորոգման օր կը համարուի իրաքանչիւր դաշնակցականի համար և, բնականաբար, այդ իրականութեան առջև կը կանգնեցնէ մեզ: Միւս կողմէ լուսագոյն անդրադարձի օր է ունէ դաշնակցականի ու Դաշնակցության ուղեգիծի համակրողին համար:

Այս օրը պարտաւորութիւն է, որ կուսակցութիւնը ժողովուրդին հետ կիսէ իր մէկ տարուան գործունէութիւնը, նաև իր սպասումներն ու ակնկալիքները: Այդ օրը միասնաբար կը նայինք Դաշնակցության անցեալին և կը տեսնենք հիմնադրութեան օրերը՝ իրենց գաղափարական հզորութեամբ, ֆետայական կոիւնները՝ իրենց արիութեամբ, անկախութեան

Դաշնակցական բեմ

անհաասար պայքարը՝ իր դիանագիտական խիզախումներով, ինչպես նաև սփիռքեան բազմատեսակ մարտահրավերները: Հոն յառաջիկայ տարուան համար քաղաքական, ազգային, հասարակական, մշակութային, ինչպես նաև Հայ դատի, Հայաստան-Արցախ-Սփիռք եռամիասնական գործակցության ուղղություններ ու պատգամներ կը փոխանցուին: Թուրքիոյ և Ատրայեյճանի վատ դերակատարութեանց, անոնց ծաւալապաշտական և ապակայունացնող քաղաքականութեանց մասին որդեգրուելիք նոր կեցուածքներ կը դրսևորուին:

Այս օրը առիթ է երեք դարերու վրայ երկարող Դաշնակցութեան գործունէութեան հրապարակային ներկայացման՝ հեռու ինքնագովութենէ և յոխորտաբանութենէ, հարցերը մշուշապատ ներկայացնելէ: Այս օրը պէտք է ընկալել ոչ զգացական կերպով, այլ էական բարոյական, ոչ անիրապաշտական ու վիպապաշտական, այլ հիմնովին առարկայական, ոչ կարգախօսային ու բաղձանքային, այլ լրիւ գործնական ու ռազմավարական:

Մէկ խօսքով՝ յայտարարութիւններն ու գործը իրարու հակադիր պէտք չէ ըլլան:

Պատմութեան ընթացքին հայ ժողովուրդին ծոցէն ծնունդ առած ու անոր համար գործող կուսակցութիւնը կոչուած է ծառայելու ժողովուրդին, ըլլալու անոր հետ և անոր համար, և ինչպէս միշտ՝ պարկեշտօրէն ու վճռական կերպով ներկայացուցած է իր դժուարին ճամբան ու երբեմն անոր իրականացման նիւթական կարիքները, այդպէս ալ կ'ենթադրէ ներկայացնել չիրագործուած ու ձայնողած ծրագիրներէն քանի մը հատը անպայման:

Քաջ գիտակցելով և պատմութեան դիմաց կանգնած՝ կ'անդրադառնանք անցեալէն մեզ ժառանգուած պարտաւորութեան, կը ստիպուինք ստանձնելու այդ պարտաւորութիւնը և քալել դէպի ապագան՝ ըլլալով յեղափոխական, ազգային ու ընկերային արդարութիւն հետապնդող կուսակցութիւն, անցեալէն դասեր քաղելով՝ ապագայի ծրագիր մշակել:



Վերջապէս, վերոնշեալ պատմական տուեալները, Դաշնակցութեան էութիւնն ու գաղափարական ուժականութիւնը մեր մտապատկերին մէջ կը քանդակեն և կ'արմատաւորեն, թէ որքան դժուար է Դաշնակցութեան օրուան խորհուրդը ձևակերպել:

ՀՅԴ ի հօգօր նկարագիրն ու բարոյականութիւնը, անոր տասնամեակներու ժառանգը, մեզ կը մղեն յարատև պայքարի մարտունակութեան: Իրաւունք չունինք աղաւաղելու և տկարացնելու զայն: Այս կուսակցութիւնը թուլութիւն և տկարութիւն չի ճանչնար: Մեզմէ կը պահանջուի բարոյական բարձր գիտակցութեամբ և գաղափարական հզորութեամբ կրկնակի միտք ու գործ՝ հեռու ցուցամուրթենէ ու եսակեդրոնութենէ:

Դաշնակցութեան էութիւնը հասկնալով, մենք կը հիմնաւորենք օրուան խորհուրդն ու պատգամը, որ կը խտանան երեք հիմնական յատկանիշներու մէջ՝ ազգային-հայրենասիրական, յեղափոխական-ազատագրական և ընկերվարական-ժողովրդավարական, որոնք բնականաբար ամրագրուած են կուսակցութեան հաւատամքին մէջ՝ ծնունդէն ի վեր, եռախորհուրդ սիւներու վրայ՝ իբրև ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՄԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒՄԻՒՆ:



ՀՅԴ 10, 11 և 12-րդ Ընդհանուր ժողովները Կրեմլի են ունեցել Փարիզում, հաջորդաբար՝ 1924 - 25, 1929 և 1933 թթ.: 11-րդ Ընդհանուր ժողովի պարգամավորները

Լոզանի դաշնագիրը չփոխարինեց Սերի դաշնագիրը

Սեդո Պոյաճեան

Զուիցերիոյ Լոզան քաղաքին մէջ յուլիս 24 1923ին ստորագրուեցաւ Առաջին աշխարհամարտը եզրափակող խաղաղութեան վեցերորդ ու վերջին համաձայնագիրը: Լոզանի դաշնագրէն առաջ վերջնութեամբ համաձայնագիրը երեք տարի առաջ՝ օգոստոս 10 1920ին կնքուած Սերի դաշնագիրն էր, որ կը յաջորդէր խաղաղութեան չորս այլ համաձայնագրերու: Խաղաղութեան այս վեց դաշնագրերէն միայն վերջին երկուքը՝ Սերը և Լոզանը, կը վերաբերին Թուրքիոյ:

Գոյութիւն ունի այն թիւր տեսակէտը, թէ, յաջորդելով Սերի դաշնագրին, Լոզանի դաշնագիրը անվաւեր դարձուց և փոխարինեց առաջինը: Այս տեսակէտը մեկնակէտ ունի Սերի դաշնագրի անվաւեր մնալու և չգործադրուած ըլլալու հանգամանքները, մինչդեռ Լոզանի դաշնագիրը վաւերացուեցաւ ու ի գործ դրուեցաւ:

Ճիշդ է, Սերը գործնականացում չստացաւ, սակայն անոր ստորագիր պետութիւնները, ներառեալ Թուրքիան և Հայաստանը, ըստ միջազգային օրէնքի (դաշնագրերու մասին Վիեննայի 1969ի և 1978ի ուխտերը), պարտաւոր են ենթակայ մնալու իրենց ստորագրած դաշնագրի տրամադրութիւններուն՝ անկախ այն բանէ, սուտեալ դաշնագիրը գործադրութեան դրուած է, թէ ոչ: Վիեննայի նշեալ ուխտերու հիմամբ՝ Սերը «չկատարելագործուած դաշնագիր» է, սակայն ան կը մնայ վաւերականօրէն իրաւական փաստաթուղթ՝ ի գործու գայն ստորագրող պետութիւններուն համար:

Այսուհանդերձ, այս ուղղութեամբ առաջացած թիւր տեսակէտը կը շարունակէ յամենայն: Թուրքիա, բնականաբար, մեծագոյն պաշտպանն է այս տեսակէտին: Քաղաքական հաշիւներէ մեկնելով՝ այլ դիւանագիտական շրջանակներ, ներառեալ ամերիկեան ու ռուսական դիւանագիտական շրջանակները, տրամադիր կը մնան ընթացք տալու թրքական մեկնաբանութեան: Զարմանալին այն է, որ որոշ հայ քաղաքական շրջանակներ և պատմաբաններ ևս ընթացք կու տան Թուրքիոյ լոզանեան առասպելին:

Մի քանի շաբաթ առաջ արդարացնելու համար իր միջերկրականեան ու միջինարևելեան պատերազմախառն սպառնական քայլերը Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան յայտարարեց. «Մենք՝ իբրև ազգ, մէկ դար առաջ Սերը պատուած ու մէկդի նետուած ենք»:

Հայութեան քաղաքական առաջնորդներուն և իրաւաբաններուն ու պատմութեան մասնագէտներուն պարտաւորութիւնն է պատասխանել պրն. Էրտողանին և բացատրել օտար թէ հայ թերամիտներուն, թէ իրապէս պատուած և մէկդի նետուած է Սերի դաշնագիրը:

Միջազգային օրէնքի տրամադրութիւնները, իրաւական սկզբունքները և դիւանագիտական կանոնները կը հաստատեն, որ Սերը և Լոզանը իրարմէ տարբեր դաշնագրեր են: Այս երկու դաշնագրերը իրարու առնչակից չեն: Անոնք կ'ընդգրկեն իրարմէ տարբեր նիւթեր: Անոնց ստորագիր պետութիւնները նոյնը չեն և



նոյն նպատակները չունին:

Յատկապէս Հայկական հարցի պարագային Սերը ճշդեց ու սահմանեց Հայաստանի հողատարածքային ճակատագիրը, իսկ Լոզանը պարզապէս աննկատ անցաւ Սերով պայմանաւորուած հայապատկան հողատարածքներու հարցէն: Այս առնչութեամբ Սերի դաշնագրի թիւ 90 յօդուածի և Լոզանի դաշնագրի թիւ 16 յօդուածի տրամադրութիւնները կը յստակեցնեն, ըստ ձևի և ըստ էութեան, թէ Լոզանը առնչութիւն չունի և չի կրնար ունենալ Սերով ամրագրուած Հայաստանի հողատարածքային լուծումին:

Դաշնագրերու գծով միջազգային օրէնքի սովորութեանական սկզբունքները յետադարձ ուժ ունին: Այդ հանգամանքով անոնք մաս կը կազմեն դաշնագրերու մասին Վիեննայի 1959ի ուխտով հաստատուած օրէնքներուն: Ըստ այս օրէնքներու թիւ 40, 41 և 56 յօդուածներուն՝ դաշնագիր մը կարելի է փոփոխութեան ենթարկել, դադրեցնել կամ յետս կոչել այն ընթացակարգով, որ նախատեսուած է հենց տուեալ դաշնագրով:

Սերի և Լոզանի դաշնագրերը բազմակողմանի էին: Սերի դաշնագիրը դաշնակից ուժերու և Թուրքիոյ միջև խաղաղութեան պայմանագիր էր: Անոր ստորագիր 13 պետութիւններն էին՝ Բրիտանական կայսրութիւն, Ֆրանսա, Իտալիա, Պելճիքա, Յունաստան, Փորթուկալ, Լեհաստան, Ռումանիա, Չեխոսլովաքիա, Սերպ-հորուաթ-Սլովենիա, Ճապոն, Հայաստան և Թուրքիա: Միւս կողմէ՝ Լոզանի դաշնագիրը Յունաստանի և Թուրքիոյ միջև պատերազմի դադրեցման ու երկու երկիրներու միջև խաղաղութեան հաստատման համաձայնագիր էր: Անոր ստորագիր պետութիւնները թիով եօթն էին՝ Բրիտանական կայսրութիւն, Ֆրանսա, Իտալիա, Ռումանիա, Ճապոն, Յունաստան և Թուրքիա: Լոզանի դաշնագրի նախապատրաստութեան համար կայացած խորհրդածողովը, որ տևեց ինը ամիս, արձարծեց բացառաբար մերձատրարելեան և յունական հարցերը:

Վիեննայի ուխտի տրամադրութեանց հիմամբ՝ բազմակողմանի դաշնագիր մը փոփոխութեան ենթարկելը պէտք է կատարուի դաշնագրին

մասնակից բոլոր կողմերու համաձայնությամբ: Նոյն տրամաբանությամբ՝ բազմակողմանի դաշնագիր մը դադարեցնելը կամ պետութեան մը այդ դաշնագրէն հրաժարիլը պէտք է կատարուի դաշնագրի մասնակից բոլոր կողմերու համաձայնությամբ: Նոյն ձևով՝ դաշնագրի մը փոխարինման պարագային փոխարինող դաշնագիրը պէտք է մշակուի փոխարինող դաշնագրի ստորագիր բոլոր պետութիւններու համաձայնությամբ, ինչպէս նաև փոխարինող և փոխարինող դաշնագրերը պէտք է վերաբերին նոյն նիւթին ու նոյն նպատակին:

Սերի դաշնագրի ստորագիր 13 պետութիւնները ոչ մէկ ատեն համաձայնութիւն գոյացուցին, որպէսզի տոյն դաշնագիրը փոփոխութեան ենթարկեն կամ դադարեցնեն: Նոյն ձևով՝ Սերի դաշնագրի ստորագիր պետութիւններէն որևէ մէկը չհրաժարեցաւ տոյն դաշնագրէն:

Սերի դաշնագրի ստորագիր 13 պետութիւնները տոյն դաշնագիրը այլ դաշնագրով մը, այսինքն՝ Լօզանի դաշնագրով փոխարինելու միասնական համաձայնութիւն չգոյացուցին: Լօզանի և Սերի մասնակից և ստորագիր պետութիւնները հաւաքաբար առաջ նոյնը չէին: Միաժամանակ Սերի դաշնագրի նիւթն ու նպատակը Թուրքիոյ հետ խաղաղութեան հաստատումն էր: Մինչդեռ Լօզանի դաշնագրի նիւթն ու նպատակը Յունաստանի ու մերձադարեւելեան որոշ երկիրներու և Թուրքիոյ միջև խաղաղութեան հաստատումն էր: Եւ ոչ մէկ տեղ Լօզանը ակնարկութիւն կամ նշում կը կատարէ Սերի մասին:

Հետևաբար, դաշնագրերու վերաբերող միջազգային օրէնքով ճշդուած ընթացակարգի համաձայն, Լօզանի դաշնագիրը ոչ փոփոխումն էր, ոչ ջնջումն էր և ոչ ալ փոխարինումն էր Սերի դաշնագրին: Լօզանը առանձին իրաւական դաշնագիր մըն է, որ գործադրութեան դրուեցաւ, իսկ Սերինը առանձին իրաւական դաշնագիր մը է, որ կը մնայ գործադրելի:

Միջազգային օրէնքի վերոնշեալ բնորոշումներով և այս երկու դաշնագրերու ներկայացուցած հանգամանքներով Լօզանի դաշնագիրը ոչ մէկ իրաւական հետևանք ունի կամ կրնայ ունենալ Հայաստանին ու հայութեան համար:

Աւելին՝ Սերի դաշնագրի թիւ 90 յօդուածը ուիլսընտան իրաւարար վճիռի ճամբով իր վաւերականութիւնը և զօրութիւնը պահեց Լօզանի դաշնագրին վրայ, որու ստորագիր պետութիւնները կամայ թէ ակամայ հարկադրուեցան ընդունիլ և ներմուծել թիւ 16 յօդուածը Լօզանի դաշնագրին մէջ:

Սերի դաշնագրի թիւ 89 յօդուածը կը տրամադրէ ԱՄՆ նախագահ Ուորթո Ուիլսընի իրաւարարութեան յանձնել Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Պիթիսի նահանգներու մէջ Թուրքիոյ և Հայաստանի սահմանի որոշումը, Հայաստանի՝ դէպի ծով ելքի կարգադրումը և ճշդուած սահմանին յարող օսմանտան բոլոր տարածքներուն մէջ ապառազմականացման հարցը:

Յաջորդող թիւ 90 յօդուածը կը վերաբերի նոյն իրաւարար վճիռի: Յայտարարութեամբ Թուրքիա կը հրաժարի իրաւարարութեամբ Հայաստանին յանձնուած տարածքներու նկատմամբ «բոլոր իրաւունքներէն և իրաւահիմունքներէն»: Այս գծով 90րդ յօդուածը, ի միջի այլոց, կը տրամադրէ. «Այն ատեն, երբ, 89րդ յօդուածի համաձայն, կ'որոշուի սահմանագծումը

նշեալ վիլայէթներու ամբողջական թէ մասնակի հողատարածքներու յանձնումովը Հայաստանին, Թուրքիան, այդ որոշումի թուականէն սկսեալ, կը հրաժարի յանձնուած հողատարածքներու նկատմամբ բոլոր իրաւունքներէն և իրաւահիմունքներէն: Առ այդ, այս դաշնագրի տրամադրութիւնները ի զօրու կը դառնան Թուրքիայէն բաժնուած նշեալ հողատարածքներուն համար»:

Այս յօդուածին համաձայն՝ յստակօրէն ամրագրուած է. ա) Հայաստանին յանձնուած հողատարածքներ, Ուիլսընի որոշման պահէն սկսեալ, ինքնաբերաբար, առանց որևէ այլ պայմաններու կամ ապագայ քայլերու, կը պատկանին Հայաստանին: բ) Թուրքիա, Ուիլսընի որոշման պահէն սկսեալ, ինքնաբերաբար, առանց որևէ այլ պայմաններու կամ ապագայ քայլերու, կը հրաժարի Հայաստանին «յանձնուած հողատարածքներու նկատմամբ բոլոր իրաւունքներէն և իրավահիմունքներէն»:

Հակառակ անոր, որ Հայաստան մասնակից չէր Լօզանի դաշնագրին, Սերի թիւ 90 յօդուածը կը պահէր իր իրաւական լիազօրութիւնները՝ յենարան ունենալով նոյեմբեր 22 1920ին յայտարարուած ուիլսընտան իրաւարարութեան որոշումը:

Խորքին մէջ Լօզանի դաշնագիրը իր թիւ 16 յօդուածով հաստատեց Սերի դաշնագրով սահմանուած և ուիլսընտան իրաւարար վճիռով հաստատուած Հայաստանի սահմանները:

Լօզանի դաշնագրի նշեալ 16րդ յօդուածը կը տրամադրէ. «Այսու Թուրքիա կը հրաժարի բոլոր տեսակի իրաւունքներէ և իրաւահիմունքներէ նկատմամբ այն հողատարածքներէն, որոնք դուրս կ'իյնան ներկայ դաշնագրի գծած սահմաններէն... Այս յօդուածին տրամադրութիւնները չեն հակադրուիր բարիդրացիական յարաբերութիւններէն բխող այն յատուկ կարգադրութիւններուն, որոնք համաձայնուած են կամ կրնան համաձայնուիլ Թուրքիոյ և անոր որևէ սահմանակից երկիրներուն հետ»:

Այս յօդուածի լոյսին տակ փաստը այն է, որ Լօզանի դաշնագիրը ճշդեց Թուրքիոյ սահմանները Յունաստանի, Պոլկարիոյ, Սուրիոյ և Իրաքի հետ:

Հայաստանի հետ Թուրքիոյ սահմաններու ճշդումը որևէ ձևով տեղի չունեցաւ Լօզանի մէջ: Իրականութիւնը այն է, որ այս մասին կատարեալ լռութիւն կը պահէ Լօզանի դաշնագիրը: Բայց անոր 16րդ յօդուածը կու տայ բացատրութիւնը այս լռութեան: Երբ նշեալ յօդուածը կ'ակնարկէ «յատուկ կարգադրութիւններու», այս մէկը հաւանականօրէն կը վերաբերի ուիլսընտան իրաւարար վճիռին, որովհետև մինչև Լօզանի դաշնագրի ստորագրութիւնը, բացի Հայաստանէն, Թուրքիա որևէ այլ երկրի հետ նման «յատուկ կարգադրութիւն» չէր ստորագրած:


Առ այդ, Սերը, անվաւեր ըլլալով հանդերձ, կը մնայ գործադրելի դաշնագիր: Անոր իրաւական յենարանը Ուիլսընի իրաւարար վճիռն է, որ կը մնայ թէ իրաւական և թէ ի զօրու: Այս մասին՝ յաջորդիւ: ■

Ամուլսարի հանքավայրը չի կարող շահագործվել, երբ կան անկառավարելի ռիսկեր

Արեգ Ղարաբեգյան

ՀՅ Դաշնակցության շրջակա միջավայրի մասնագիտական ոլորտային հանձնախմբի տեսակետը

Ամուլսարի ոսկու հանքավայրը գտնվում է Հայաստանի Վայոց ձորի և Սյունիքի մարզերի սահմանագլխին՝ Զանգեզուրի լեռնաշղթայի հյուսիս, հյուսիսարևմտյան ճյուղավորումների ջրբաժանի հատվածում: 2014թ. ՀՀ կառավարության կողմից «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ին (այսուհետև՝ «Լիդիան») տրվել են Ամուլսարի ծրագրի ընդերքօգտագործման իրավունքը և շինարարության համար բնապահպանական թույլտվությունը: 2015թ. «Լիդիան»-ը հրապարակել է Ամուլսարի ծրագրի բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատականը, իսկ դրա թարմացված տարբերակը՝ 2016թ.: 2016թ. ապրիլի 29-ին Ամուլսարի ծրագրի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) փորձաքննությունը ստացել է դրական եզրակացություն:



Հանքավայրից մետաղների կորզումը նախատեսված է իրականացնել կույտային տարրավազման (heap leach) եղանակով, ինչն առաջին անգամ է կիրառվելու Հայաստանում: Ըստ «Լիդիան»-ի ներկայացրած ծրագրի՝ հանքի շահագործման 11 տարիների ընթացքում նախատեսվում է արդյունահանել մոտ 2.6 մլրդ ԱՄՆ դոլարի ոսկի: Առաջին երկու տարիների ընթացքում նախատեսվել է կատարել շուրջ 426 մլն ԱՄՆ դոլարի ներդրում: Հանքի շահագործման ողջ ընթացքում պետական բյուջե վճարվող հարկերի ու ռոյալթիների միջոցով ընդհանուր մուտքերը կկազմեն մոտ 635 մլն ԱՄՆ դոլար: Ծրագրի շինարարական փուլում մոտավորապես 1300 մարդ կապահովվի աշխատանքով, իսկ շահագործման փուլում՝ 770 մարդ:

Կանխատեսվում է, որ հանքի շահագործման

գումարային ազդեցությունը երկրի համախառն ներքին արդյունքում (ՀՆԱ – GDP) միջին հաշվով կկազմի մոտ 185 մլն ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ-ի 1.4%-ը: Ամուլսարի ոսկու հանքի ծրագրի կենսագործման արդյունքում տարեկան միջին արտահանումը կկազմի Հայաստանի արտահանման ընդհանուր ծավալի 6.5%-ը:

Ծրագրի վերաբերյալ տարակարծությունները

Թեև «Լիդիան»-ը պարտավորվել է կառուցել և շահագործել Ամուլսարի հանքը հանքարդյունաբերության լավագույն փորձին համապատասխան, որի ներքո նախագծել և կազմել է Հայաստանում նախադեպը չունեցող մետաղական հանքարդյունահանման ծրագիր, այնուամենայնիվ, մասնագիտական և հանրային (այդ թվում՝

բնապահպանական) շրջանակներում բացակայում է միակարծությունը հանքի շահագործման թույլատրելիության վերաբերյալ:



Չնայած այն հանգամանքին, որ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, բազմամետաղ հանքավայրի շահագործման թույլտվություն տալը երկարատև և բազմամակարդակ գործընթաց է, այնուամենայնիվ, ներկա պայմաններում սուր հարցադրումները վերաբերում են ծրագրի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությանը:

Թեև ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտավորություն չունենալու պայմաններում «Լիդիան»-ը նախաձեռնել է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում՝ միջազգային փորձագետների ներգրավմամբ, սակայն դա ևս հանքավայրի անվտանգ շահագործման նպատակահարմարության հարցում բավարար համոզվածություն չի ձևավորել: Դա պայմանավորված է մի կողմից այն հանգամանքով, որ ծրագրի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության հետազոտությունների, ուսումնասիրման ու գնահատման համար միջազգային փորձագետներն ընտրվել և վճարվել են «Լիդիան»-ի կողմից: Մյուս կողմից՝ ՀՀ կառավարությունը՝ ի դեմս Բնապահպանության նախարարության, չի ունեցել (և չունի) օրենսդրական պարտավորություն և ֆինանսական հնարավորություն՝ ներկայացված ՇՄԱԳ-ի անկախ միջազգային փորձաքննություն իրականացնելու համար: Որպես հետևանք՝ տեղական և միջազգային փորձագիտական որոշ շրջանակներ առարկում են հանքավայրի անվտանգ շահագործման վերաբերյալ «Լիդիան»-ի հավաստիացումներին:

Բնապահպանական միավորումները, ներգրավելով հասարակության առավել լայն շրջանակների, կազմակերպեցին Ամուլսարի ճանապարհների շրջափակումը, որի հետևանքով խնդրի բնապահպանական ու տնտեսական բաղադրիչներին ավելացավ նաև քաղաքականը:

Անկախ փորձաքննություն

Թեև ՀՀ կառավարությունն իր ծրագրով հանքարդյունաբերության ոլորտում ստանձնել է պարտավորություն՝ հավասարակշռելու տնտեսական, սոցիալական և բնապահպանական կայունությունը, սակայն Ամուլսարի վերաբերյալ նրա քաղաքականությունը ձևավորել է անորոշության մթնոլորտ:

Հենվելով ծրագրի վերաբերյալ տարակարծությունների վրա, չտիրապետելով հարցի էությանը, ձևավորելով հանրային մեծ սպասելիքներ՝ օրվա քաղաքական իշխանությունը անբացատրելիորեն երկարացրեց հարցի հանգուցալուծումը՝ խուսափելով պատասխանատվությունից, ինչի հետևանքով հանրության շրջանում ձևավորվեց անկառավարելի իրավիճակի հանգեցնող խոր առճակատում: Կոռուպցիոն հնարավոր չարաշահումների պատճառաբանությամբ նախաձեռնվեց քրեական գործի հարուցում, և միջազգային կազմակերպությունների միջոցով («ELARD» և «TRC», այսուհետև՝ «ԷԼԱՐԴ») անկախ փորձաքննություն իրականացնելու նպատակով պետական բյուջեից հատկացվեց 400 000 ԱՄՆ դոլար: Որպես արդյունք՝ հանքավայրի շահագործմանն առնչվող հարցերում շահագրգիռ կողմերն այդպես էլ չձևավորեցին միակարծություն:

Այս ամենը, սակայն, չի կարող շարունակական լինել. գերակտիվացված քաղաքական բաղադրիչն իր տեղը պետք է զիջի կշռադատված, մասնագիտորեն հիմնավորված և հասարակության ճշող մեծամասնության կողմից ընդունելի որոշմանը: Նշված ընթացքն ապահովելու համար անհրաժեշտ է հստակեցնել մասնագիտական մոտեցումները, ամբողջացնել տնտեսական, բնապահպանական և սոցիալական հավասարակշռված տեսակետները: Հարցը վճռահատելու համար ՀՀ կառավարությունը պետք է ստանձնի պատասխանատվություն:

Ծրագրի վերաբերյալ մասնագիտական մտահոգությունները

Վերը նշվածի ներքո սկզբունքային նշանակություն են ստանում տեղական ու համաշխարհային ճանաչում ունեցող մասնագետների կողմից բարձրացված հարցադրումները, որոնք ընդհանուր առմամբ իրենց արտացոլումն են գտել փաստաթղթային հաշվեքննություն իրականացրած «ԷԼԱՐԴ»-ի ամփոփիչ զեկույցում:

ՀՅԴ շրջակա միջավայրի մասնագիտական ոլորտային հանձնախումբը, ուսումնասիրելով և վերլուծելով «ԷԼԱՐԴ»-ի զեկույցը, արձանագրում է, որ այն անդրադառնում է չորս ոլորտների՝

1. կենսաբազմազանություն,
2. օդի որակ,
3. ջրային պաշարներ,
4. երկրաբանություն:

Կենսաբազմազանություն

Զեկույցում նշվում է, որ «Լիդիան»-ը բավարար չափով ներկայացրել է կենսաբազմազանությանը վերաբերող հարցեր, բայց դրանք կարող էին էլ ավելի ամբողջացվել, եթե ներառվեին լրացուցիչ տեղեկություններ, քարտեզներ և այլն:

Օդի որակ

«ԷԼԱՐԴ»-ը քննադատում է օդի որակի գնահատման համար «Ռադուգա» (Raduga) մոդելի կիրառումը: Նա եզրակացնում է, որ այս հին մոդելը համարժեք չէ Ամուլսարի ծրագրի նման նախագծերին: Զեկույցում նաև բացահայտվում են ոսկու հանքի շահագործման ժամանակ արտանետվող փոշու մանր մասնիկների և որոշակի գազերի ազդեցության գնահատման որոշ թերություններ: Այնուամենայնիվ, «ԷԼԱՐԴ»-ը եզրակացնում է, որ «Լիդիան»-ի կողմից օդի որակի վերահսկողության համար ներկայացված մոնիթորինգի պլանը տեղին է և ընդունելի, բայց պետք է ներառել որոշակի լրացուցիչ գործոններ:

Ջրային պաշարներ և երկրաբանություն

Ի տարբերություն վերը նշվածի՝ խստորեն քննադատվում է ջրային պաշարների և երկրաբանական ազդեցության վերլուծությունը, որի բացասական արդյունքները ոչ ամբողջությամբ են տեղ գտել ԷԼԱՐԴ-ի կողմից ներկայացված ամփոփիչ գրության մեջ՝ ապակողմնորոշելով վերջանական եզրահանգումը:

Ըստ զեկույցի՝ «Լիդիան»-ի պատրաստած «3-D» երկրաբանական մոդելի լայնակի հատույթները ցույց



են տալիս երկրաբանական հարաբերությունները միայն բացահանքերի տարածքների անմիջական հարևանությամբ: Այս թերությունը ստորերկրյա ջրերի աղտոտիչ աղբյուրների և կլանիչների միջև թույլ կապի հետևանք է: Էկոլոգիապես զգայուն այսպիսի միջավայրի համար կառուցվածքային և ստրատեգրաֆիկ հարաբերությունների վերաբերյալ պատկերազարդումների բացթողումը ամբողջ տարածքի համար գնահատվում է որպես մոդելի լուրջ թերություն: Երկրաբանական այս մոդելն իր հերթին հիմք է հանդիսանում այլ մոդելների համար, որոնք թվայնացված ներկայացնում են ստորերկրյա ջրերի և աղտոտիչների հոսքը (տրանսպորտը):

Ծրագրի տարածքում կան մի շարք երկրաբանական բեկվածքներ, որոնք կարող են լինել ստորգետնյա ջրերի հոսքի խոչընդոտներ և/կամ ուղիներ: Ըստ «ԷԼԱՐԴ»-ի՝ նախագծի ազդեցության տարածքում առկա բեկվածքները չեն դիտարկվում «Լիդիան»-ի կողմից երկրաբանական հետևանքների մոդելավորման մեջ: Ավելին՝ «ԷԼԱՐԴ»-ը պնդում է, որ հրաբխային ժայռերը փխրուն են, օժտված կոտրվածքների լայն թափանցելիությամբ: Այս բնութագրերն ազդում են ստորերկրյա ջրերի հոսքի ծավալի և փոխադրման արագության վրա: Չի կարելի ենթադրել, որ ժայռերը համասեռ կավե գոտի են, առանց կոտրվածքների, ինչպես դա անում է «Լիդիան»-ը:

Ստորերկրյա ջրերի հոսքի և ջրալույծ նյութերի փոխադրման ճիշտ թվային մոդելավորումը բացահանքերից և ծրագրի տարածքից դեպի ընդունիչներ (գետեր և աղբյուրներ) կախված է ժայռի կառուցվածքից և բնութագրերից՝ հոսքի և փոխադրման ուղիների ամբողջ երկայնքով: Զեկույցը եզրակացնում է, որ սխալ է պնդել, թե հանքը չի կարող ազդել նախագծի տեղամասերի հարակից շրջանների (ներառյալ քաղցրահամ աղբյուրները) վրա:

«ԷԼԱՐԴ»-ը շեշտում է, որ փոփոխված «Սոբեկ» (Modified Sobek) մեթոդը, որն օգտագործվել է նախագծի թթվային բազայի հաշվառման (ABA) համար (որոշում է հավանական թթվայնությունը), հիմնված է միայն սուլֆիդային ծծմբի վրա: Մինչդեռ այս մոտեցումը ակնհայտորեն սխալ է, քանի որ բացահանքերի տարածքներից գրեթե բոլոր նմուշները ունեն թթվային pH արժեքներ, ինչը վկայում է թթվային սուլֆատային աղերի առկայության մասին: «ԷԼԱՐԴ»-ը գտնում է, որ սուլֆատի վերլուծված տոկոսը պետք է ներառված լիներ թթվայնության հավանական հաշվարկի մեջ:

Թեև ՇՄԱԳ-ում նշվում է, որ հրաբխային ժայռի վերին շերտը թթու չի առաջացնում, սակայն «ԷԼԱՐԴ»-ը նշում է, որ ՇՄԱԳ-ի հավելվածում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ առկա են պիրիտ ծծմբով հարուստ բազմաթիվ նմուշներ: Սուլֆիդի ավելի բարձր տոկոսները տալիս են ավելի շատ ապացույցներ այն մասին, որ վերին հրաբխային շերտը համասեռ չէ և պետք է բաժանվի ենթախմբի՝ ըստ ժայռերի հստակ ենթատեսակների:

Ըստ «ԷԼԱՐԴ»-ի՝ «Լիդիան»-ի Անուլսարի ժայռերում թթվային ապարների դրենաժի (ARD) հա- կազդեցությունների գնահատումը ապակողմնորո- շիչ է, քանի որ վերլուծությունը չի ներառում երկաթի օքսիդացման կարևորությունը: Օգտագործելով այս մոտեցումը՝ թերագնահատվում են թթվային ապարների դրենաժոյացումը և հարակից ջրերի որակի, շրջակա միջավայրի վրա ազդեցության, ինչպես նաև ջրի մաքրման պահանջների կարևորությունը:

«ԷԼԱՐԴ»-ը նշում է, որ «Լիդիան»-ի կողմից պոմպային թեստի ոչ մի փորձարկում չի իրականացվել, ինչը լուրջ բացթողում է նախագծի մերձակայքում հիդրավլիկ հատկությունների բնութագրման գործում: Պոմպային թեստը հիդրավլիկ բնութագրման ընթացակարգ է, որը կիրառվում է ճեղքվածքներով ժայռերի ճշգրիտ ուսումնասիրության համար: Հաշվի առնելով էկոլոգիապես զգայուն կարգավորումը, հիդրավլիկ փորձերի սահմանափակ բաշխումը և պոմպային թեստերի բացակայությունը՝ «ԷԼԱՐԴ»-ն անբավարար է գնահատում դրանք՝ ստորերկրյա ջրերի ուսումնասիրության տարածքում հիդրավլիկ հատկությունները բնութագրելու համար: Ըստ այդմ՝ «ԷԼԱՐԴ»-ը եզրակացնում է, որ հանքավայրի ջրհանքերից մինչև գետերն ու ջրամբարները ընկած տարածքները նկարագրված չեն, և չի կարելի ենթադրել, որ դրանք նույն հիդրավլիկ հատկություններն ունեն, ինչ փորձարկված տարածքները:

Ըստ «ԷԼԱՐԴ»-ի՝ կտրտված քարերի առկայության պայմաններում աղտոտված ստորերկրյա ջրերի հոսքն արագ է, հետևաբար տեղափոխվող աղտոտված ջրի ծավալն ավելի մեծ է: Կտրվածքների ու ճեղքվածքների միացման չափը որոշում է, թե ինչպես է տեղի ունենում ստորգետնյա ջրի արագ հոսքը և տեղափոխումը: Միայն պոմպային թեստերի և ստորգետնյա ջրերի հետքերով, ինչպես նաև փորձարկումների անցկացման միջոցով կարելի է գնահատել կտրվածքների կապը, ինչը «Լիդիան»-ի կողմից արված չէ:

Վերանայելով «Լիդիան»-ի իրականացրած բացահանքերի ներծծվող ջրերի ուսումնասիրությունը, ընդունելով, որ օգտագործված մոդելները ճիշտ են, «ԷԼԱՐԴ»-ն արձանագրել է, որ մոդելների արդյունքները սխալ են, քանի որ մոդելավորման համար ենթադրվում է անիրատեսական մեծ քանակությամբ գոլորշացում բաց ժայռերից և ետին լցնումներից: Այլ խոսքով՝ «Լիդիան»-ը պնդում է, որ անձրևի ու ձնհալի ջրերի մեծ մասը գոլորշանալու է և հողի մեջ չի ներծծվելու, մինչդեռ հայտնի է, որ տեղումների և ձնհալի ջրերի մեծ մասը ծակոտիներով արագորեն ներծծվում է հողի մեջ: Բացի այդ՝ «ԷԼԱՐԴ»-ը համոզված պնդում է, որ «Լիդիան»-ը օգտագործում է բացահանքերի պատերի համար ջրի հոսքի ոչ ճիշտ գործակիցներ: Վերջիններս կարևոր են, քանի որ, «Լիդիան»-ի պնդմամբ, ավելի քիչ ջուր է անցնելու հողի մեջ: «ԷԼԱՐԴ»-ը ենթադրում

է, որ ձևացումներում (simulation) շատ ավելի քիչ գոլորշացում պետք է տեղի ունենա, և պնդում է, որ բացահանքերի հոսքի մոդելավորումներում ջրի հոսքերը ճիշտ չեն հաշվարկված: Ստորերկրյա ջրերի հոսքի տարածաշրջանային մոդելում այդ սխալ հոսքերի օգտագործումը հանգեցնում է ստորերկրյա ջրերի մակարդակների և աղբյուրների ազդեցության սխալ գնահատման: **Բացի այդ՝ լուծվող նյութերի փոխադրման ձևացումները խիստ թերագնահատում են թթվային դրենաժի ազդեցությունը ստորերկրյա ջրերի և աղբյուրների վրա:** Առ այդ, գոլորշացումը գերագնահատելու և ջրի հոսքը թերագնահատելու պատճառով «ԷԼԱՐԴ»-ի եզրահանգումն է՝ պասիվ մաքրման համակարգին հաղորդվող ջուրը և զանգվածային հոսքերը թերագնահատված են, իսկ մաքուր ջրի պահանջարկը՝ գերագնահատված:

«ԷԼԱՐԴ»-ը նշում է, որ հաշվարկված ջրի հոսքերը, որոնք հոսում են դատարկ ապարների լցակույտի (BRSF) կայանից, մեծապես թերագնահատված են սխալ մոդելի պարամետրացման պատճառով: Թերագնահատված ջրի հոսքերի պատճառով թերագնահատված են նաև զանգվածային հոսքերը, որոնք կապված են թթվայնացնող ժայռերի և ներծծվող ջրի շփման հետ: Այս թերագնահատումը բացասաբար է ազդում ընդհանուր ջրի հոսքերի հաշվարկների վրա, որոնք առաջանում են թթվային դրենաժի աղբյուրներից և դատարկ ապարների լցակույտի տակից:

Ըստ «ԷԼԱՐԴ»-ի՝ բացահանքերի տարածքներում երկրաբանությունը վատ է ներկայացված: Ստորին շերտի մակերեսի պարզունակ թվային ներկայացումը գործող մոդելում անբավարար է քանակական կանխատեսումներ անելու համար: Չնայած այս անբավարարությանը՝ արվել են բազմաթիվ քանակական կանխատեսումներ, որոնք հուսալի չեն: «ԷԼԱՐԴ»-ը պնդում է, որ անցումային ձևացումներն իրականացվել բացահանքերի ներհոսքերը գնահատելու համար, բայց մոդելային կանխատեսումը անբավարար է, քանի որ անցումային տրամաչափում չի իրականացվել: «ԷԼԱՐԴ»-ը իր կողմից իրականացված մոդելային վերանայման հիման վրա գտնում է, որ մոդելը թերի է նկարագրում հանքարդյունաբերության ազդեցությունը ստորեր- կրյա ջրերի մակարդակի և հոսքի վրա:

ՇՄԱԳ-ում նշվում է, որ նախագծի տարածքում ջրհորերի ջրհավաքագրերը ցույց են տալիս, որ ձնհալի շտրիիվ գարնանը ստորերկրյա ջրերի մակարդակը արագորեն բարձրանում է և արագ իջնում ձնհալի ավարտից հետո: «ԷԼԱՐԴ»-ը այս տվյալներից եզրակացնում է, որ ժայռերի կտրվածքների միջև կա հստակ կապ: Հետևաբար ստորերկրյա ջրերի մակարդակում «Լիդիան»-ի կանխատեսած փոփոխություններն իրատեսական չեն, քանի որ աղտոտված ջուրը շատ ավելի արագ է անցնելու ստորգետնյա տարածք: Պետք է նկատել,

որ Անուլսարի ժայռերը, ըստ էության, չունեն pH բուֆերային հզորություն, ինչը նշանակում է, որ ջրի թթվայնությունը չի կարող նվազել, երբ ջուրն անցնում է ստորգետնյա տարածքներով:

Մակերեսային և ստորերկրյա ջրերը փոխկապակցված են: Ըստ «ԷԼԱՐԴ»-ի՝ «Լիդիան»-ի ենթադրությունը, որ ծրագրի գործադրման ամբողջ տարածքում ջրաթափանցելիության մակարդակը համահավասար է, չափազանց պարզունակ մոտեցում է, որը հանգեցնում է ստորերկրյա ջրաթափանցելիության հատկությունների վատ մոդելավորման և մակերեսային ու ստորերկրյա ջրերի վերաբերյալ ոչ արժանահավատ եզրակացությունների: Բացահանքի մոդելավորման մեջ զգալիորեն թերագնահատված են մակերեսային և ստորերկրյա ջրերի հոսքն ու ներթափանցելիությունը: «ԷԼԱՐԴ»-ը եզրափակում է, որ **բացահանքերի ջրազրկման ճիշտ չգնահատման հետևանքով թերագնահատվում են ստորերկրյա և մակերեսային ջրերի վրա հավանական ազդեցությունները:** Լուծույթների փոխադրման համար օգտագործվող նախնական (screening) մակարդակի աղյուսակային (վերլուծական) մոդելի կիրառումը համարժեք չէ ծրագրի տարածքի շրջակա միջավայրին, մասշտաբին և բարդություններին:

«ԷԼԱՐԴ»-ը նշում է, որ կեղտաջրերում եղած ամոնիակի խտացումը, ամենայն հավանականությամբ, գերազանցում է արտանետման չափանիշը, բայց ամոնիակի մաքրման գործընթացը «Լիդիան»-ը չի քննարկում, բացառությամբ հակիրճ մեկնաբանությունների: Նիտրատների հարցը քննարկվում է փոքր-ինչավելի մանրամասն, սակայն այն անհրաժեշտ ուշադրության չի արժանացել: Հետևաբար նիտրատների կոնցենտրացիաները նույնպես թերագնահատվել են: Նիտրատը և ամոնիակը հավանաբար ջրի հիմնական աղտոտիչներն են, որոնք մաքրում են պահանջում: Նախագծված համակարգը կարող է չբավարարել նիտրատի կամ ամոնիակի մաքրման պահանջները: Ըստ «ԷԼԱՐԴ»-ի՝ «Լիդիան»-ի առաջարկված պասիվ մաքրման համակարգն առավել նպատակահարմար է փակման փուլերի համար, մինչդեռ ակտիվ մաքրման համակարգը՝ գործառնական փուլերի:

«ԷԼԱՐԴ»-ի վերանայման արդյունքները ցույց են տվել, որ «Լիդիան»-ի վերլուծությունը չի ներառում թթվային դրենաժին բնորոշ երկաթի և ալյումինի խտացումը: Ավելին՝ թիվ 8 ջրհավաք լճում կանխատեսվող երկաթի խտացումները թերագնահատվում են մեկ միլիոն անգամ: Երկաթի խտացումների անհամապատասխանությունն ու բարձր անորոշությունը վստահություն չեն ներշնչում մոդելում ջրի որակի նկատմամբ և մտահոգություն են առաջացնում այլ ցուցանիշների որոշակիության և հուսալիության շուրջ: Ջրի որակի մոդելավորումն ունի էական անհամապատասխանություններ և անորոշություններ, որոնք լուրջ մտահոգություններ

են առաջացնում ջրի որակի կանխատեսումների հուսալիության և ի վերջո՝ առաջարկվող պասիվ մաքրման համակարգի գործադրելիության ու արդյունավետության շուրջ:

«ԷԼԱՐԴ»-ը չի կարողացել պարզել, թե կույտային տարրավազման գործողության ավարտին ինչ է լինելու մեծ քանակությամբ ցիանիդ պարունակող օգտագործված կույտային տարրավազման լուծույթի հետ: Զեկույցից պարզ չէ, թե ինչ է լինելու կույտային լուծույթի հետ հանքարդյունաբերական աշխատանքների դադարեցումից անմիջապես հետո:

Անուլսարի հանքի փակման ծախսերի հիմքերը և գնահատականները վերանայվել են «ԷԼԱՐԴ»-ի կողմից, և եզրակացվել է, որ **որոշ ծախսեր կասկածելի են, իսկ ընդհանուր գումարը կրկնակի թերագնահատված է:**

«ԷԼԱՐԴ»-ի եզրակացությունն այն է, որ նախագծի ուսումնասիրության տարածքի երկրաբանության ելակետային բնութագրումը անբավարար է, իսկ շրջանի երկրաբանության մեկնաբանումը և հայեցակարգացումը՝ չափազանց պարզունակ: Բացի այդ՝ բացահանքերի ջրի արտահոսքի ենթամոդելը ճիշտ չէ: **Հիմնական խնդիրը «Լիդիան»-ի կողմից չափազանց շատ գոլորշացման ենթադրությունն է:** Ստորերկրյա ջրերի հոսքի տարածաշրջանային մոդելում այդ հոսքերի օգտագործումը հանգեցնում է ստորերկրյա ջրերի մակարդակների և աղբյուրների ազդեցության ոչ ճիշտ գնահատման:

Սևանին առնչվող վնասի հավանականությունը

Անդրադառնալով Ռոտանի թունելին՝ «ԷԼԱՐԴ»-ը նախ արձանագրում է, որ ստորգետնյա ջրերի ուսումնասիրության տարածքում առավել նշանակալից կառույցը Ռոտանի թունելն է, որը բետոնապատ կառույց է և անցնում է «Սպանդարյան» ջրամբարից դեպի Կեչուտի ջրամբար: «Սպանդարյան» ջրամբարի թունելի մուտքն այս պահին փակ է, բայց Կեչուտի ջրամբարում թունելի ելքից, ջուր է հոսում, ինչը վկայում է, որ ստորերկրյա ջրեր են մտնում թունել: Սևանա լիճը և Կեչուտի ջրամբարը կապված են Արփա-Սևան թունելով, որով Կեչուտի ջրամբարից ջուրն ուղղվում է դեպի Սևանա լիճ: Ռոտանի թունելի արտահոսող ջրի նմուշները ցույց են տալիս, որ դրանք նույն կազմությունն ունեն, ինչ Անուլսարի լեռնաշղթայի աղբյուրներն ու ստորգետնյա ջրերը: «Լիդիան»-ի հաշվետվություններում ասվում է, որ Ռոտանի թունելը հատում է ստորերկրյա ջրի ավազանը իր երկարությամբ:

Ներկայումս լեռների մակերեսն օբսիդացված է, և սուլֆիդների ու այլ նյութերի միայն փոքր մասն է հասնում թունել անձրևից կամ ձնհալից առաջացած ջրի միջոցով: Բայց բացահանքերի փորելուց պեսսուլֆիդներն ու այլ ծանր մետաղներ կբացվեն, և դրանք անձրևի ու ձնհալի ջրի հետ կներծծվեն հողի մեջ: Բացի այդ՝ այս բացահանքերի ստորին

մասը կհասնի ստորգետնյա ջրային ավազանին: Հետևաբար սուլֆիդներն ու այլ ծանր մետաղներ հեշտությամբ կթափանցեն ստորգետնյա ջրային ավազան, և այնտեղից աղտոտված ջուրը կհոսի դեպի Որոտանի թունելը, որը նույնպես տեղակայված է նույն ստորգետնյա ջրային ավազանում: «Լիդիան»-ը պնդում է, որ աղտոտված ջրի՝ թունել հասնելու համար 130 տարի կպահանջվի: Այնուամենայնիվ, այս պնդումը հիմնավորված չէ, և դրա համար հիմքեր չկան: Ավելին՝ փորձերի արդյունքները ցույց են տալիս, որ հորդառատ անձրևից հետո լեռան հիմքում որոշ աղբյուրների կազմը փոխվում է ընդամենը մի քանի օր անց: Այլ կերպ ասած՝ չփորված գետնի մակերեսով հոսելու դեպքում ջրին մի քանի օր ժամանակ է անհրաժեշտ: Հանքախոռոչի բացվելուն պես աղտոտումները շատ ավելի արագ կանցնեն ստորգետնյա ջրային ավազան, և դրանց ազդեցությունն ակնհայտ կդառնա շատ ավելի կարճ ժամանակում:

«ԷԼԱՐԳ»-ը հաստատում է, որ աղտոտված ջրերը կհոսեն Կեչուտի ջրամբար, իսկ այնտեղից՝ Սևանա լիճ: Այնուամենայնիվ, նրանք պնդում են, որ այդ աղտոտված ջրերը զգալիորեն չեն աղտոտի Սևանա լիճը ջրամբարի մեջ տարրալուծման և Սևանա լճի չափի պատճառով: «ԷԼԱՐԳ»-ը նշում է, որ **Արփա-Սևան թունելի բեռնաթափման վայրում կլինեն որոշակի խտացումներով վնասակար քիմիական նյութեր: Սա՝ այն դեպքում, երբ Սևանա լիճը պաշտպանված է Հայաստանի օրենսդրությամբ, ըստ որի՝ արգելված է ցանկացած գործունեություն, որը կարող է բացասաբար անդրադառնալ լճի և նրա էկոհամակարգի վրա: Ամփոփում և առաջարկություններ:**

Ամուլսարի տարածքում բազմամետաղ հանքավայրի շահագործման հարցի անորոշությունը պարունակում է


ռիսկեր, որոնց անկառավարելիությունը հանգեցնելու է անդառնալի հետևանքների:

- Տեղական և միջազգային փորձագիտական առանձին շրջանակների կողմից ներկայացվել են շրջակա միջավայրի վրա ազդեցության ռիսկեր, որոնք հաստատել է «ԷԼԱՐԳ» ընկերությունը իր ուսումնասիրության եզրակացություններով: Ուստի քանի դեռ դրանք պահպանվում են, և կասկածները չեն փարատվել, Ամուլսարի ծրագիրը չի կարող շարունակվել:

- Բացի այդ՝ հարկ է պատշաճորեն կառավարելի և վերահսկելի դարձնել ներկայումս Ամուլսարի հանքավայրում ընթացող քիմիական գործընթացները: Այս նպատակով հանքավայրի շահագործման թույլտվություն ստացած կազմակերպությունը և պետական լիազորված մարմինը պարտավոր են կատարել շարունակական մշտադիտարկում՝ արձանագրելու ներկա իրավիճակը և վնասների չափը, բացահայտելու այդ գործընթացների կառավարելիությունը և ներկայացնելու դիտարկվող ցուցանիշները:

- Ամուլսարի՝ որպես հանքավայրի շահագործման հարցը թեև դուրս է եկել զուտ մասնագիտական տիրույթից, սակայն անհրաժեշտ է վերականգնել մասնագիտական (այդ թվում՝ միջազգային անկախ փորձագիտական) ու հանրային առողջ երկխոսությունն ու քննարկումները՝ նկատի առնելով նաև նկարագրված գործընթացների քանակական և որակական արդյունքային ցուցանիշները:


- Հարցը վճռահատելու համար ՀՀ կառավարությունը պարտավոր է ստանձնել պատասխանատվություն և կայացնել պետության ու հանրության շահերից բխող որոշում, որի լավագույն միջոցներից է հանրաքվեն: ■



«Երկու տողէն անդին...» Հայ դատ, հայեցի կրթութիւն

Ջրոյց Իշխան Չիֆթճեանի հետ

Վրէժ-Արմէն



Իշխան Չիֆթճեան հայ գիր ու գրականութիւն կը դասաւանդէ Համպտրիկի համալսարանին մէջ (Գերմանիա), և, իր սյրագան մերատրական աշխատանքներուն կողքին, սն խմբագիրն ու վարիչն է «Հայերէն blog» գրական բեղուն կայքէջին (<https://hayerenblog.wordpress.com>):

Վերջերս դիմարեւորի վրայ սն մրահոգութիւն կը յայտնէր, թէ մեր բնակած երկիրներու փրկական դասագիրքերուն մէջ Հայոց ցեղասպանութեան մասին «երկու տող» յիշարակում մը ընելու համար մեր թափած ճիգն ու ջանքը չեն արդարանար, երբ անդին շար մեծ կարիքը կայ վերանայելու և զարգացնելու նոր սերունդին հայերէն սորվեցնելու մեր միջոցներն ու աշխատանքները:

Անհրաժեշտ է, որ մեր ազգային կեանքի մէջ դերակատար կազմակերպութիւններն ու անձինք կարարող աշխատանքներուն վերաբերեալ պարբերաբար լսեն ոչ միայն իրենց պարկան ժողովներու ու մարմիններու գնահատումները, այլև «պարզ քաղաքացիին» ալ փեսակերները, որոնք կրնան բացայայտել դերակատարներու ուշադրութենէն վրիպած պարագաներ կամ կացութիւններ:

Ահաասիկ 7 յունիս 2020ի Իշխանի գրառումը.

«Փոխանակ իրենց զաակներուն հայերէն սորվեցնելու մեր գաղութներուն մէջ, պարասիանարու մարդիկ և միութիւններ փարում են փրկական դասագիրքերու մէջ հայոց ցեղասպանութեան մասին ԵՐԿՈՒ ՏՈՂ (բառացի՝ երկու տող) անեցնելու փենդագին և «ազգային» աշխատանքով:

Այդ երկու տողը պակաս թող մնայ գերմանական և այլ դասագիրքերէ, բայց դուք ձեր զաակներուն ձեր մայրենի լեզուն սորվեցնելու միջոցներ փարուեցէր:

Եթէ մենք մեր գիրքած հայերէնը եկող սերունդին պիտի չկրնանք փոխանցել, ուրեմն արժանի չենք մենք այդ լեզուն:

Վ.Ա. – Սիրելի Իշխան, թէև ընկերային ցանցի վրայ կարճ փոխասացութիւն մը ունեցանք, բայց կը կարծեմ, թէ կ'արժէ, որ շարունակենք զրոյցել այս մասին, թէկուզ այսպէս՝ եթերին մէջ...

Արդ, առաջին հերթին կը խնդրեմ, որ պարզաբանես միտքդ: Չեմ ուզեր, որ մնանք միայն տեղական դասագիրքերու այդ մարզին մէջ, այլ դիտենք հարցն ու հարցերը անլի լայն տեսադաշտի մը վրայ՝ Հայ դատի ու հայեցի կրթութեան, որոնք, վերջին հաշուով, համոզուած եմ, սերտօրէն կապուած են իրարու:

Ի. Չ. – Երբ կ'ըսէի, թէ այդ «երկու տողը պակաս թող մնայ», անշուշտ թելադրողական իմաստ մը կու տայի ըսածիս: Ես այդ երկու տողը թերագնահատողը չեմ, սակայն երբ կը տեսնեմ, որ միս նժարին վրայ հայերէնին ու հայկականին մօտեցումը համապատասխան խնամքի չ'արժանանար, այն ատեն կը հրաժարիմ այդ երկու տողէն ալ:

Անլի յստակ. երբ մենք երկու տողին համար այնքան ճիգ ու ջանք, ժամանակ, ոգի, դրամ կը յատկացնենք, ինչնո նոյնը չենք ընէր մեր լեզուն ու մշակոյթը զօրատր հիմերու վրայ դնելու աշխատանքին համար: Ես չունիմ այս հարցումին պատասխանը: Անմիջապէս հիմա «փաստաբաններ» կրնան ըսել՝ «մենք երկուքին ալ կարևորութիւն կու տանք, երկուքն ալ կարևոր են» և այլն, և այլն: Ես ալ կ'ըսեմ, որ, այո՛, երկուքն ալ կարևոր են ՄԻԱՅՆ ԱՅՆ ԱՏԵՆ, երբ երկուքին կարևորութիւնը մենք գէթ հաւասարակշռած ըլլանք: Հաւասարակշռութեան հսկայական խախտում գոյութիւն ունի. մէկ կողմէ կը կատարուին քաղաքական կոչուած «դատ»ին հետապնդումը, լուպիական աշխատանքը, դրամահաւաք և այլն, որ, պարզ բառերով ըսած, այս կամ այն քաղաքական գործիչին կամ քաղաքական օրակարգին՝ Արևմուտք կամ Միջին Արևելք կամ այլուր հայանպաստ դիրքորոշուիլն է ընդդէմ Թուրքիոյ և Ատրպէյճանի: Թէ այդ դիրքորոշումը որքան կեանք ունի, յստակ չենք ալ գիտեր: Ֆրանսայի մէջ յիշողներ կան, որ Հայաստան-

Ֆրանսա կամ Արցախ-Ֆրանսա քոյր քաղաքները վերջերս հրաժարեցան իրենց... քուրույթենէն: Եթէ այս կամ այն քաղաքին մէջ Աթաթուրքի արձանը պիտի կանգնեցուի, մենք կը խանգարենք, որ կանգնեցուի, օրինակ՝ Համպուրկի մէջ վերջերս: Կ'երթանք, կը գտնենք համապատասխան խօսակիցները, և յանկարծ որոշումը կը փոխուի: Մինչ այդ եթէ այդ արձանը կանգնէր, թերևս այնքան ալ աղմուկ ելած պիտի չըլլար, թերևս այցելու ալ չունենար: Արձանին կանգնելուն և չկանգնելուն տարբերութիւնը ինձի համար յստակ է, կողմնորոշումն ալ յստակ է, սակայն այդ մակերեսային կողմնորոշումէն անդին չենք անցած մենք, և ասիկա՝ շատ մը մակարդակներու վրայ:

Երկու տողէն անդին անցնիլը անհրաժեշտ է՝ ըստ իս:

Վ.Ա. – Ինչպէ՛ս կը պատկերացնես Հայ դատի ծիրը: Ի՞նչ թերացումներ կան այդ մարզին մէջ, որ աշխատանքները բարելաման կը կարօտին, ի՞նչ մարզ անտեսուած կը մնայ: Կ'ուզեմ լսել կարծիքը մէկու մը, որ կը գտնուի ոչ հայկական շրջապատի մը մէջ և կրնայ տեսնել տարբեր երևոյթներ, մատնանշել տարբեր իրողութիւններ:

Միւս կողմէ՛ ասպարէզիդ իսկ բերումով, մանաւանդ «Հայերէն blog»-ի ալ ճամբով սերտ առնչութիւն ունիս մեր լեզուի ու մեր լեզուի ուսուցման հարցերուն հետ, յատկապէս Սփիւռքի մէջ: Ուրեմն ի՞նչ թերիներ կը տեսնես այս մարզին մէջ, ի՞նչ թելադրութիւններ ունիս այս առնչութեամբ:

Ի. Զ. – Ինձի համար դէպի ներս աշխատանքը շատ կարևոր է, և ես կը տեսնեմ, որ անիկա տեղի չ'ունենար հարկ եղած լրջութեամբ, ոչ միայն Հայ դատի վերաբերող աշխատանքներուն կապուած: Օրինակ մը տամ. այսօր հասկնալու համար Շուշիի կարևորութիւնը հարկ է անդրադառնալ հարիւր տարի առաջ տեղի ունեցած ջարդին, ԺԹ- դարերու քաղաքին մշակութային ու առևտրական եռուն գործունէութեան իմաստին, աշխարհագրական նշանակութեան: Այս և նման նիւթեր՝ իբրև ոչ միայն անցեալի դաս կամ երազանք, այլև ներկայի իմաստ և ապագայի ծրագիր, կրնան համակարգուած դասաւանդում-քննարկումի կերպարանք ստանալ: Երկարաշունչ աշխատանքի մասին է խօսքը, ինքնապատրաստութեան ու ինքնակրթութեան՝ ոչ ազգայնապաշտ ճակատի վրայ, ոչ տարեկան տօնահանդէսներու խրախի տեսքով: Տարեկան խորհրդակցութիւնները, եթէ տեղի ունենան, ցուցադրութենէ անդին, «Երկու տողէն» անդին չեն անցնիր իրենց ազդեցութեամբ. չեն խօսիր տեսլականի մասին:

Ես այս երկարաշունչ, կեդրոնացեալ աշխատանքը չեմ տեսներ: Հայկական հարցերն ու նիւթերը շատ են, Շուշին օրինակ մըն էր: Մենք, փոխանակ այդ նիւթերը դասակարգելու, ներքին ճակատի վրայ մեզ այդ նիւթերուն մարտողութեամբ սնուցանելու և հիմնական աշխատանքի պատրաստուելու, զբաղած ենք դէպի դուրս նետուած պայքարով մը, չեմ ըսեր

«տարուած», այլ «նետուած» պայքարով, որ շատ անլի կը մսխէ մեր ունեցածը, քան կը շահարկէ: Թերագնահատում չէ ըրածս, բայց քննադատութիւն՝ այո, որովհետև գիտեմ, որ բոլոր կարելի միջոցները ունինք, սակայն չենք ձեռնարկեր, որովհետև չենք հասունցած տակաւին և դասեր ալ չենք քաղեր մեր շրջապատէն, այն երկիրներէն, ուր կ'ապրինք:

Վերջերս լոյս տեսաւ ՀՅԴ արխիւներու վերջին հաւաքածոն: Ճիշդ ինչպէս որ ատենին Վրացեանէն ու Սասունիէն չկրցանք հարկ եղած ձևով օգտուիլ՝ արխիւներու վերաբերող ինչ-ինչ հարցումներու պատասխանները անհրաժեշտ չափով անոնցմէ ստանալով, նոյնպէս ալ այսօր Երուանդ Փամպուքեան, սենեակի մը չորս պատերուն մէջ փակուած, կատարեց ու դեռ պիտի կատարէ իր աշխատանքը, հետաքրքրուողներու սերունդ պիտի չպատրաստուի, մենք պիտի չկարենանք խանդավառել երիտասարդները, որովհետև տարուած ենք ցուցադրական աշխատանքով, խանդավառ չենք այդ աշխատանքով: Մակերեսային խանդավառութիւնը խանդավառութիւն չէ: Ուր որ երիտասարդ ուժեր կը տեսնենք, մեծաւ մասամբ իրենք զիրենք հասցուցած երիտասարդներ են, հաւաքական ուժ-աշխատանք մը չէ կեցած անոնց ետին: Պատահականութիւնն ալ կրնայ արդիւնք տալ, սակայն անոր արդիւնքը շատ հեռահաս չէ:

Դեռ չեմ խօսիր այլ հաստատութիւններու գոյութիւն չունեցող կամ գոյութեան չկոչուող արխիւներուն մասին: Ասիկա ոչ ժամանակի հարց է, ոչ տրամադրութեան, ոչ ալ տնտեսումի: Ասիկա մշակոյթի մը բացակայութեան հարցն է:

Վ.Ա. – Այս մասին ոչ մէկ կասկած: Ես ինքս կ'ափսոսամ, որ «Համագային»-ի և մեր միւս կազմակերպութիւններու համադրուած, թուայնացուած ու մատչելի արխիւ չկայ, գրեթէ չկայ: Յաճախ կը պատահի, որ չկարենամ որևէ աղբիւր գտնել շատ հասարակ տեղեկութիւն մը որոնելու կամ ստուգելու համար:

Ի. Զ. – Հոս կ'ուզեմ «հայաստանասէր» սփիւռքահայ



խմբակներու ուշադրութեան յանձնել «իրենց» իսկ պատմութիւնը: Թող սերտեն, թող հասկնան, յետոյ կրնան փիլիսոփայել, թէ Սփիւոքի մէջ ինչ կատարուած է անցեալ դարերուն ընթացքին իբրև քաղաքական, մշակութային իրագործում, ինչ կարելի է ընել հիմա, ու ինչու տեղի չ'ունենար հիմա, ինչ որ կրնայ տեղի ունենալ:

«Լեզուի ուսուցման» մասին հարցուցած ես վերը: Ցառով կը տեսնեմ, որ, միլիոնատր գործածող ունեցող լեզուներու օրինակին հետևելով, հայերէնը, մանաւանդ արևմտահայերէնը, լլկումի ճամբան բռնած է: Չի բաւեր, որ անիկա պաշտօնական աղբիւրներու մէջ կը բռնաբարուի բանիւ և գրով, հիմա ալ կ'աւելնայ, այսպէս կոչուած, «նորարար գիտերու» հետապնդում մը, որ արևմտահայերէնին դամբանաքարը կը դնէ: Փոխանակ լեզուի ուսուցման ու կիրարկման աշխատանոցներ կազմակերպելու՝ լեզուն ազատօրէն խեղաթիւրելու քաջալերանք տեղի կ'ունենայ:

Անգլերէնը կամ ֆրանսերէնը չեն ազդուիր նման մարզանքներէ: Մենք, սակայն, այդ շոյալութիւնը չենք կրնար մեզի արտօնել: Երբ մանուկին ծուռ խօսածը չես շտկեր ատենին և կ'ըսես՝ «օրին մէկը ինքնիրեն կը շտկուի», և կը խորհիս՝ «սխալ-ճիշդ, սխալ-ճիշդ ճիշդ» կ'ըլլայ, «ապրիմ-մեռնիմ» ի օրէնքով, երբ մանուկին փողոցի հայերէնով մանկական ու պատանեկան հատորիկներ կը պատրաստես ու կը հրամցնես, հիմը ծուռ դրած կ'ըլլաս: Ծուռ հիմը շտկելը հետագային անկարելի է, մանաւանդ երբ կաթընկեր մը ինքզինք հանճար կը համարէ:

Գիտես, որ մենք մեր էջին վրայ բարբառներու բաժին մը ունինք և կը քաջալերենք բարբառներով արտայայտուողները, և բաւական ալ լեզուն է այդ բաժինը: Ունինք նաև փողոցային հայերէնով գրուած նիւթեր: Գոյութիւն ունին բարբառը, խօսակցականը, փողոցի լեզուն, գրական լեզուն և գրականութեան լեզուն: Ասոնք իրարմէ տարբեր բաներ են, և ԲՈԼՈՐՆ ալ կարևոր են: Գրականութեան լեզուն կրնայ բոլորը համախմբել: Մենք բոլորին ալ ուշադրութեամբ տեղ կու տանք մեր կայքէջին մէջ, նոյնիսկ հեղինակ մը ունինք, որ դիտմամբ սխալագրութեամբ կը գրէ, ուրիշ մը լատինատառ հայերէնով արտայայտուած է: Այս բոլորը կան, սակայն զանոնք կիրարկողը պարտի գիտնալ, թէ իր սորվածը, խօսածը կամ գրածը ինչ է՝ բարբառ է, խօսակցական է, գրական է, գրականութեան լեզու է: Երբ այս տարբերութիւնները յստակ չեն, չենք գիտեր, թէ ուր ինչ պիտի գործածենք, և յառաջ կու գայ խառնարան մը: Ասոր լուծումը ՌԻՍՈՒՑՈՒՄԵ է. ինչ լաւ պիտի ըլլար, եթէ անիկա տեղի ունենար: Ուսուցման աշխատանոցներ չկան, որոնք հայերէնի այս բոլոր ճիւղերուն սերտողութեամբ և կիրարկմամբ զբաղին: Երբ լեզուիդ վրայ չես աշխատիր, ինչու կ'աւաղես, որ ան կը կորսուի:

Երբ այս նիւթերուն մասին նեղ շրջանակներու մէջ կը խօսին, սրտցաւ կամ սրտցաւ ձևացող պատասխանատու անձեր անմիջապէս կ'ըսեն՝



«մարդու չունինք», բայց երբ անմիջապէս կ'աւելցնեն, թէ ձևեր կան մարդ պատրաստելու, ինչ որ ժամանակի և կեդրոնացման կը կարօտի, այս անգամ ալ կ'աւելցնեն, որ միջոց չունին, դրամ չունին: Ես վստահ եմ, որ ուրիշ, շատ ատի կարևոր բաներ ալ չունին, և այս չուննորութիւնը վերածուած է մնայուն կացութեան մը, որուն կրնանք «իմացեալ ամլութիւն» անունը տալ:

Ասկէ առաջ ալ ըսած եմ Սփիւոքի մէջ ենք, և մամուլ ու դպրոց պատահական արտադրութիւններու օճախներ դարձած են, կոչուած են կազմակերպ արտադրութեան օճախներ դառնալու: Այդ կոչումը մէկէ մը չեն ստանար, իրենք իրենց վրայ կրնան վերցնել, յանձն առնել: Սփիւոքը այն չէ, որ դուրսէն, այլ գաղութ կամ Հայաստանէն ներածուած՝ եկուոր ուժով հրախաղութիւն կը մատուցէ կամ կը գոյատևէ, այլ այն, որ ստեղծագործութեան հիմեր կը դնէ:

Վ. Ա. – Մեր թոհուրոհին մէջ յաճախ կ'անտեսենք Հայ դատի աշխատանքին կապակցաբար ալ ներքին դաստիարակչական կողմը, որ ամէն օր, ամէն տեղ կատարուելիք գործ է, որուն ես ալ անդրադարձեր եմ ու կ'անդրադառնամ յաճախ, նոյնիսկ երբեմն ձանձրանալի ըլլալու ի գին: Իսկ այս դաստիարակչական աշխատանքը չի սահմանափակուիր Հայ դատի դասագիրքերու պատրաստութեամբ, ոչ ալ մեր հրապարակային նախաձեռնութիւններով: Կայ մեր ընտանիքներուն մէջ հոգեբանական մթնոլորտ ստեղծելու, մեր նոր սերունդին մէջ Հայը, հայերէնն ու հայկականը ճանչնալու և գնահատելու տրամադրութիւնը զարգացնելու և ազգային նպատակներուն նկատմամբ յանձնառու դառնալու յօժարութիւնը յառաջացնելու դժուարին աշխատանքը, դժուարին՝ շրջապատի անմիջական գերազդեցութեան ներքոյ: Բայց կայ մանաւանդ ամէն հայորդիի հայեցի կրթութիւն հասցնելու հրամայականը, որուն համար զօրաշարժի ենթարկուելու է մեր մտաւոր թէ նիւթական ամբողջ ներուժը:

Ի. Չ. – Թոյլ տուր, որ ըսածներդ քիչ մը ատիլ մօտէն կարդամ: Բնչ «թոհուրոհ» ի մասին է խօսքդ և ինչ «անտեսման»: Զարմանալի չէ, որ Սփիւոքի մէջ ապրող ժողովուրդ մը իր գաղութներուն ունեցած

տարբեր կարելիություններով՝ տեղ մը այս մարզին մէջ տկար, ուրիշ տեղ մը այլ մարզի մէջ աւելի կազմակերպ, բնականաբար ունենալով այլազան նկարագիր, հիմնական հարցերուն մէջ ըլլալով հանդերձ միաձև և, ըսենք, միախորհուրդ, չունենայ տեղոյն պայմաններուն համաձայն կատարուող «լուծում» ու «ծրագիր»:

Ընդհանուր ծրագրի մասին չեմ խօսիր հոս: Համեմատականս ծանր թող չըլլայ: Ես Գերմանիա կը բնակիմ, և մեր տեղացի քիւրտերն ու թուրքերը յաճախ իրենց ընտանեկան որոշումները՝ ծրագիր-կանոնագիրը, իրենց գերդաստանի նահապետին կողմէ՝ Անատոլուէն, կը ստանան:

Երբ խօսքը հարցեր լուծելուն և ծրագրելուն գայ, բոլորս ալ, բոլոր գաղութներս կը դառնանք միասնական և եթէ հոս-հոն մեր նահապետներուն խօսքէն դուրս կ'ելլենք, լուսագոյն պարագային կ'ըսենք. «Միջոցները չունինք, ծախսալից են այդ բաները, արդէն մենք Սփիւռք ենք ու պիտի հալինք»: Եթէ հոս պատերազմ, քաղաքական կամ տնտեսական տագնապ չըլլայ, ուրիշ գաղութի մը մէջ պիտի ըլլայ: Մեր տագնապներուն վերջը պիտի չգայ: Քու նշած «թոհուրոհ»-ը միշտ կայ: Ի դէպ, թոհուրոհու՝ երբայերէնէն հայացուած այս բառը Ծննդոց գիրքին մէջ նախարարչական, քառսային վիճակին բնութագրումն է: Ըստ երևոյթին, մենք ալ ազգովին այդ վիճակին մէջ ենք տակաւին... Ասիկա մայրուն վիճակ մըն է մեզի համար: Դժբախտաբար, մայրուն վիճակի վերածուած է նաև տագնապէն դուրս գալու միջոցներ չգտնելու մեր հաւաքական ամուրթինը՝ մեր «անտեսում»-ը՝ քու բառովդ դարձեալ: Իրականութեան մէջ մենք մեզ է, որ կ'անտեսենք: Հոս ու հոն կարելի է նշմարել խմբակային աշխատանքներ, դրական երևոյթներ, որոնք, սակայն, չեն աճիր, նոյնիսկ միայն անհատական նախաձեռնութիւններ կը մնան, չեն քաջալերուիր:

Ամէն մարդ ուրախ է վերջերս, որ ահագին նիւթ տեղադրուած է համացանց՝ համաճարակին առթիւ՝ դասաւանդութիւն, ընթերցում և այլն, և այլն: Առանց նոյնիսկ նուագագոյն մօտեցում ցուցաբերելու այդ բոլոր նիւթերէն գոնէ մի քանիին՝ անպատասխանատու խանդավառութեամբ ոմանք նոյնիսկ արևմտահայերէնի վերածնունդն ու թերևս ալ ոսկեդարը հռչակած են... ԻԱ. դարուն այսքան թերթաբարոյ պիտի ըլլանք:

Վ.Ա. – Ի՞նչ կը մտածես ուրեմն: Ուրկէ՞ սկսիլ...

Ի. Զ. – Վերը կը խօսիս «ամէն օր, ամէն տեղ կատարուելիք գործ»-ի, «դաստիարակչական աշխատանք»-ի մասին: Որքան իտէլականացնենք ու վսեմացնենք դաստիարակութիւնը, նոյնքան հռետորական և բովանդակազուրկ կը դառնայ անիկա: Որքան լայն բռնենք աշխատելագետնին աշխարհագրական սահմանները, այնքան դժուար կը դառնայ անոր գոյատուրը: «Ամէն օր, ամէն տեղ»-ը ինձի կը յիշեցնէ մեր յեղափոխական շարժումի հսկայածաւալ աշխատանքը ԺԹ. դարու

աւարտին, որ ստրկամտութենէ դուրս կ'ուզէր բերել արևմտահայութիւնը և հաւաքական սպառազինման ու կազմակերպման փորձեր կ'ընէր հայառատ քաղաքներու մէջ՝ Վան, Կարին և այլն: Արդարև հսկայական ու անսպառելի աշխատանք մը: Կ'արժէ կարդալ Արամ Մանուկեանի «Նամականի»-ն (Երևան, 2018): Հոս տեղը չէ, բնականաբար, «հանապազօրեայ» ու մշտական այդ կամ այլ աշխատանքի արժևորումը կատարելու: Ինձի կը թուի, որ մասնաւոր ու յստակ ձեռնարկներ կրնան շօշափելի պատկերի վերածուիլ ու մանաւանդ արդիւնք տալ, եթէ ըլլանք հետևողական և լուրջ մեր մօտեցումներուն մէջ:

Զօրաշարժի մասին կը խօսիս: Ի՞նչ միջոցներ ունիս այդ զօրաշարժին համար: Հրապարակագրութիւն: Բաւարմբ է: Որո՞ն ուղղուած է ան: Լեզուի և հայագիտական նիւթերու դասաւանդում: Մոնթրէալի ձեր ձեռնարկին («Համագգային»-ի «Լևոն Շանթ» հայերէնագիտական դասընթացքի – Վ.-Ա.) մասին խօսելու համար հարկ է շօշափելի արդիւնքին սպասել: Դեռ շատ կանուխ է: Հոն ալ, սակայն, սկզբնական թուլութիւն կը նկատեմ արդէն: Կը սպասէք, ըստ երևոյթին, որ հաւանական զեկուցաբերներ ու դասախօսներ Մոնթրէալ ոտք դնեն, որ դուք ալ անոնց դրած ոտքը ծրագրի կամ դասանիւթի վերածէք: Ասոր անունը պատահական աշխատանք է: Պայման չէ, որ ձախող ըլլայ, բայց կ'ուզեմ, որ տեսնես, որ մենք Չիրդ դարուն մեր ինքնութիւնը պատահական հովերուն առջև «սփռած» ենք: Մինչդեռ «սփիւռք» ըլլալը սփռուածութեան գիտակցութիւնն է:

Վ.Ա. – Իշխան, թոյլ տուր, որ այստեղ ճշդում մը կատարեմ. գէթ որպէս այդ դասընթացքի կազմակերպիչներէն մէկը կրնամ հաւաստիացնել, թէ զեկուցաբերներն ու դասախօսները, եթէ դուքսէն գալիք են, մեր հրաւերով ու յատկացումով է, որ պիտի գան, և այդպէս ալ եղաւ, բացի առաջինի պարագայէն, որ լուսագոյնս զուգադիպեցաւ մեր յայտագրին: Ասիկա՞ ի միջի այլոց: Բայց վերադառնանք քու ըսելիքիդ:

Ի. Զ. – Մեր գլխաւոր հարցն այն է, որ աննշան են, մայրուն չըսեմ, շարունակական ձեռնարկները համայնքային կեանքի մէջ կամ անոր լուսանցքին, որոնք կը զբաղին տարուած աշխատանքին անդրադարձող աշխատանքով: Մենք կրնանք գիրք հրատարակել, սակայն անիկա չի մատուցուիր ընթերցումով (անշուշտ, կը խօսիմ հոս մարդուն և ոչ գինիին կողմէ կատարուած ընթերցումին): Մենք մշակութային երգուպարի ձեռնարկ մը հազիւ ծայրը ծայրին կը բերենք՝ յետոյ շունչ քաշելու համար: Կամ՝ մշակութային ձեռնարկներ կը կազմակերպենք՝ օտարներուն ցոյց տալու համար, թէ ինչ լաւ մշակութի «տէր» ենք: Ասոնք լուսագոյն պարագային առաջին մակարդակի ձեռնարկներ են: Ասոնց մարտողութիւնը, որ տեղի կրնայ ունենալ անդրադարձող, քննարկող, խորհրդակցական մակարդակի վրայ, որ ապագայի ուղղութիւն կրնայ ճշդել, կը բացակայի: Մեր խորհրդակցական հանդիպումները այս առաջին մակարդակէն՝ «երկու տողէն», անդին չեն

անցնիր յաճախ, ինչպես ըսի վերը: Անդրադարձ աշխատանքին տեղը առած են մեր քով «յոբելեանի մշակոյթը», ամենակներու պաշտամունքը, որ գիտես, թէ ինչի վերածուած է: Միջնադարու ներբողները հսկայական գանձ են լեզուական ու գաղափարական իմաստով: Մեր յոբելեանները՝ լեզուի ու գաղափարի ապականութիւն:

Հայաստանի առաջին հանրապետութեան կերտիչները, որոնք Սփիւռքի մէջ դաստիարակութեան և դպրոցին նուիրուեցան, կը հաւատային իրենց ըրած աշխատանքին: Այսօր մենք չենք հաւատար հայ դպրոցին ու հայերէնին: Հաւատքը կարելի է ունենալ, կորսնցնել և վերագտնել: Որոշումի և աշխատանքի հարց է: Երբ որ դուն քու աշխատանքիդ չես հաւատար, ինչպէ՛ս կ'ուզես, որ ուրիշը հաւատայ:

Վերը կ'ակնարկես «հոգեբանական մթնոլորտ ստեղծելու» մասին ընտանիքէն ներս կամ դուրս, բայց ինչպէ՛ս: Ես կը խորհիմ, որ առաջին, մակերեսային աշխատանքէն անդին անցնելով միայն կարելի է ասիկա. կը տեսնես, որ երբ ծրագրի մը համար խմբակ մը կազմես, օղակը նեղցնես, քանի՛ հոգի կը մնայ: Երբ մենք տարուած ենք սրահներ լեցնելով, հարկ է, որ տեղ մը անդրադառնանք, որ այդ լեցումը սրահները պարպելու աշխատանք մը կայ՝ ըսելով, թէ մենք հիմա մարտդական աշխատանք պիտի կատարենք, որ շարունակական բնոյթ ունենայ: Հոգեբանական մթնոլորտը կրնայ տարիներու աշխատանքի արդիւնք ըլլալ միայն: Մենք այդ համբերութիւնը ունինք:

Հիմա պիտի ըսես, որ համայնքային մակարդակի վրայ նման մօտեցում ակնկալելը շոյալութիւն է: Համաճայն չեն:

Վ-Ա. – Ո՛չ, շոյալութիւն չէ, պարտադրանք է:

Ի. Չ. – Ես հանդիպած եմ երիտասարդ տարբերու Երոպա կամ Միջին Արևելք, որոնք շատ լա պատրաստուածութիւն ունին, սակայն հայկական միջավայրը, փոխանակ մտածելու անոնց ծաղկման մասին, զանոնք կը «լծէ» այս կամ այն գործին, անոնց հետ կատարուելիք երկխօսութեան ամբողջական բացակայութեան: Երիտասարդը ինք պիտի որոշէ իր ընելիքը, ոչ թէ դուն անոր պարտականութիւն պիտի տաս: Այնքան կը խեղդենք մեր միջավայրը, որ ազատ առաջարկներու իսկ տեղ չի մնար:

Ուրիշ կարևոր թերութիւն մըն ալ կայ, որուն յաճախ հանդիպած եմ: Կարևորի ու երկրորդականի զանազանութեան հարցը: Հարկաւ, ինծի համար կարևորը ուրիշին համար երկրորդական կրնայ ըլլալ: Ատիկա՛ իր կարգին: Երկրորդականին վրայ յաճախ այնքան կեդրոնացում և նիւթաբարոյական ծախս կը յատկացուին, որ հիմնականը կը կորսնցնէ իր հիմնականութեան իմաստն իսկ: Պատահած է, որ խորհրդակցական հանդիպումի մը մասնակցիմ, ուր մասնակիցներ ժամեր տրամադրած են «քննարկելու» համար, թէ Ապրիլ 24ի յուշատօնը ինչ բովանդակութեամբ տեղի պիտի ունենայ... Արիստոյն աղաներն ու մեծապատիւ մուրացկանները բազմապատկուած են: Մեծածախս համագումարներու

մասնակցած եմ, որոնց կատարումը միայն խորհրդանշական իմաստ ունեցած է՝ երբեմն կազմակերպիչներուն իսկ խոստովանութեամբ: Ես խորհրդանշի հաւատացող եմ, սակայն կը խորհիմ, որ անկէ անլի կարևոր բաներ կան:

Կը խօսիս նաև «շրջապատի անմիջական գերազդեցութեան» մասին, որ մեր աշխատանքը կը դժուարացնէ: Սփիւռքի մէջ կրկնակիութեանց ու բազմակիութեանց մէջ ծնած ենք, անոնց հետ մեր յարաբերութիւնը առօրեայ հարց է: Հայաստանցիները վերջին քառորդ դարուն Սփիւռք գալով նոր կը ծանօթանան այդ իրականութեան: Այդ «գերազդեցութիւնը» միշտ ժխտական իմաստ չի կրնար ունենալ:

Գիտես՝ ես չեմ կրնար բաւարարուիլ կոյր-կաղ ծրագրերով, որոնք աս կամ ան ծակը գոցելով զբաղած են: Հոս իմ բաւարարուիլս ալ չէ հարցը, իրականութեան մէջ: Երբ հարցերուն առժամեայ լուծումներ կու տանք, արմատական, լուրջ և հեռահաս ծրագիր չենք առաջադրեր, միօրեայ կեանք կ'ապրինք, ստոնարանը միայն մէկ օրուան պաշարով կը լեցնենք, չենք կրնար մեր կեանքը կազմակերպել: Քոչուոր, վրանարնակ ու թափառաշրջիկ ցեղերն իսկ երկարաժամկետ աշխատանքին իմաստը գիտեն: Բայց հոս պէտք է հարցնենք՝ ծրագրեալ հաւաքական ինքնասպանութեան կը դիմենք, թէ՛ անգիտակցաբար տեղի կ'ունենայ ասիկա: Ասիկա ինծի համար անկեղծօրէն յստակ չէ:

Մենք առհասարակ զբաղած ենք ուրիշներուն «բացատրելով», թէ մենք չլուծուած դատ ունինք, որ արդար է մեր դատը և այլն: Ես խորապէս համոզուած եմ, որ ուրիշներէն առաջ այդ բոլորը մենք լաւապէս հասկնալու կարիք ունինք: Եւ ասիկա մնայուն, խոր ու երկարաշունչ աշխատանք է, շաբաթավերջի ժամանց չէ:

Վ-Ա. – Եւ մեծ նիւթականի կարիք ունեցող աշխատանք է: Նիւթականը կայ, կրնայ գոյանալ, կարևորը այդ ընելու գիտակցութիւնն է, կանքն է: Անգամ մը ևս շնորհակալութիւն, Իշխան: ■



Հայոց եկեղեցին և քրիստոնեական ազգային արժեքային համակարգի ձևավորումը

Վարդան Ղանդիլյան
պատմաբան

Քրիստոնեական ազգային արժեքային համակարգի ձևավորումը տեղի է ունեցել ոչ մեկ տարում և ոչ էլ մեկ հարյուրամյակում: Այս գործընթացը, Հայաստանում սկիզբ առնելով առաքելական քարոզչության տարիներից, անցել է դարերի ու հազարամյակների միջով և ձգվում է մինչև մեր օրերը: Այդ ընթացքում, ինչպես ցույց է տալիս մեր ժողովրդի պատմությունը, ձևավորվեցին և վերջնականապես կայացան այն ազգային քրիստոնեական հիմնարար արժեքները, որոնք կազմում են հայ մարդու աշխարհայացքի առանցքը: Այդ արժեքահամակարգը մեր ժողովրդին հնարավորություն է տվել պահպանելու իր հայրենիքը, հավատը, մշակույթը, ազգային ինքնագիտակցությունը և վերականգնելու անկախ պետականությունը:



Քրիստոնեական ազգային արժեքային համակարգի մշակման կենտրոնի սրբեզմունք

Հայաստանի առաջին բաժանումից (387 թ.) և Արշակունյաց թագավորության անկումից (428 թ.) հետո հայ հասարակությունը հայտնվեց մի կողմից՝ քրիստոնեական-բյուզանդական, մյուս կողմից՝ գրադաշտական-պարսկական արժեքային համակարգերի անմիջական ազդեցության տակ, ինչը վտանգում էր հայկական էթնիկական ընդհանրության նույնականությունը: Անհրաժեշտ էր մշակել արժեքային այնպիսի համակարգ, որը ոչ միայն ունակ կլիներ պահպանելու հայ հասարակության նույնականությունը, այլև պայմաններ կստեղծեր նրա հետագա զարգացման համար: Պետականության բացակայության պայմաններում այդ արժեքների մշակման խնդիրն իր վրա վերցրեց Հայոց եկեղեցին:

301 թ. Հայաստանում քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն արդեն իսկ կանխորոշել էր հայ հասարակության մշակութա-արժեքային կողմնորոշումը: Կրոնական համակարգի փոփոխությունը պատահական չէր և պայմանավորված էր հայ հասարակության հոգևոր, մշակութային զարգացման օրինաչափություններով, ինչպես նաև էթնիկական ինքնապաշտպանության պահանջով: Քրիստոնեության ընդունումից հետո անհրաժեշտ էր նոր ուսմունքի դրույթների, հիմնական գաղափարների և խորհրդանիշների հիման վրա կառուցել հայ հասարակության հոգևոր-մշակութային կյանքը:

Հայաստանում քրիստոնեության տարածման և հաստատման ժամանակ հայ հասարակությունն արդեն բավական բարձր կազմակերպված էթնիկական ընդհանրություն էր: Հայոց եկեղեցին քրիստոնեական ազգային արժեքային նոր համակարգի ձևավորման ժամանակ պահպանեց էթնիկական ինքնագիտակցության մեջ արմատացած, հայկականությունը բնորոշող հատկանիշները: Օրինակ՝

ազգային ինքնագիտակցության այդ հատկանիշները լավագույնս են պահպանվել Մովսես Խորենացու «Հայոց Պատմության» մեջ, որում Պատմահայրը մեծ գովեստով ու հարգանքով է ներկայացնում Հին Հայաստանի հայրենասեր, հայրենիքը շնացնող արքաներին, հայոց քաջ նախնիներին: Նաև գիտենք, որ որոշ քրիստոնեական տոնակատարություններ ներառել են մինչքրիստոնեական ժողովրդական ավանդույթներ և սովորություններ, օրինակ՝ Վարդավառը, Տեսանընդառաջը, Խաղողօրհները և այլն:

Միաժամանակ քրիստոնեական ուսմունքի շրջանակներում ձևավորվել էր հասարակական-պետական կյանքի կազմակերպման այնպիսի մոդել (բնորոշ), որը ուսուցանում ու նաև պահանջում էր քրիստոնեական բարոյականության հիմքերի վրա կառուցել ներհասարակական, ներպետական կյանքը՝ արքունիք-նախարարներ, իշխաններ-հպատակներ փոխհարաբերությունները և այլն:

Քրիստոնեական ազգային արժեքային համակարգ ստեղծելու համար անհրաժեշտ էր ունենալ արժեքների, խորհրդանիշների, գաղափարների մշակման կենտրոն: Պետականության գոյության պայմաններում եկեղեցին սովորաբար այդպիսի կենտրոն ձևավորում էր երկրի մայրաքաղաքում: Հայ հասարակության համար նման կենտրոն դարձավ Էջմիածինը: Հետագայում, անկախ այն հանգամանքից, որ կաթողիկոսական աթոռը տեղից տեղ էր տեղափոխվում, Էջմիածինը միշտ պահպանում էր արժեքահամակարգը խորհրդանշող և պահպանող իր կարգավիճակը:

Ինչպիսի՞ խնդիրներ էին ծառայում Հայոց եկեղեցու սանջև

Հայկական քրիստոնեական արժեքային համակարգի մշակման ժամանակ հայ հասարակության մեջ առկա էին տարբեր՝ հեթանոսական, գրադաշտական,

քրիստոնեական, աստրական, հունական և մշակութային այլ կողմնորոշումներ: Կենտրոնի խնդիրն էր ոչ միայն ձևավորել միասնական մշակութային մոդել, այլև ապահովել այդ մոդելի կենսագործումը: Այս նպատակով արժեքային համակարգի կենտրոնը ստեղծեց նաև ենթակենտրոններ՝ թեմեր, գաղթավայրերի հոգևոր-մշակութային կենտրոններ և այլն:

Նոր արժեքային համակարգը պետք է ունենար նույնարժեք հոգևոր տարածք, որի հիմնական հատկանիշներն էին լեզուն, հավատը, դավանանքը (հավատով՝ քրիստոնյա, դավանանքով՝ հայ առաքելական):

Հայոց եկեղեցին աշխարհիկ իշխանության (արքունիք) օժանդակությամբ ձեռնամուխ եղավ հայոց այբուբենի ստեղծմանը: Հայոց լեզուն ստանձնում է ազգային արժեքային համակարգը ձևավորող կարևոր գործառույթ: Քրիստոնեության համընդհանրական գաղափարն ազգայնացվում և հայ հասարակության գիտակցության մեջ ներդրվում էր լեզվի միջոցով: Արժեքահամակարգի մշակման ժամանակ հայերեն թարգմանվեց «Աստվածաշունչը», ինչպես նաև քրիստոնեական մեծածավալ գրականություն:


Յուրաքանչյուր էթնիկական ընդհանրություն ունի աշխարհի վերաբերյալ մշակած պատկերացումներ, աշխարհայացք: Հայ հասարակությունը նույնպես մշակել և ժառանգաբար կանոնակարգված փոխանցում էր իր փորձը, սովորույթները, բարքերը: Սակայն ոչ մի հասարակություն, այդ թվում և հայկականը, ի վիճակի չէր գոյատևելու առանց փոփոխությունների:

Ընտանեկան և կենցաղային սովորույթները քրիստոնեության սկզբունքներին համապատասխանեցնելու նպատակին էին ուղղված Աշտիշատի (354 թ.), Շահապիվանի (444 թ.) և հետագա մի շարք այլ ժողովների որոշումներն ու կանոնները: Այսպես, Աշտիշատի ժողովն արգելեց հեթանոսական այնպիսի սովորույթներ (մերձավորների ամուսնությունը, հանդերձներ պատռելով մեռելներ թաղելը, հարբեցողությունը, պոռնկությունը), որոնք հարիր չէին հասարակության կազմակերպման նոր պատկերացումներին և սկզբունքներին:

Հայոց եկեղեցին փորձեց վերակառուցել արտաքին միջավայրն այնպես, որ այնտեղից վտանգ չսպառնար: Հարևան ժողովուրդների մեջ քրիստոնեությունը տարածելու նպատակով հայ հոգևոր գործիչները գործնական քայլեր արեցին և հասան որոշակի հաջողությունների: Դեռևս Գրիգոր Լուսավորչի և նրա հաջորդների օրոք քրիստոնեությունը տարածվեց Ադվանքում և Վիրքում, փորձ արվեց այն տարածելու նաև Պարսկաստանում և մասքությունների երկրում:

Ավանդական պատկերացումների ներառումը քրիստոնեական արժեքահամակարգում: Քրիստոնեական ազգային հայեցակարգի մշակումը

Սովորաբար ավանդական են համարվում այն պատկերացումները, որոնք ձևավորվում են անցյալի որոշակի ժամանակահատվածում և հաստատում են



Մովսես Խորենացի

անցյալի օրինականությունն ու գոյության իրավունքը: Քրիստոնեական ազգային արժեքային համակարգի մշակման համար անհրաժեշտ էր մտովի վերադասում նաև մինչքրիստոնեական անցյալ և այդտեղից «բերել» կերպարներ, երևույթներ, իրադարձություններ, գաղափարներ, որոնք նոր հասարակության համար կլինեին ինքնաճանաչման, ինքնադրսևորման, էթնոսի կենսագործունեության ապահովման հարատև ազդակներ: Այս խնդիրը լուծեց Մովսես Խորենացին իր «Հայոց Պատմություն»-ով, որում ընդգրկված են հայերի և նախաքրիստոնեական, և քրիստոնեական ժամանակաշրջանները: Հայոց պատմությունը ներառելով ժամանակագրական համակարգի մեջ՝ Մովսես Խորենացին սահմանեց հայոց արժեքահամակարգի պատմական հիմքերը: Պատմահայրը ցույց տվեց, որ հայոց արմատները սկիզբ են առնում Ադամ նախահորից, և նկարագրելով հայերի ծագումը Հայկ Նահապետից՝ հիմնավորեց հայ ազգի պատվավոր տեղը հնագույն ազգերի շարքում:

Յուրաքանչյուր ժողովրդի կազմակերպման հիմքում նախ և առաջ դրվում են հավատի, լեզվի, ինքնուրույն մշակույթի և անկախ պետականության գաղափարները: Մրանք դրվեցին նաև հայոց քրիստոնեական ազգային արժեքահամակարգի ձևավորման հիմքում որպես հասարակության գործողությունները պայմանավորող նպատակներ:

Հայոց եկեղեցին արժեքային համակարգում ներառված երեք կարևորագույն հատկանիշներ՝ հայրենիքը, հավատը և լեզուն, հոչակեց սրբություններ և սահմանեց դրանց խորհրդանիշ-սրբերին՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ս. Մեսրոպ Մաշտոց և Ս. Սահակ Պարթև, Ս. Վարդանանք:

Քրիստոնեության պատկերացումները տիեզերքի և մարդու մասին արմատապես տարբերվում էին հեթանոսական աշխարհայացքից: Քրիստոնեության ընդունումից հետո դրանք պետք է դրվեին հասարակության կազմակերպման հիմքում: Այս խնդրի լուծման համար հայ հոգևոր գործիչները (թարգմանիչներ, պատմիչներ, մեկնողներ, ջատագովներ և այլք) IV դարից (սկսած թարգմանիչներից) աշխատում էին ազգայնացնել, ժողովրդի սեփականությունը դարձնել քրիստոնեությունը:

Ազգային արժեհամակարգի մշակումը խոչընդոտում էին ոչ միայն հեթանոսությունն ու սնտի հավատալիքները, այլև գրադաշտականությունն ու աղանդավորական, թյուր փիլիսոփայական անընդունելի ուղղությունները: Այս հոսանքների քննադատության, դրանց գաղափարների մերժման խնդիրը լուծեց Եզնիկ Կողբացին իր «Եղծ աղանդոց» աշխատությամբ:

Այս պատկերացումների հիման վրա Հայոց եկեղեցին քրիստոնեական արժեհամակարգի շրջանակներում առանձնացրեց «մենք» և «մեր հարևանները», մշակեց նրանց հետ վարվելիք հարաբերությունների ձևերն ու սկզբունքները:

Արժեքային համակարգի հիման վրա հասարակությունը մշակում է արտաքին վտանգին դիմակայելու և այն հաղթահարելու մեխանիզմներ: Ազգային արժեքային համակարգը ներառում է տեղեկություններ ոչ միայն սպասվող վտանգի ձևի (ռազմաքաղաքական, կրոնական, գաղափարախոսական, մշակութային և այլն), այլև այն հաղթահարելու ուղիների մասին:

Այսպիսով՝ հայ գործիչները կարողացան ստեղծել միասնական հավատ, ազգային գիր ու գրականություն, հասարակական կյանքի կազմակերպման միասնական ձևեր ու սկզբունքներ: Այս արժեքների հիման վրա ձևավորվեց ազգային-հոգևոր այնպիսի նկարագիր, որը խիստ անհրաժեշտ էր արտաքին աշխարհի հետ մշտապես քաղաքական և մշակութային առճակատման մեջ գտնվող հայ հասարակությանը:

Հայկական էթնիկական ընդհանրության նույնականությունը պահպանելու համար հայկական մշակույթը, հենվելով նոր արժեհամակարգի վրա, առանձնացավ ընդհանուր քրիստոնեական մշակույթից և ձևավորվեց որպես քրիստոնեական ազգային մշակույթ:

Ազգային եկեղեցական կյանքի կազմակերպման ձևերն ու սկզբունքները

Հայաստանում քրիստոնեության՝ պետական կրոն ընդունումից հետո քրիստոնեական վարդապետությունը (ուսմունքը), Հայոց եկեղեցու դավանանքը, խորհրդանիշները դարձան հայ ժողովրդի ազգային գաղափարախոսության, ինքնահաստատման հզոր կոմպանները: Ի տարբերություն հեթանոսական կրոնի՝ քրիստոնեական վարդապետությունը մարդուն հոչակեց արարչագործության թագն ու պսակը և հոգևոր-բարոյական կատարելության ուղին սահմանեց որպես մարդու երկրային կյանքի առաքելություն:

Հայոց եկեղեցու առջև դրվում են երկու կարևորագույն խնդիրներ. նախ՝ ուսուցանել քրիստոնեական վարդապետությունը Մեծ Հայքի ողջ տարածքում, նոր քրիստոնեական ուսմունքից բխող հարաբերություններ և սկզբունքներ ներդնել երկրի վարչաքաղաքական համակարգում, մյուս կողմից՝ այնպես կազմակերպել փոփոխությունները, որ դրանք հասարակության համար անշրջելի բնույթ ստանան: Այս նպատակով



Էջմիածնի Մայր տաճարը

Հայոց եկեղեցին իր վրա է վերցնում հոգևոր-մշակութային կյանքի կազմակերպման հիմնական ձևերի, սկզբունքների մշակման խնդիրը:

Ազգային եկեղեցական կյանքի կազմակերպումը

Յուրաքանչյուր կազմավորված հասարակություն՝ որպես մեկ ընդհանուր համակարգ, բաղկացած է մի քանի՝ տնտեսական, քաղաքական, մշակութային և այլ ենթահամակարգերից: Յուրաքանչյուր ենթահամակարգ, ինչպես այժմ, այնպես էլ նախկինում մյուսից տարբերվում էր իրեն բնորոշ առանձնահատկություններով, հիմնախնդիրներով, նպատակներով, ուղղվածությամբ, արժեքների նկատմամբ ունեցած դիրքորոշումով: Հայոց եկեղեցին կարողացավ գտնել հասարակական կյանքի կազմակերպման այնպիսի ձևեր և սկզբունքներ, որոնք այս կամ այն չափով ընդունելի էին բոլոր կողմերի համար:

Եկեղեցին կարճ ժամանակում սերտաճեց քաղաքացիական համայնքի հետ և հասարակության հոգևոր ու աշխարհիկ կյանքի կազմակերպման գործում ստանձնեց ամենաակտիվ դերակատարությունը: Յուրաքանչյուր համայնքում գոյություն ունեին եկեղեցի և հոգևորական-պաշտոնյա, կազմակերպվում էին աստվածաշնչյան ուսուցումներ, տոնական և ծիսական արարողություններ, բացվում էին դպրոցներ և այլն:

Եթե հեթանոսական տաճարները համարվում էին աստվածների բնակատեղիներ, և այնտեղ միայն քրմերն էին մուտք գործում, ապա քրիստոնեական տաճարների դռները բաց էին բոլոր հավատացյալների համար:

Բնակչության հասարակական-եկեղեցական կյանքը կազմակերպելու համար Հայոց եկեղեցին քրիստոնեության շրջանակներում ընդգրկեց գոյություն ունեցող ազգային սովորույթների, ավանդույթների, տոնակատարությունների այն մասը, որը չէր հակասում քրիստոնյայի բարոյական նկարագրին, քրիստոնեական գաղափարախոսությանը:

Հասարակական-եկեղեցական կյանքի կազմակերպման հայկական մոդելը աշխատում էր, իսկ հաճախ նաև ստիպված էր լինում իր գործունեության մեջ ներառել հասարակական, պետական, քաղա-

քական, մշակութային, մի խոսքով՝ ազգային բոլոր հիմնախնդիրները: Այսինքն՝ եկեղեցին և ժողովուրդը միաձուլվել և դարձել էին մեկ ամբողջություն:

Պետականության բացակայության պայմաններում բնակչության աշխարհիկ կյանքի կազմակերպման մի շարք հիմնախնդիրներ ևս անցան եկեղեցուն:

Պատմական դեպքերի բերումով հայ հասարակության զգալի մասը բնակություն էր հաստատել Հայաստանից դուրս: Ստեղծվել էր մի իրավիճակ, երբ ազգի տարբեր հատվածների միջև բացակայում էին տարածասահմանային շփումները, ուստի էթնո-քաղաքական և մշակութային տարբեր միջավայրերում հայտնված հայ բնակչության էթնիկ նույնականությունը պահպանելու համար եկեղեցական կյանքի կազմակերպումը կարևոր նշանակություն ուներ: Հայության տարբեր հատվածների ազգային, հասարակական, եկեղեցական կյանքի կազմակերպման, հայրենիքի հետ կապի խնդիրները նույնպես լուծում էր Հայոց եկեղեցին: Հասարակական-եկեղեցական կյանքին մասնակցելու ժամանակ էր անհատը առավել հստակ գիտակցում իր ազգային-դավանական պատկանելությունը: Այս հանգամանքը շատ կարևոր էր, որովհետև պետականության բացակայության պայմաններում հասարակական-եկեղեցական կյանքի կազմակերպման գործընթացում կատարված յուրաքանչյուր շեղում վտանգում էր ազգի էթնիկական նույնականությունը:

Հասարակական-եկեղեցական կյանքի կազմակերպումը կարելի է ստորաբաժանել երկու՝ տեսական (գաղափարական) և գործնական (պրակտիկ) բնագավառների: Առաջինում մշակվում էին հասարակական-եկեղեցական կյանքի կազմակերպման համար անհրաժեշտ կանոնները և սկզբունքները: Այս բնագավառը ուներ կենտրոնի կարգավիճակ՝ ոչ միայն որպես որոշակի գաղափարների հավաքատեղի, այլև կառուցվածքային առումով: Հայ հասարակության եկեղեցական կյանքի կազմակերպման համահայկական կենտրոնի կարգավիճակի դերը սովորաբար ստանձնում էր հայոց կաթողիկոսությունը, որը համահայկական հոգևոր-մշակութային, իսկ պետականության բացակայության ժամանակ նաև քաղաքական կենտրոն էր: Վերջինս համահայկական խնդիրները քննարկելու

և լուծումներ գտնելու նպատակով պարբերաբար հրավիրում էր ազգային եկեղեցական ժողովներ:

Միաժամանակ գործում էին նաև մի շարք վարդապետարան-համալսարաններ, վանքեր, որոնք առանձին դեպքերում այս կամ այն հարցի առնչությամբ կարող էին ունենալ վճռորոշ դերակատարություն (օրինակ՝ միարարական շարժման ժամանակ տեղի ունեցած դեպքերը և այլն):

Գործնական բնագավառում կենսագործվում էին կենտրոնի մշակած գաղափարները, որոնք կարելի է բաժանել երկու կարգի՝ համաքրիստոնեական և հայկական: Առաջին խմբի մեջ մտնում էին հասարակական-եկեղեցական կյանքի կազմակերպման այն սկզբունքները, որոնք ընդհանուր էին քրիստոնեական բոլոր ուղղությունների համար: Համաքրիստոնեական սկզբունքներից Հայոց եկեղեցու համար ընդունելի էին առաքելական կանոնները, առաջին երեք տիեզերական (325 թ. Նիկիայի, 381 թ. Կոստանդնուպոլսի, 431 թ. Եփեսոսի) և մի շարք տեղական ժողովների կանոնները:

Երկրորդ խումբը ներառում էր այն ամենը, ինչը տիպական էր միայն հայ հասարակությանը:

Արդեն VIII դ. փորձ արվեց համակարգելու ընդունված համաքրիստոնեական և հայկական կանոնները: Այս խնդրի լուծումը հայ հասարակության համար դարձել էր պատմական անհրաժեշտություն, քանզի Հայաստանի մեծ մասը գտնվում էր Արաբական խալիֆայության տիրապետության տակ, իսկ մյուս մասը տնօրինում էր Բյուզանդիան: Երկու հատվածներում էլ հայ հասարակության նույնականությունը վտանգված էր, քանզի և իսլամը, և հունական եկեղեցին փորձում էին հայության մեջ ներդնել հասարակական կյանքի կազմակերպման իրենց ձևերն ու սկզբունքները: Մյուս կողմից՝ դա ուղղված էր պավլիկյան աղանդավորական շարժման գաղափարախոսության դեմ, որը կարող էր պառակտել ժողովրդի միասնությունը: Այս պայմաններում կազմվեց «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն, որը հետագայում անընդհատ լրացվում էր նոր կանոններով:

Հայոց եկեղեցին ի վերջո ստեղծեց ազգային եկեղեցական սեփական համակարգ: Այդ համակարգը, հենվելով քրիստոնեական ազգային արժեհամակարգի վրա, անցնելով հայրուրամյակների փորձություններով, կարողացավ պահպանել հայոց ազգային-հոգևոր նկարագիրը և այժմ էլ շարունակում է իր պատմական առաքելությունը:

Ազգային-հոգևոր նկարագրի ձևավորման գործընթացը

Քրիստոնեական ազգային արժեհամակարգի ձևավորմանը զուգընթաց ձևավորվում էր նաև հայերի ազգային-հոգևոր նկարագիրը (ազգային-հոգևոր նկարագիրը յուրահատուկ համակարգ է, որում խտացված են տվյալ էթնիկ ընդհանրությունը բնորոշ լեզվական, դավանական, հոգեբանական, մշակութային, ընտանեկան-կենցաղային և այլ հատկանիշներ): Այդ



Խոր վիրասպ

գործընթացը բաղկացած է միմյանց հետ սերտորեն փոխկապակցված երեք՝ տեսական, գործնական և սոցիոլոգիական (ընկերաբանական) մասերից: Առաջինի մեջ մտնում են ազգային-հոգևոր նկարագրի անբաժան մաս կազմող գաղափարախոսությունը, պատկերացումները, խորհրդանիշները: Գործնական մասը ներառում է այդ գաղափարների կենսագործումը և վերարտադրությունը, որոնք հիմնականում իրականացվում են կրթության, դաստիարակության, ծեսերի ու սովորույթների միջոցով: Սոցիոլոգիական մասը ներառում է այն միջավայրը, որտեղ դրանք կատարվում են, և այն կառույցները, որոնք իրագործում են դրանք: Այդ միջավայրերն են տունը, եկեղեցին, ուսումնական հաստատությունները և այլն:

Արժեհամակարգի ձևավորման գործընթացը տեղի էր ունենում հասարակական կյանքի բոլոր՝ քաղաքական, սոցիալ-տնտեսական, հոգևոր և մշակութային բնագավառներում, ժամանակ առ ժամանակ փոփոխվող արտաքին միջավայրի պայմաններում, ուստի ազգային-հոգևոր նկարագիրը բազմաշերտ կառուցվածք ունի:

Ազգային-հոգևոր կենտրոնի խնդիրն էր պահպանել էթնիկական նույնականությունը և թույլ չտալ վտանգավոր ձևախախտումներ: Այս հանգամանքը առանձնակի կարևորություն էր ստանում պետականության բացակայության ժամանակ, երբ հայությունը գրկվում էր քաղաքական կենտրոնից և կազմակերպվում որպես մշակութային կենտրոն հասարակություն, կամ այն ժամանակ, երբ հայ ժողովրդի մի մասը բնակություն էր հաստատում պատմական հայրենիքից դուրս: Անհրաժեշտություն էր առաջանում հասարակության հիշողության մեջ պահպանելու այն արժեքները, որոնք նա պատմական հանգամանքների բերումով կորցրել էր, սակայն դրանց վերականգնումը պատմական անհրաժեշտություն էր: Օրինակ՝ ուշ միջնադարում հոգևոր ազգային միտքը իրականացրեց անկախ պետականության գաղափարի վերականգնումը հասարակական գիտակցության մեջ:

Ազգային-հոգևոր նկարագրի կառուցվածքը

Ազգային-հոգևոր նկարագրի հատկանիշների ձևավորման վրա առավել մեծ է ազգային հոգեբանության, հավատի, լեզվի, բնակլիմայական պայմանների և ավանդական գիտակցության ազդեցությունը:

Հասարակության տնտեսական զբաղմունքի տեսակները, կենցաղը, որոշ սովորույթների ձևավորումը հաճախ պայմանավորվում են աշխարհագրական միջավայրով: Այն որոշակի ազդեցություն է թողնում նկարագրի ձևավորման վրա: Աշխարհագրական միջավայրի որոշ բաղադրատարրեր, կապված տվյալ ժողովրդի կյանքում բախտորոշ նշանակություն ունեցած դերի հետ, դառնում են այդ ժողովրդի հոգևոր պատկանելության խորհրդանիշներ: Օրինակ՝ հայ հասարակության համար նման խորհրդանիշների դեր են կատարում Արարատ լեռը, Արածանի և Արաքս գետերը: Միջավայրը ներագրում է նաև

հասարակության պատմական ընթացքի վրա: Միջավայրը մեծ նշանակություն ունի նաև արտաքին աշխարհի հետ այդ էթնոսի հարաբերությունների ձևի առաջացման առումով: Հոգևոր նկարագրի ձևավորման վրա մեծ ազդեցություն է թողնում նաև այն հանգամանքը, թե էթնիկ ընդհանրության զբաղեցրած տարածքը ինչ հաճախականությամբ է ենթարկվում թշնամական հարձակումների, և ովքեր են նրա հարևանները: Հայոց պատմության ընթացքից հայտնի է, թե ինչ ուժերի կողմից է հարձակումների ու ներխուժումների ենթարկվել Հայաստանը տարբեր ժամանակաշրջաններում, և որ ժողովուրդներն են եղել հայերի հարևանները: Բացի այդ՝ հայության տարբեր հատվածներ տարբեր պատճառներով հայտնվում էին հայրենիքից դուրս՝ նոր միջավայրում, որտեղ ստեղծվում էին հայկական իշխանություններ, թագավորություն (Կիլիկիա), գաղթավայրեր:

Յուրաքանչյուր հասարակություն սովորաբար բաղկացած է մարդկանց տարբեր խմբերից, որոնք ունեն ավանդական գիտակցության տարբեր տեսակներ: Հասարակության մեջ դրանց առկայությունը միշտ անհրաժեշտ է, որպեսզի արտաքին վտանգի դեպքում այդ հասարակությունն ունենա պաշտպանական մեխանիզմների մի քանի տարբերակներ: Օրինակ՝ VII-VIII դարերում արաբական տիրապետությունից հայ ժողովրդի ազատագրման ուղիների վերաբերյալ հայ հասարակության մեջ կային երկու մոտեցումներ. Մամիկոնյան նախարարները գտնում էին, որ դա հնարավոր է իրականացնել զինված ապստամբության միջոցով և որքան հնարավոր է արագ, իսկ Բագրատունիները և Հայոց եկեղեցին նախապատվությունը տալիս էին դիվանագիտական մարտավարությանը: Այս դիրքորոշումները հայ ազգային-քաղաքական մտքի մեջ պահպանված ավանդական մտածողության դրսևորումներ էին: Տվյալ դեպքում Մամիկոնյանները հանդես էին գալիս որպես մարտական և ռազմական մտածողության կրողներ, իսկ Բագրատունիները՝ քաղաքական-դիվանագիտական:

Այս ճանապարհով հասարակությունն անընդհատ կատարելագործում է ավանդական պատկերացումները, որպեսզի վերափոխված իրականության վերաբերյալ ճշգրիտ պատկերացումներ ունենա: Փոխվում էր թշնամին կամ նրա գործելակերպը, ուստի անհրաժեշտություն էր առաջանում պայքարի նոր ձևեր ընտրելու: Օրինակ՝ Բյուզանդական կայսրությունը փորձում էր քաղկեդոնականություն պարտադրել, կամ սասպարեզ էին գալիս տարբեր աղանդավորական շարժումներ: Անհրաժեշտ էր ընտրել պայքարի համապատասխան ձևեր:

Ազգային-հոգևոր նկարագիրը ձևավորող ամենակարևոր հատկանիշներից է լեզուն: Յուրաքանչյուր ժողովուրդ իր մշակույթը ստեղծում, պահպանում և փոխանցում է լեզվի միջոցով: Հայոց այբուբենի ստեղծումից քիչ անց հայ հոգևոր, քաղաքական գործիչները ձեռնամուխ եղան հայերենով հայոց պատմության շարադրմանը: Հայոց նորաստեղծ գրերը դառնում են ազգային ինքնության պատմական

հիմքերն ուսումնասիրելու և ի հայտ բերելու միջոց: Այս գործընթացը ժամանակի ընթացքում ընդհատումներ չի ունեցել, ինչի հետևանքով ձևավորվում է հայկական պատմագիտական դպրոցը:

Ազգային-հոգևոր նկարագրի ձևավորման գործընթացում մեծ է նաև հավատի նշանակությունը: Այս նպատակով ստեղծվում է կրթադաստիարակչական համապատասխան համակարգ՝ ուսումնական հաստատություններ, դպրոց, համալսարան, մշակվում են աշխարհայացքային և գաղափարական դրոյթներ ու տեսակետներ: Սա առավել կարևորվում էր հայ հասարակության համար, քանզի պետականության բացակայության պայմաններում այս խնդիրներով հիմնականում զբաղվում էր Հայոց եկեղեցին: Օրինակ՝ Գրիգոր Տաթևացին այդ նպատակով գրեց «Գիրք հարցմանց», «Ամարան հատոր», «Ձմերան հատոր» երկասիրությունները: Ստեղծվում էին դպրոցներ, որոնք մասնագիտանում էին հոգևոր պատրաստության այս կամ այն ուղղությամբ: Մյուսիքում ձևավորվել էր քերթողական, մեկնողական գործի բազմամիուս դպրոց:

Հայոց եկեղեցին, փաստորեն, ազգային-հոգևոր նկարագրի կարևորագույն հատկանիշներից մեկը դարձրեց հավատը (դավանանքը):

Հոգևոր նկարագրի ձևավորման ժամանակ կարևորագույն դեր են խաղում նաև էթնիկական հոգեբանության որոշ հատկանիշներ, երբ անհատը հոգեբանական տեսանկյունից գիտակցում է իր պատկանելությունը «մենք» հանրությանը և աշխատում է յուրացնել նրան բնորոշ հատկանիշները: Յուրաքանչյուր ժողովուրդ ունի իրեն բնորոշ հոգեբանություն, որը փոխանցվում է մշակութային ժառանգության յուրացման ճանապարհով: Այս պատճառով ազգային-հոգևոր նկարագրի ձևավորման գործընթացը տրոհվում է ընտանեկան և հասարակական միջավայրերում: Մրանցից յուրաքանչյուրն ունի կրթադաստիարակչական, ծիսական, ավանդական կանոնակարգված սկզբունքներ ու նորմեր, որոնք դրվում էին մարդու ազգային-հոգևոր նկարագրի ձևավորման հիմքում:

Ազգային-հոգևոր նկարագրի բաղադրատարրերից են ընտանիքի ձևավորման սկզբունքները, սովորույթները, կենցաղը: Հոգևոր նկարագրի ամբողջացման մեջ զգալի դեր են խաղում հարսանեկան, ծննդյան, թաղման սովորույթները և ծեսերը: Սովորույթները պարզ ու կոնկրետ իրավիճակներում անհատի առօրյա կյանքը կարգավորող վարվելակերպի նորմեր են: Ծեսերը խորհուրդ պարունակող արարողություններ ու գործողություններ են, որոնք վարվեցողության կարգավորման առավել բարդ ու խիստ ձևերն են: Հասարակության սովորութային և ծիսական կյանքը սովորաբար կազմակերպվում էր երեք՝ տուն, եկեղեցի, համայնք, միջավայրերում:

Ծիսական կյանքի կազմակերպումը հիմնականում գտնվում է եկեղեցու ձեռքում:

Հայաստանում քրիստոնեության տարածման և հաստատման ժամանակ որոշակի փոփոխություններ

տեղի ունեցան նաև ծեսերում և սովորույթներում: Նախ՝ քրիստոնեությունն իր հետ բերեց և ստեղծեց նոր ծեսեր, տոներ (Թարգմանչաց տոն, Վարդանանց տոն և այլն) ու սովորույթներ և դանդաղորեն դրանք ներդրեց հասարակության գիտակցության մեջ: Մյուս կողմից՝ այն որդեգրեց արդեն ավանդույթ դարձած որոշ ծեսեր և սովորույթներ, թույլատրեց դրանց կատարումը, սակայն դրանց տրվեց նոր բովանդակություն:

Ազգային-հոգևոր նկարագրի կառուցվածքում կարևոր տեղ են զբաղեցնում նաև տնտեսական-մշակութային հատկանիշները, մասնավորապես՝ կենսաձևը (ստուսկյաց, կիսաքոչվորական) և աշխատանքի գործիքները: Դարեր շարունակ հիմնականում հողագործությամբ զբաղվող հայ շինականի համար մեծ նշանակություն է ունեցել գութանը, որին նվիրվել են երգեր և այլն:

Հոգևոր նկարագրի հատկանիշների ամբողջացման շարքում ուրույն տեղ են զբաղեցնում նաև կենցաղային հատկանիշները՝ բնակարանը, հագուստը, սնունդը, ինչպես նաև վարվելակերպի նորմերը:

Այսպիսով՝ ազգային-հոգևոր նկարագիրն ամբողջանում և ավարտուն տեսք է ստանում մշակութային, մասնավորապես՝ լեզվական, դավանական, հոգեբանական, ընտանեկան, կենցաղային որոշակի հատկանիշների հիման վրա: Յուրաքանչյուր ժողովուրդի հոգևոր նկարագրի, ազգային տարատեսակի հիմնական հատկանիշներն արտահայտվում են մշակույթի բնագավառում, ուստի այնտեղ կենտրոնացված են մյուս մշակույթների համեմատությամբ ունեցած տարբերակիչ առանձնահատկությունները: ■



Գրիգոր Խանջյան - Հայոց այրուքներ

Հայեցակարգային հակասություններ կամ հայագիտության «հինգերորդ շարասյունը» (մաս 2-րդ)

Վարդան Պետրոսյան

ԵՊՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ

Լինելով իր ժամանակի առաջադեմ գիտնականներից մեկը և իր աշխատություններում ամփոփելով ժամանակի գիտական նորույթը՝ Ն. Ադոնցը խորապես ըմբռնել է, որ դեռևս շատ են հին աշխարհի պատմության մութ ծալքերը, և ապագան կարող է նոր անակնկալներ մատուցել՝ ընդհուպ փոխելով պատմագիտության (և ոչ միայն) վեկտորները: Այդ առումով նա մեծ նշանակություն է տվել հնագիտական հնարավոր բացահայտումներին (հմմտ. «Հողն իր ընդերքում դեռևս շատ անկանխատեսելի անակնկալներ է թաքցնում»¹): Չնայած որ Ն. Ադոնցը հետևողականորեն փորձում է սահմանագատել ուրարտական ու հայկական քաղաքակրթությունների շերտերը, բայց և այնպես, նա հակված չէ՝ 1) ուրարտացիներին նույնացնելու տարածաշրջանի որևէ այլ ժողովրդի հետ, 2) մերժում է ուրարտական արձանագրությունների լեզվի հետ կովկասյան լեզուների, մասնավորապես՝ վրացերենի ծագումնաբանական ընդհանրություններ ցույց տալու փորձերը (հմմտ. «Շատ գիտնականներ տեսականորեն ընդունել են վրացերենի հնարավոր ազգակցությունը ուրարտերենի հետ: Սակայն այդ տեսակետը մեկնաբանելու ուղղությամբ թափված ջանքերը ծանրակշիռ չեն և գուրկ են լեզվաբանական հետաքրքրությունից»)²: Այդ դիտարկումով մեծ գիտնականը փորձում է կանխել Ուրարտուի պատմության և ուրարտական քաղաքակրթության յուրացման նկրտումները տարածաշրջանի ժողովուրդների կողմից, սակայն, ինչպես որ պատմության մեջ վակուում չի լինում, այնպես էլ պատմագիտության մեջ: Իսկ եթե ինչ-որ պատճառով այդպիսի բաց է գոյանում, այդ բացը լցնելու փորձերը չեն ուշանում: Ըստ էության, ակադեմիական հայագիտության անվճռականությունը հնարավորություն տվեց, որպեսզի Ուրարտուի շուրջ գոյացած գիտական վակուումը հոգուտ կովկասյան ժողովուրդների լցնելու փորձեր կատարվեն: Ուրարտերենի և իբերակովկասյան լեզուների, այդ թվում՝ վրացերենի միջև հնարավոր ցեղակցության մասին կարծիքները՝ ուղղակի, թե անուղղակի, իրենց երկար սպասեցնել չտվին՝ օգտագործելով նաև խոտի-ուրարտական հնարավոր ցեղակցության վարկածը: Ասենք, որ խոտի-ուրարտական ծագումնաբանական կապի մասին սկսում են խոսել խոտիերեն տեքստերի հայտնաբերումից կարճ ժամանակ անց³, բայց կովկասյան լեզուների հետ դրանց հնարավոր ցեղակցական կապի մասին դատողությունները հնչում են 1950-ականներից հետո⁴:

Ըստ Ն. Ադոնցի՝ միանշանակ է, որ հայ ժողովուրդն է ուրարտական քաղաքակրթության ժառանգորդը: Ինչպես տեսանք, այդ վճռական համոզումն ունեին



նաև հայ ժողովրդի պատմության 1-ին հատորի հեղինակները, այդ թվում՝ Ս. Երեմյանն ու Գ. Սարգսյանը, բայց այդքանն այլևս բավարար չէր հարցը լուծված համարելու համար, որովհետև օտարները վաղուց մեծ քայլերով առաջ էին անցել՝ շրջանցելով ակադեմիական հայագիտության այդօրինակ զգուշավոր ձևակերպումները և ակնհայտորեն փորձելով յուրացնել այն, որի իրավատերը պատմականորեն հայ ժողովուրդն է:

Բեհիսթունի ժայռափոր արձանագրությունը Ուրարտուի հայկականության պատմալեզվաբանական շատ արժեքավոր վկայություն է: Պատմագիտական տեսանկյունից այն արժեքավոր է արադական «Uraštu/Urartu»-ի և իրանական «Armina/Arminia»-ի նույնականության, իսկ լեզվաբանական տեսանկյունից՝ Uraštu/Urartu>Ararat համարժեքության հաստատման առումներով: Հայտնի է, որ ձայնդարձը (ձայնավորների հերթագայությունը), այդ թվում՝ [u//a] (ու//ա), և հնչյունների դրափոխությունը (հմմտ. tu↔ut (>at)) լեզուների պատմական հնչյունափոխության սովորական դրսևորումներ են (հմմտ. *տուն-տան*, *շուն-շան*, նաև՝ հակառակը՝ *տալիս եմ*)-*եյու* «տվեցի»-*տուր* «տուր» ևն, *դգալ-գդալ*, *խարոր-սխարոր* ևն): Բայց հասկանալի է նաև, որ այդքանը բավարար չէ «ուրարտերեն» կոչված լեզվի՝ հայերենի հետ նույնացման, ավելի ճիշտ՝ ուրարտերենը նախագրային հայերենի փուլերից մեկը համարելու համար, հատկապես երբ կան այդ լեզվով պահպանված տեքստեր՝ սեպագիր արձանագրությունները: Իրավիճակն այլ կլիներ, եթե տվյալ լեզվով պահպանված գրություններ

չինեին, ինչպիսին որ է Արատտայի բնակչության լեզվի դեպքում⁵: Ըստ այդմ, ունենք մի իրավիճակ, երբ հոգուտ **Ուրարտու-Հայաստան, ուրարտացի-հայ** նույնականության վկայող մարդաբանական (*արմենոիդ* տիպին պատկանելը), հնագիտական (տների կառուցման, գերեզմանում հանգուցյալին նստած դիրքով հուղարկավորելու միևնույն սկզբունքները ուրարտական և հայկական համարվող դամբարանադաշտերում) և մշակաթուրանական (նույնատիպ արհեստագործական գործիքները և այլն) տվյալների առկայության պայմաններում լեզվական տվյալների՝ հայերենով դժվար վերծանելիությունը հիմք է տվել Ուրարտուի և ուրարտացու հայկականությունը մերժելու կամ առնվազն հարցականի ենթարկելու համար: Այս հարցում նախ՝ պիտի տարբերակել երկու երևույթ՝ էթնիկական հանրության խոսակցական լեզուն՝ մի կողմից և սեպագրերում կիրառված գրության լեզուն՝ մյուս կողմից: Դրանք կարող էին և՛ նույնը լինել, և՛ չլինել: Հայտնի է, որ ուրարտական թագավորների առաջին արձանագրությունները գրվել են ասուրական սեպագրերով, իսկ սեպագրերի սեփական համակարգը ուրարտացիները համեմատաբար ուշ են ստեղծել: Եթե մի կողմից՝ նկատի առնենք, որ մինչև մ.թ.ա. 1-ին հազարամյակի կեսերը փոքրասիական ժողովուրդներից քչերն ունեին սեփական գիր, իսկ եղածների մեջ էլ միայն որոշներն էին բարձր հեղինակություն վայելում տարածաշրջանի ժողովուրդների մոտ (օր.՝ աքադականը, ապա՝ ասուրականն ու արամեականը), մյուս կողմից էլ՝ այն, որ արձանագրությունների հեղինակները կարող էին դրանց բովանդակությունը օտարների համար մատչելի դարձնելու նպատակով դիմել հաղորդակցության ընդհանուր միջոցի օգնությանը, ուրեմն ուրարտական արձանագրությունների ոչ միայն գրության համակարգը, այլև լեզուն կարող էր օտար լինել: Օր., Արտաշես Ա-ի ժամանակ արքունի դիվանի լեզուն արամեերենն էր⁶, որը կարող էր ունենալ երկու պատճառ. 1) այդ ժամանակ դեռևս չկար հայկական գիր, 2) իսկ եթե կար, ուրեմն չունեի տարածաշրջանային ճանաչում: Կամ քրիստոնեության ընդունումից հետո՝ մինչև մեսրոպյան գրերի գյուտը, եկեղեցական արարողությունները Հայաստանում կատարվել են հունարենով և ասորերենով: Սակայն ուրարտերենի դեպքում, ըստ ամենայնի, գործ ունենք Վանի թագավորության (= Ուրարտուի) բուն բնակչության լեզվի հետ:

Իրականությունն այն է, որ ուրարտական արձանագրությունների լեզուն, այսինքն՝ ուրարտերենը ևս մեկնելի է հայերենով: Եվ ավելի մեծ արժանահավատությամբ, քան որևէ այլ լեզվով:

Նկատի ունենալով, որ գործ ունենք ընթերցողների հիմնականում ոչ մասնագիտական շրջանակի հետ, որին այդպիսի խրթին հիմնահարցի լեզվաբանական քննությամբ ծանրաբեռնելը ճիշտ չի լինի, մենք կբավարարվենք միայն որոշ նկատառումների



Գևորգ Զահնուկյան

շարադրանքով:

1) Ուրարտական արձանագրությունների լեզուն ընդհանուր առմամբ միօրինակ է ոչ միայն սահմանափակ բառապաշարի առումով, այլև՝ լեզվաոճական: Դրանք գրված են նախադասության կառուցման միատեսակ կաղապարներով և միանման երևույթների մասին: Այլ կերպ ասած՝ գրված են այսպես կոչված «անեծքի բանաձևերի» սկզբունքով: Արձանագրությունների լեզվում նկատելի տարբերությունները, որոնք կարող են բացատրվել բարբառային տարբեր հիմքերով, էական չեն: Սակայն պիտի նկատի ունենալ, որ այդ արձանագրությունները գրվել են ավելի քան 200 տարվա ընթացքում, երբ Բիայնայի բնակչության լեզվում, այնուամենայնիվ, տեղաշարժերն անխուսափելի էին պայմանավորված ինչպես ներլեզվական օրինաչափություններով, այնպես էլ արտաքին գործոնների ազդեցությամբ (հաճախակի կրկնվող պատերազմների հետևանքով տարբեր լեզուների հնարավոր փոխազդեցության դրսևորումները): Դա նշանակում է, որ, անկախ բանավոր խոսքի կրած փոփոխություններից, արձանագրություններում կիրառվել է լեզվական միևնույն կաղապարը, որովհետև արձանագրությունները, որպես կանոն, վերաբերում են երկու երևույթի՝ թագավորների նվաճողական պատերազմներին և տնտեսական կարևոր ձեռնարկումներին:

2) Գ. Զահնուկյանի «Ուրարտերենը և հնդեվրոպական լեզուները» գրքի բառացանկի հիման վրա մեր կատարած հաշվումների համաձայն՝ «ուրարտերեն-հ.-ե. լեզուներ» համապատասխանությունները կազմում են շուրջ 214 բառ և արմատ (այսինքն՝ 350 բառ-արմատի կեսից ավելին⁷, ավելի ստույգ՝ ≈1,63-ը), որոնց մոտ 1/5-ը (44 բառ) ունեն հայերեն համապատասխաններ (հմմտ. ուրարտ. /խոտ.) ag- «տանել, անցկացնել» - հ.-ե. *ag-, hj. ած-եմ «բերել, տեղափոխել», ուրարտ. armuzi «ընտանիք (?)» (<հ.-ե. *or-m- / *er-mo-), հմմտ. hj. արմ «արմատ», արմատ «արմատ, ցեղ, սերունդ», գ-արմ «ցեղ, սերունդ», ուրարտ. bauše «բառ, հրաման. իր,

առարկա» (<հ.-ե. *bhā-u-) - հյ. **բան** «բառ, խոսք. իր, առարկա», - ուրարտ. gunuše «ճակատամարտ, կռիվ, ընդհարում» (gunušini «զինվորական, մարտական») (<հ.-ե. *g^hhono-s-,) - հյ. **գան** (<*g^hhən-) «ծեծ, գանահարություն», - ուրարտ. burgana «բերդ, ամրոց» - հյ. **բուրգան**, - ուրարտ. te-ae «մեծ» («շատ»?) - հյ. ***տե, տի-** (*տի-եզերք, տի-կին, տի-այր* > *տեր* բառերում), - ուրարտ. ulu(ni) «ուղտ» - հյ. (ult>) **ուղտ** (-ու), - ուրարտ. garini «բերդ, ամրոց» (որտեղից էլ՝ Giarniani- **Գառնի** բառերը և այլն: Եթե նկատի ունենանք, որ դեռևս նախորդ դարի սկզբներին հայերենի ստուգաբանված հ.-ե. բառաշերտը կազմում էր հ.-ե. նախալեզվի վերականգնված բառապաշարի շուրջ 1/3-ը՝ 713 արմատ՝ հ.-ե. 2223-ի դիմաց⁸, և դա խոչընդոտ չէր, որպեսզի հայոց լեզվի հնդեվրոպական բնույթը հարցականի տակ չդրվեր, կարծում ենք՝ ընդամենը 350 բառ-արմատից կազմված ցանկի 1/5-ի հայկականությունը հաստատվելու դեպքում նույնպես այդպիսի խնդիր պիտի չծագի: Իսկ եթե հաշվի առնենք, որ դեռևս ստուգաբանված չէ հայերենի մոտ 2500 բառարմատ⁹, և մեծ է հավանականությունը, որ ստուգաբանվելու պարագայում այդ բառերի մի մասը կարող է ծագումնաբանական կապ չի հայտ բերել ուրարտական արձանագրությունների բառապաշարի հետ, առնվազն բառային մակարդակում ավելի կմեծանա հայերենի և «ուրարտերեն» կոչված լեզվի ծագումնաբանական ընդհանրության հավանականությունը:

3) Հին հայերենն ուներ գրեթե բոլոր ձայնավոր և բաղաձայն հնչույթները, որոնք տարբերակվում են նաև ուրարտերենում, բացառությամբ վերջինի կոկորդային-հպական (glottalized / смычногортанный կամ абруптив) p՝, *ցերեբրալ* (cerebral / церебральный)¹⁰ t-ի և s-ի¹¹: Գամկրելիձեն *կոկորդային-հպականների* (իր տերմինով՝ *կարկային / глоттальный*)՝ որպես հպական հնչույթների առանձին դաս է վերագրել հին հայերենին¹², որը, սակայն, վիճելի դրույթ է¹³: Ինչ վերաբերում է *ցերեբրալ* հնչույթներին, պիտի նշել, որ այդպիսիք գրաբարյան հայերենում չեն եղել, բայց դա չի նշանակում, որ հնչյունական մակարդակում չէին էլ կարող լինել նախագրային հայերենի ինչ-որ փուլում: Մյուս կողմից, հազիվ թե կարելի է վստահությամբ պնդել, որ ուրարտերենում այդ միավորներն ունեցել են հնչույթային արժեք: Ավելի հավանական է, որ ցերեբրալները, համապատասխանաբար, հպական (ատամնային) t (տ)-ի և շփական s (ս)-ի դիրքային՝ հնչյունական տարբերակներն էին և այդ հատկանիշից զրկվել են նախքան 5-րդ դարը: Ճիշտ է, հին հայերենն ուներ 36 պարզ հնչույթ (երկբարբառների և եռբարբառների հետ միասին այդ թիվը գերազանցում է 50-ը¹⁴)՝ ուրարտերենի 26/(27)-ի դիմաց, բայց պարզ հնչույթների կազմով կովկասյան, մասնավորապես՝ նախողաղստանյան լեզուները, որոնց և ուրարտերենի միջև ցեղակցական կապեր են փնտրում այդ տեսության կողմնակիցները, ավելի հարուստ են: Իբերակովկասյան լեզվաընտանիքի նախողաղստանյան ճյուղի լեզուներում ուսում-

նասիրողները հաշվում են 3-10 ձայնավոր և 35-45 բաղաձայն, իսկ առանձին լեզուներում՝ մինչև 15-20 ձայնավոր¹⁵: Խոսքը միայն պարզ հնչույթների մասին է: Իհարկե, նախյան լեզուներին բնորոշ են նաև կոկորդային-հպական բաղաձայններ¹⁶, որպիսին, ինչպես տեսանք, ուսումնասիրողները տարբերակում են ուրարտերենում: Չմոռանանք, սակայն, որ Թ. Գամկրելիձեն այդպիսի հնչույթներ վերագրում է հին հայերենին, իսկ Վյաչ. Իվանովի հետ միասին այդպիսի հնչույթներ են վերականգնում նաև ընդհանուր հնդեվրոպական լեզվում:

4) Լեզուների ծագումնաբանական կապերի առավել հուսալի ցուցիչ են համարվում նրանց միջև քերականական կառուցվածքի ընդհանրությունները, որոնք, ի տարբերություն հնչույթային կազմի և հատկապես բառապաշարի, ավելի դժվարությամբ են փոփոխությունների ենթարկվում: Ուրարտերենին բնորոշ է համարվում նախադասության *երգատիվ* (ergative) կառուցվածքը, իսկ գրաբարյան հայերենին՝ որպես հայերենի հայտնի ամենից հին գրավոր փճակի, *բացարձակ* (absolute) կառուցվածքը: Էրգատիվ կառուցվածքը բնորոշ է նաև կովկասյան լեզուների, այդ թվում՝ վրացերենի նախադասությանը: Հյուսիսկովկասյան, մասնավորապես՝ նախողաղստանյան լեզուների հետ ուրարտերենի ցեղակցության կողմնակիցները շեշտադրում են անում նշված երևույթի վրա: Այս առնչությամբ պիտի նշել հետևյալը. ա) նախադասության կառուցվածքային տիպը առաջին հերթին լեզուների միջև տիպաբանական ընդհանրության ցուցիչ է. ծագումնաբանական առումով այն կարող է նկատի առնվել իբրև լրացուցիչ փաստարկ: Իսկ տիպաբանական ընդհանրություն կարող են ունենալ ինչպես ցեղակից, այնպես էլ ոչ ցեղակից լեզուները: Օր.՝ էրգատիվ կառուցվածքը, կովկասյաններից բացի, բնորոշ է նաև չուլոտականաչատկյան, հնդկացիական բազմաթիվ լեզուների, բասկերենին և այլն, բայց ոչ որ չի ասի, որ նրանք ցեղակից են ուրարտերենին (այս դեպքում՝ վերապահությամբ բասկերենի¹⁷) կամ կովկասյան լեզուներին: Հետևաբար կառուցվածքային միևնույն տիպին պատկանելը դեռևս լեզուների միջև ցեղակցական կապի առկայության պայման չէ: Հայտնի է, որ 20-րդ դարի 30-40-ական թթ., երբ հ.-ե. համեմատական լեզվաբանության մեջ ակնհայտ էր երիտքերականական մի շարք հիմնարար դրույթների վերանայման միտումը, առանձին լեզվաբաններ փորձեցին լեզվաընտանիքի, այսինքն՝ լեզուների միջև ցեղակցական կապի գաղափարը փոխարինել լեզվամիության հասկացությամբ: Նրանցից էր Ն. Տրուբեցկոյը, որը հնդեվրոպական համարվող լեզուների համար առաջադրեց «վեց կառուցվածքային հատկանիշների» (հնչույթաբանական, բառակազմական և քերականական) ամբողջության՝ որպես տիպաբանական չափորոշիչների միաժամանակյա առկայության պայմանը¹⁸: Ավելի ուշ ֆրանսիացի լեզվաբան Է. Բենվենիստը ցույց տվեց, որ Ն.


Տրուբեցկոյի նշած բոլոր վեց հատկանիշները կան նաև հնդկացիական տակելմա լեզվում¹⁹: Իհարկե, այս դեպքում նույնպես ոչ ոք չի ասի, թե այդ լեզուն հնդեվրոպական է:

Պատմական զարգացման ընթացքում լեզուները ոչ հազվադեպ փոխում են նաև իրենց քերականական կառուցվածքը՝ մեկ տիպից անցնելով մեկ այլ տիպի: Օր., գրաբարյան հայերենը եղել է հիմնականում թեքական կառուցատիպի լեզու՝ կցականության տարրերով, իսկ արդի գրական հայերենի երկու ճյուղերը (արևելյան և արևմտյան) կցական կառուցատիպի լեզուներ են՝ թեքականության տարրերով: Հնդեվրոպական բոլոր հին լեզուները (հին հնդկերեն, հին հունարեն, լատիներեն, գոթերեն, հին իուանդերեն, հին սլավոներեն, հին պարսկերեն և այլն) ունեցել են համադրական տիպի թեքական կառուցվածք, բայց նրանցից շատերի արդի ներկայացուցիչները (անգլերեն, ֆրանսերեն, պարսկերեն ևն) վերլուծական լեզուներ են՝ թեքականության ու կցականության կամ միայն կցականության դրսևորումներով: Ընդհակառակն, այլ լեզուներ էլ ընդհանուր առմամբ պահպանել են իրենց կառուցվածքային տիպը (օր.՝ սեմական լեզուները, հնդեվրոպականներից՝ սլավոնականները ևն): Հետևաբար ուրարտերենից մինչև գրաբարյան հայերեն՝ մ.թ.ա. IX - մ.թ. V դդ., որը ներառում է մոտ 1200-1300 տարվա ժամանակաշրջան, կարող էին տեղաշարժեր գրանցվել ոչ միայն լեզվի բառապաշարում և հնչյոթային համակարգում, այլև՝ քերականական կառուցվածքում: Նույնքան ժամանակաշրջան է ընդգրկում նաև գրաբարից մինչև աշխարհաբար՝ V-XVIII դդ., բայց երկրորդ դեպքում լեզվում կատարված փոփոխություններն այնքան մեծ չեն, որքան առաջին դեպքում: Դա ևս կարող է ունենալ իր բացատրությունը: Մասնավորապես. ա) լեզուները մինևույն արագությամբ չեն փոխվում. օր.՝ արաբերենը հազարամյակների ընթացքում անհամեմատ ավելի քիչ փոփոխությունների է ենթարկվել, քան հնդեվրոպական լեզուները, բ) մինևույն լեզուն, որոշակի հանգամանքներով պայմանավորված, իր զարգացման մի փուլում կարող է ավելի մեծ արագությամբ փոփոխվել, քան մեկ այլ փուլում: Եթե նկատի ունենանք մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերից մինչև մ.թ. 5-րդ դար Հայկական լեռնաշխարհում տեղի ունեցած ժողովրդագրական տեղաշարժերը՝ որպես պետությունների, հաճախ՝ տերությունների (Մարական, Աքեմենյան, Տիգրան Մեծի Հայաստանը ևն) կործանման և նրանց տեղում նորերի ձևավորման անընդմեջ գործընթացի հետևանք, որի ընթացքում ցեղակից և ոչ ցեղակից լեզուները տևականորեն հայտնվել են մի յուրօրինակ խառնարանում, - կարծում ենք՝ պարզ կլինի, որ հատկապես Ուրարտուի (= Բիայնայի թագավորության) կործանումից հետո ուրարտերենը (ինմ՝ ուրարտական հայերենը) պիտի ավելի մեծ փոփոխությունների ենթարկվեր, քան դա կարող էր տեղի ունենալ 5-րդ դարից հետո, երբ ունեինք ոչ միայն պետականություն, այլև հզոր

եկեղեցի՝ իր նույնքան հզոր դավանաբանական ուսմունքով՝ լուսավորչական քրիստոնեությամբ և ամենից կարևորը՝ սեփական գրավոր մշակույթ՝ իր կրթական համակարգով: Այսինքն՝ կային կենտրոնամետ ուժեր:

Ամենին պատահական չէ, որ շուրջ քառասուն տարի՝ 1960-ականների սկզբից մինչև 2000 թ., սկադեմիական հայագիտության ամենավառ ներկայացուցիչներից մեկը՝ սկադեմիկոս Գ. Ջահուկյանը, իր տարբեր աշխատություններում պարբերաբար անդրադառնալով ուրարտերենագիտության հարցերին²⁰ և դրանցում առաջադրելով ու պաշտպանելով հնդեվրոպական լեզուների հետ խոտի-ուրարտական լեզուների նոստրատիկ (լատ. noster «մեր» բառից) ցեղակցության գաղափարը, ի վերջո հանգեց ուրարտերենը հայերենով վերծանելու, այն է՝ հայերեն համարելու տեսակետին²¹: Ի դեպ, մեր կարծիքով՝ իր «Ուրարտական տերությունը և հայերը» ուսումնասիրությամբ այդ գաղափարից հեռու չէր նաև սկադեմիկոս Գ. Սարգսյանը, բայց ինչ-որ բան նրան, ինչպես և գրքի մյուս հեղինակներին, ետ է պահել այդ վճռական քայլն անելուց²²:

Այսպիսով, սկադեմիական հայագիտության, հատկապես Ն. Աղոնցի, Հ. Մանանդյանի, Գ. Ղափանցյանի, Ս. Երեմյանի և Գ. Սարգսյանի գիտական վաստակի հանդեպ ամենայն հարգանքով հանդերձ, չենք կարող ընդունել, սակայն, որ հայոց պատմության հնագույն շրջանի առանձին հիմնախնդիրների, մասնավորապես՝ Ուրարտուի և ուրարտերենի ինքնության մեկնաբանության հարցերում նրանք ասել են եզրափակիչ խոսքը: Դա բոլորից լավ գիտակցել են հենց իրենք: Ըստ էության, չէին էլ կարող ասել: Ուրարտուի պատմության վերաբերյալ Ս. Երեմյանի, Գ. Սարգսյանի, ինչպես և առհասարակ խորհրդահայ պատմագիտության ըմբռնումը երկու տարբեր հայեցակարգերի, պայմանականորեն՝ «ազգայինի» և «ոչ ազգայինի» յուրօրինակ խաչավորում է, որի հակասություններն ակնհայտ են: Այդ երևույթը արտացոլում է իրենց ժամանակի պատմագիտության և լեզվաբանության նվաճումների մակարդակը: Մույն հանգամանքը, սակայն, ի չարն են գործադրել ուրիշները՝ ոմանք ուրարտական քաղաքակրթությունը սեփականելու միջոցով փորձելով ինքնահաստատվել Հայկական լեռնաշխարհում իբրև բնիկներ, ուրիշներն էլ՝ հայագի ներկայացուցիչները, անաչառ (= սկադեմիական) գիտության անվան տակ, իրենց գիտական կարերիայի ճանապարհին հավելյալ խոչընդոտներ չհարուցելու նկատառումով, տուրք են տվել իշխող մտայնությանը (չմոռանանք, թե ինչպիսի հեղինակություններ էին մյուս տեսակետների պաշտպանները)՝ այդպիսով ինքնաբերաբար ստանձնելով հայագիտության յուրօրինակ «հինգերորդ շարապունի» դերը: ■



THE END OF URARTU - RUSAS III c. 610-585 BC

Օգտագործված աղբյուրներ և գրականության ցանկ

- 1- Արնց Նիկողայսո, Հայաստանի պատմություն, Եր., 1972, էջ 9:
- 2- Նույն տեղում, էջ 280:
- 3- Նույն տեղում, էջ 271-272:
- 4- Տնն Браун Н., Климов Г., Об историческом взаимоотношении урартского и иберийско-кавказских языков (тезисы доклады), Тбилиси, 1954, Дешериев Ю. С., Сравнительно-историческая грамматика нахских языков, Грозный, 1963,- Меликишвили Г. А., Урартский язык, М., 1964, էջ 22,- Дьяконов И. М., Хуррито-урартский и восточнокавказские языки // ДВ, 3, Ер., 1978,- նույնի՝ Языки древней Передней Азии, М., 1967, էջ 133-165,- Хачикян М. Л., Урартский язык // Лингвистический энциклопедический словарь (սլոնիստես՝ ЛЭС), М., 1990, էջ 538,- նույնի՝ Хурритский язык // ЛЭС, էջ 574: Իհարկե, Գ. Մելիքիշվիլին ընդունել է, որ կովկասյան լեզուների հետ ուրարտերենի ցերակցության հարցը դեռևս «գիտական վարկած է միայն» (նույն տեղում, էջ 14):
- 5- Տնն Մովսիսյան Արտակ, Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում, Եր., 2005:
- 6- Տնն «Հայ ժողովրդի պատմություն», հ. I, Եր., 1971 թ., էջ 537:
- 7- 350 թիվը ներկայացնում է Ռ. Իշխանյանը՝ ըստ Գ. Մելիքիշվիլու «Ուրարտերեն» / "Урартский язык" / (1964) և Ի. Մեշչանինովի «Ուրարտերենի (բիսյներենի) անտազիոն բառարան» / "Аннотированный словарь урартского (биайнского) языка" / (Л., 1978) գրքերի բառամթերքի կատարված հաշվումների (տնն Իշխանյան Ռ. Ա., Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Եր., 1988, էջ 57,- նույնի՝ Բվիկ հայերեն բառեր և հնագույն փոխառություններ, Եր., 1989, էջ 42): Ա. Մովսիսյանը նշում է 600 արձա-նագրություններում պահպանված 500 բառի մասին (տնն Մովսիսյան Արտակ, Նախաանաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, Եր., 2003, էջ 76): Ըստ անենայիսի՝ վերջինը գործածված բառերի ընդհանուր թիվն է, որոնց մի մասի արմատները կրկնվում են:
- 8- Տնն Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, մաս I, Եր., 1940, էջ 33:
- 9- Տնն Գ. Բ. Ջահուկյան, Ջրոցյներ հայոց լեզվի մասին, Եր., 1992, էջ 64:
- 10- Լատ. cerebrum (-i) «Լ. գլխուղեղ, 2. միտք, քանականություն» բառից: Հ. Աճառյանը գործածում է «գանգային» ձևը (տնն Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, Եր., 1971, էջ 193-194), բայց իբրև լեզվաբանական տերմին՝ այդ ձևը կիրառություն չունի, ուստի պահպանում ենք օտարը:
- 11- Տնն Джаукян Г. Б., Урартский и индоевропейские языки, Ер., 1963, էջ 11-13,

- Дьяконов И. М., Языки древней Передней Азии, М., 1967, էջ 124-132:
- 12- Տնն Гамкрелидзе Т. В., Индоевропейская "глоттальная теория" и система древнеармянского консонантизма // Միջազգային հայերենագիտական գիտաժողով, Եր., 1982, էջ 31-34:
- 13- Տնն Վարդան Զ. Պետրոսյան, Հպական քաղաքային հնդեվրոպական համակարգը // ՎԷՄ, 2019, թիվ 2 (66), էջ 107-136,- Վարդան Պետրոսյան, Հին հայերենի ձայնեղ հպականների տարածմանակա քննադրերը // ԲԵՀ. Բանասիրություն, 2019, թիվ 1 (28), էջ 39-48,- նույնի՝ Հին հայերենի ձայնեղ հպականները (համաժամանակյա հայեցակետ) // ԲԵՀ. Հայագիտություն, 2019, թիվ 1 (28), էջ 40-51:
- 14- Տնն Աղայան Է. Բ., Գրաբարի քերականություն, հ. I, Հնչյունաբանություն, Եր., 1964, էջ 102-140,- Պետրոսյան Վ. Զ., Հին հայերենի ետաբարբառային կազմությունները (համաժամանակյա հայեցակետ) // «Հայագիտության հարցեր», 2017, №1 (10), էջ 128-136, նույնի՝ Հին հայերենի երկբարբառային կազմ-ությունների հնչյոթարանական և հնչյունաբանական արժեքները // «Հայագետան հայագիտական հանդես», 2018, էջ 57-78):
- 15- Տնն Климов Г. А., Хайдаков С. М., Нахско-дагестанские языки // ЛЭС, М., 1990, էջ 325:
- 16- Տնն Дешериев Ю. Д., Нахские языки // նույն տեղում, էջ 324-325:
- 17- Տնն Սարգսյան Վահան, Ուրարտական քաղաքակրթությունը և բասկերի նախահայրենիքի հարցը, Եր., 1998:
- 18- Н. С. Трубецкой, Мысли об индоевропейской проблеме // Избранные труды по филологии, М., 1987, с. 50-52:
- 19- Տնն Э. Бенвенист, Классификация языков // «Новое в зарубежной лингвистике», вып. III, М., 1963, էջ 45-50:
- 20- Տնն Джаукян Г. Б., Урартский и индоевропейские языки, Ер., 1963,- Ջահուկյան Գ. Բ., Ուրարտերենը և հայերենը // Առաքելյան Բ. Ն., Ջահուկյան Գ. Բ., Սարգսյան Գ. Ի., Ուրարտու-Հայաստան, Եր., 1988, էջ 127-168,- Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 417-445:
- 21 Տնն Ջահուկյան Գ. Բ., Ուրարտական արձանագրությունների ներածական բանաձևերի հնարավոր հայկական բնույթի մասին» // «Պատմաբանասիրական հանդես», 2000, №1, էջ 124-129:
- 22 Տնն Սարգսյան Գ. Ի., Ուրարտական տերությունը և հայերը // Առաքելյան Բ. Ն., Ջահուկյան Գ. Բ., Սարգսյան Գ. Ի., նշվ. աշխ., էջ 47-126:

Տերսիմի մէջ ՀՅԴ գործունէութեան առնչուող պատմական ուրուագծեր

Վահագն Գարագաշեան
«Հորիզոն» թերթի խմբագիր

ՀՅ Դաշնակցութեան հիմնադրութեան յաջորդող առաջին տասնամեակին Տերսիմը եղած է կուսակցութեան ուշադրութեան շրջագիծին մէջ: Դաշնակցութեան երկրորդ Ընդհանուր ժողովը ազգային-ազատագրական պայքարի կազմակերպական աշխատանքներուն մէջ կը ներառէր նաև պատմական Ծովագ աշխարհի Տերսիմ գաւառը, որ ունէր հայ և արևի-քիզիլպաշ միախառն բնակչութիւն:

Հայ և օտար պատմաբաններ կը հաստատեն, որ Տերսիմի արևի շարք մը ցեղախումբեր ԺԷ դարուն սկզբնատրութեան հաւատափոխ դարձած և իսլամութեան շիա յարանուանութեան արևի ճիւղատրման դաւանանքը ընդունած բնիկ հայերու շառափոխներն են: Լեռնային Տերսիմի մէջ 19-րդ դարուն իր գոյութիւնը պահպանած է Միրագեան հայկական ցեղախումբը: Շիա իսլամութեան և շիա յարանուանութեան մասնագէտ, ասորի պատմաբան Մաթի Մուսայի հաստատումով՝ դարերու ընթացքին կրօնական հալածանքներէ խուսափելու համար բազմահազար հայեր, Տերսիմ հաստատուելով և տեղացի քիզիլպաշ ցեղախումբերու շիա կրօնքը ընդունելով, հաւատափոխ դարձած են և սակայն պահած քրիստոնէական կրօնքի շարք մը ասանդութիւնները¹: Լեռնային Տերսիմի ըմբոստ բնակչութիւնը դարերու ընթացքին միշտ հակադրուած է Օսմանեան պետութեան:

Դաշնակցական գործիչներու՝ դէպի Տերսիմ գործուղումները թափ ստացած են 1896-1898 թուականներուն: Այդ ժամանակահատուածին կուսակցութեան զինեալ պայքարի հիմնական կիզակէտն ու կեդրոնացումը կը հանդիսանային Վասպուրականը, Սասունն ու Տարօսը: Տերսիմը կազմակերպելու հարցը առաջին անգամ կ'առաջադրուի ՀՅԴ Բ Ընդհանուր ժողովին, որուն ներկայ եղած է Դաշնակցութեան հիմնադիր սերունդը:

1896ի դեկտեմբեր 27ին կայացած էր Դաշնակցութեան կովկասեան ռայոնական ժողովը: Ժողովի 22 նիստերու ընթացքին քննարկուած էին Քարաժայռի (Տերսիմ) և Լեռնավայրի (Կիլիկիա) շրջանները կազմակերպելու հարցերը: «Ժողովը, աչքի ունենալով Լեռնավայրի անառիկ դիրքը, տեղական ժողովուրդին յեղափոխական ուժը և ընդհանրապէս միւս յարմարութիւններն ու առաւելութիւնները, որոշեց լուրջ ուշադրութիւն դարձնել այս «պունկտի» վրայ և հոն ուղարկել կազմակերպող-դեկավարող ուժ մը: Գալով Քարաժայռին՝ ժողովականներէն մէկ քանին թերահաւատութիւն յայտնեցին, հիմնուելով այն բանի վրայ, որ կարելի չէ լիովին հաւատալ ժայռեցիներու անկեղծութեան և մշտական բարեկամութեան, որով այդտեղի գործը գուցէ և հայկական չհամարուի և



այլն: Սակայն ժողովականներէն երեք հոգիներ, թէ՛ անցեալէն և թէ՛ ներկայէն համոզեցուցիչ փաստեր բերելով, մատնացոյց կ'ընեն այն իրողութիւնը, որ ցանկալի ձեռնարկութիւնը արդէն կէս մը կատարուած է, և Քեռին իր ամբողջ խումբով Քարաժայռ հասած ու լաւ ընդունելութիւն գտած անոնցմէ, փարատեցին բոլոր կասկածները: Ուստի ժողովը որոշեց Ժայռն ալ գործունէութեան կեդրոն մը համարել ու իր նիւթական միջոցներուն համեմատ ուշքը դարձնել անոր վրայ ալ»²:

Տերսիմի Քեռին (Ռուբէն Շիշմանեան) հայերու և Տերսիմի արևիներու մերձեցման առաջին ջատագովներէն և Տերսիմի հայդուկային առաջին խումբի կազմակերպողներէն եղած է:

ՀՅԴ Կովկասեան ռայոնական ժողովի նախօրեակին, ՀՅԴ Բիւրոյի կարգադրութեամբ, Կովկասէն Երզնկա գործուղուած էր Կարապետ Ղումրիկեանը՝ որպէս գործիչ՝ յատուկ յանձնարարութիւն ունենալով համագործակցութեան եզրեր ստեղծելու Տերսիմի արևիներուն հետ³:

1896 թուականին ՀՅԴ Կարնոյ կեդրոնական կոմիտէին ուղղուած մարտ 29 թուակիր նամակով մը Քեռին կը հաստատէ կեդրոնական կոմիտէին 25 ոսկի ստացած ըլլալը, որ պիտի յատկացուէր Տերսիմի մէջ Դաշնակցութեան արմատաւորման ծրագիրներուն: Նոյն նամակին մէջ Քեռի կը գրէ, որ Տերսիմի կուսակցական ծրագիրը իրագործելու համար անհրաժեշտ է 250-300 ոսկի⁴:

Թարիզի կոմիտէին ուղղուած 1897 յունուար 10 թուակիր նամակով մը հայդուկապետ Տիգրան Տէրոյեան անդրադարձած է Տերսիմի Քեռիին. «Քեռին անցած է Տերսիմ (Քարաժայռ), այստեղ է և Ղարամելիքը. յոյս կայ յաջողութիւն գտնելու այդ



վայրերուն մեջ: 1000 մանեթ և 100 օսմանեան ոսկի յատկացուած է այդ տեղին համար: Տրապիզոնի կոմիտէն ալ մասնակից է այդ գործին»⁵:

Վերոնշեալ փաստերը ի մի բերելով՝ ակնյայտ կը դառնայ, որ Դաշնակցութիւնը, թէ՛ գործիչներու՝ Տէրսիմ գործուղումներով և թէ՛ այդ առաքելութեան յաջողութեան համար նիւթական աղբիւրներ տրամադրելով, հետամուտ էր կուսակցական գործունէութիւնը արմատաւորելու և ընդլայնելու Տէրսիմի մէջ:

1898ին Թիֆլիսի մէջ կայացած ՀՅ Դաշնակցութեան Բ Ընդհանուր ժողովին կը մասնակցի Տէրսիմի Քեռին: Այս ժողովին քննարկման բովէն կ'անցնին Սուլթան Համիտի հետ բանակցութիւններու հարցը, շրջաններու կազմակերպումը, ունևոր հայերէ՛ նիւթական ապահովելու խնդիրն ու այլ կարևոր հարցեր: ՀՅԴ գերագոյն ժողովներէն ամէնէն անկիւնադարձայինն ու պատմականը հանդիսացող այս ժողովին ներկայ եղած էին 19 պատգամատրներ և 13 գործիչներ, որոնց շարքին՝ Քրիստափորը, Ռոստոմը, Զաւարեանը, Արշակ Վռամեանը, Արմէն Գարոն և Նիկոլ Դումանը: Իբրև կուսակցական գործիչ՝ ժողովին հրաւիրուած Քեռին կը շեշտէ Տէրսիմի զագայախօս ալևի ցեղախումբերուն հետ համագործակցելու անհրաժեշտութիւնը, որպէսզի Օսմանեան կայսրութեան դէմ յեղափոխութիւնը անելի ծաւալուն և բազմաբևեռ դառնայ: Ընդհանուր ժողովը Քարաժայռի (Տէրսիմ) շրջանը կազմակերպելու գործը կարևորելով՝ գործիչային դրութիւնը շարունակելու որոշում կ'առնէ, և ծրագրի իրագործման համար պիտո՞ճէ կը տրամադրէ⁶:

Ժողովէն ետք Քեռին կը մեկնի Տէրսիմ: Քիզիլպաշներու զագա լեզուին քաջածանօթ Քեռին

հանդիպումներ կ'ունենայ Տէրսիմի Գուրէշան և Հասանան քիզիլպաշ ցեղախումբերու ղեկավար Սէլիտ Ռիզայի (1862-1937) հետ:

Այս հանգրուանին Դաշնակցութեան առաջնահերթութիւնը կը հանդիսանար Վասպուրականի, Տարօսի և Սասնոյ հայ բնակչութեան ինքնապաշտպանութեան կազմակերպումը, որուն հետևանքով կը դանդաղի Տէրսիմի ծրագիրը, իսկ կուսակցութեան նիւթական միջոցները կը տրամադրուին վերոնշեալ երեք կազմակերպական շրջաններու գործունէութեան զարկ տալու⁷:

1900 թուականին Քեռի կը վերադառնայ Երզնկա, ուր, շատ չանցած, թուրք կառավարութեան կողմէ կ'ամբաստանուի քիւրտ աղայի մը սպանութեան յանցանքով: Երեք տարի բանտարկուելէ ետք՝ 1903 յուլիս 10ին, թուրք զինուորներու ուղեկցութեամբ կը տարուի Երզնկայի Յորենի հրապարակը՝ կախադանով մահուան դատապարտուելու: Տէրսիմի Քեռին թոյլ չի տար, որ դահիճը իր գործը կատարէ. իր ձեռքով վզին կ'անցընէ կախադանի օղակը և, ոտքով հրելով աթոռը, արհաբար կը դիմագրաւէ մահը⁸:

Տէրսիմի Քեռիի մահէն մէկ տարի ետք ՀՅԴ պաշտօնաթերթ «Դրօշակ»ի մէջ կը յիշատակուի Քեռիի գործիչային առաքելութեան արդիւնք՝ Դաշնակցութեան և ալևի ցեղախումբերու համագործակցութեան մասին: «Նամակ Քրիէն» խորագիրը կրող թղթակցութիւնը կը պատմէ Դաշտային Տէրսիմի Քրի գաւառի Խուսիուս գիւղի ինքնապաշտպանութեան մասին, որուն ընթացքին դաշնակցական զինեալ տղաք և տէրսիմցի Հայտար պէլը իր զինեալներով միասնաբար կը դիմադրեն և ետ կը մղեն թուրքերու և քիւրտերու յարձակումը: «Ժամանակները փոխուած են: Ընդհանուր

կոտորածին, երբ Բալուի թիրոքը և շխասանցի քիրտը, Քղիի շատ մը տեղեր աարի տալով, մեր Խուփուս գիղը եկան (Խուփուս 400 տուն զուտ հայաբնակ գիղ մըն է), Տերսիմի Խուզուզան գաւառի Շահուսէյն պէյի տղան՝ Հայտար պէյը, որ թիրոք կառավարութենէն գայմագամութեան պաշտօն ալ ունի, իր մարդիկներով մեր գիղը եկաւ և մեր քանի մը հայ երիտասարդներու հետ դիմադրեց խուժանին: Թիրոքերը և քիրդերը երբ տեսան, որ մեր գիղը ինքնապաշտպանութեան կը դիմէ, իրենցմէ քանի մը քիրդ և թիրոք մտած ու վիրաւոր թողնելով, գացին: Շնորհիւ Հայտար պէյի և մէկ քանի ՀՅ դաշնակցականներու՝ գիղը այն անգամ կոտորածէ և կողոպուտէ ազատեցաւ: Հայտար պէյը բացէ ի բաց ըսաւ. «Մենք սկզբին թիրոք կառավարութեան աչքին առջև ինքնիշխան ցեղ մըն էինք, բայց Տերվիշ փաշան ժամանակին մեր պապերու օրով սուլթանի հրամանով Տերսիմը նուաճելու եկաւ. թիրոք փաշան մեզի եկաւ, բայց մենք՝ զազա ցեղերս, թիրոք կառավարութեան ո՛չ տուրք, ո՛չ զօրք կու տանք և ո՛չ ալ կ'ուզէնք կառավարութեան ձեռքը գործիք դանակ և նեղել մեր դրացի հայերը: Հակառակ պարագային, եթէ խռովութիւն ծագի, ինչպէս անցեալ տարի, հիմա ալ պէտք եղած տեղերը հայերը պիտի պաշտպանեն»: Տերսիմի զազա քիրտը իր դրացի հայուն համար պաշտպան կը կայնի, իսկ մեր հարուստ հայը կը լքէ իր ազգակից եղբայրը, ձեռքէն եկած ամէն վատութիւն կ'ընէ՝ կառավարութեան աչքին սիրելի երևալու համար»⁹:

Այս ժամանակահատուածին կուսակցականներու գործուղումը Տերսիմ, ըստ երևոյթին, վերստին թափ կը ստանայ: ՀՅԴ Ամերիկայի կեդրոնական կոմիտէին ուղղուած՝ ՀՅԴ Խորաձորի (Քղի) կոմիտէի 18 հոկտեմբեր 1905 թուակիր դիմումնագիրին մէջ կը յիշատակուի դաշնակցական գործիչներու մասին: Դիմումնագիրը հաստատուած է ՀՅԴ Կարնոյ կեդրոնական կոմիտէի կնիքով: «Քղիի մեր ընկերները յարաբերութեան մէջ են Տրապիզոնի, Կարինի և Երզնկայի հետ և կապեր հաստատելու վրայ են շրջականերու հետ մինչև Բալու և Չարսանճաք: Այստեղի մեր գործիչ ընկերը կը պատրաստուի այս անտո այցելելու մինչև Տերսիմ, եթէ միայն մեր կողմէն ծախքերը հոգացուին: Եթէ տարեկան որոշ գումար մը յատկացուի, Խորաձորի այս մարմինի միջոցով պիտի կրնանք կազմակերպել հետզհետէ բոլոր շրջակայ գաւառները»¹⁰: Այստեղ պէտք է շեշտել Քղիի աշխարհագրական կարևորութիւնը, որովհետև անելի քան 50 հայաբնակ գիղերով Քղիի վարչատարածքը արևմուտքէն անմիջական սահմանակից է Տերսիմ գաւառին:

Դաշտային Տերսիմի Չարսանճաքի վարչատարածքին մէջ դաշնակցական գործիչ եղած է Մեշեհի Աւետիսը (Աւետիս Գազանճեան): Բնիկ տերսիմցի Մեշեհի Աւետիսը յատուկ առաքելութեամբ Տերսիմ կը գործուղուի 1904ին, սակայն Քղիի մէջ կը ձերբակալուի թրքական կառավարութեան կողմէ: Չորս տարի բանտարկուած մնալէ ետք՝

սահմանադրութեան օրերուն, ներման կ'արժանանայ: 1909ին կը մասնակցի ՀՅԴ Լեռնասարի կեդրոնական կոմիտէի շրջանային ժողովին, ուր Չարսանճաքի գիղերը կազմակերպելու յատուկ որոշում կը կայացուի, և առաքելութիւնը կը յանձնուի Մեշեհի Աւետիսին և Տիգրան Չիթճեանին, որոնք, անմիջապէս գործի լծուելով, կը մեկնին Չարսանճաք¹¹: Մասնոյ կրիւններուն մասնակցած այս քաջարի ֆետային ցեղասպանութեան օրերուն Տերսիմի մէջ կը ձերբակալուի թիրոք զինուորներու կողմէ, որոնք, Մեշեհի Աւետիսի վիզէն ծանր քար մը կապելով, կը գլորեն զինք Մնձուրի կամուրջէն:

Շնորհիւ Մեշեհի Աւետիսի նման գործիչներու՝ ՀՅ Դաշնակցութիւնը Մեծ եղեռնի նախօրեակին կազմակերպական ներկայութիւն էր Դաշտային Տերսիմի մէջ՝ Մեծկերտ, Քղի և այլուր: Աւետիսի գործակից Կիրակոս Պոյաճեանը Տերսիմի Սվճող գիղին մէջ հիմնած է ՀՅԴ «Տաճար» կոմիտէութիւնը¹²: Գերգ Երևանեանի «Պատմութիւն Չարսանճաքի հայոց» ստուարածաւալ յուշամատենին մէջ Դաշտային Տերսիմի Բերրի գիղաքաղաքի՝ Եղեռնի ցանկագրուած նահատակներուն մէջ կը նշուին դաշնակցական կուսակցականներ, որոնց շարքին՝ պատմութեան ուսուցիչ Արմենակ Մելիտոսեանը, զինատարութեան գործին մասնակից Պետրոս Բուշիկեանը, Կրթական մարմնի ատենապետ Հայկ Ենովքեանը, Բերրիի քաղաքական ժողովի անդամ Մարտիրոս Դագէսեանը:

Հայոց ցեղասպանութիւնը ուսումնասիրած շատ մը պատմագիտական աղբիւրներ կը հաստատեն, որ Մեծ եղեռնի օրերուն Լեռնային Տերսիմ ապաստանած են անելի քան 30 հազար հայեր: Տերսիմի քիզիլպաշ ալիքներու և անոնց՝ հայերու հանդէպ տածած բարեացակամութեան մասին ուշագրաւ է «Դրօշակ»ի մէջ հրատարակուած 20 նոյեմբեր 1906 թուակիր Չմշկածագի տեղեկագրին մէջ տեղ գտած վկայութիւնը. «...Ազատ լերան ազատ գաւակները ենթակայ չեն թիրոքական լուծին և իրենց լեռներու բարձրութենէն իրաւունք ունին խրոխտաբար նայելու հայերու վրայ և, անշուշտ, գոհունակութիւն զգան՝ տեսնելով, որ թէև իրենց նախնիքը ժամանակին փոխած են իրենց կրօնական դաւանանքը, հրաժարած են հայ անունէն, բայց այժմ մնացել են ազատ, հպարտ ու խրոխտ... Ընդհանրապէս կ'ատեն սիննի թիրոքերը և համակրութեամբ կը վարուին քրիստոնէաներու, մասնաւորապէս հայերու հետ, որոնց հետ շատ մը վայրերու մէջ շփման մէջ են»¹³:

Դաշնակցութիւնը սերտօրէն գործակցած է Տերսիմի արևելքը գտնուող Պինկէօլ նահանգի քիզիլպաշ Խորըմընկ ցեղախումբի առաջնորդ աշիրաթապետ Զէյնալի հետ: Խորըմընկցիներու հետ առաջին կապերը կը հաստատէ Գոմսայ Կորիւնը, որ Մասնոյ Բ ապստամբութենէն ետք կ'անցնի Պինկէօլ՝ խորըմընկեցի աշիրաթապետ Նիազիի մօտ, և կը կազմակերպէ քրտական կոմիտէ¹⁴: Նշենք, որ Կորիւն, 1906ին Կովկաս գործուղուելով, կը կազմակերպէ

Ջանգեզուրի և Արցախի շրջանները: Կորինի և Ջեյսալի առաջին հանդիպումը կը կայանայ 1905ին: 1908ի սահմանադրութենէն ետք Ռուբէն (Տէր-Մինասեան) և Կորին կը մեկնին Պինկէօլ և Ջեյսալի հետ կ'ամրապնդեն համագործակցութիւնը: Ջեյսալ հայ-քիզիլպաշ համագործակցութիւնը ամրապնդելու համար կ'առաջարկէր խառն ամուսնութիւններ կնքել երկու ժողովուրդներուն միջև¹⁵:

Մշոյ Ս. Կարապետ վանքին մէջ կայացած ՀՅԴ Դուրան-բարձրաւանդակի շրջանային ժողովը կ'որոշէ Ջեյսալը նկատի ունենալ որպէս Դաշնակցութեան ներկայացուցիչ շրջանի քիզիլպաշներու հետ յարաբերութեանց ծիրէն ներս¹⁶:

Վերոնշեալ արխիւային վաւերաթուղթերն ու վկայութիւնները կու գան հաստատելու, որ ՀՅ Դաշնակցութիւնը հայ ազատագրական պայքարի շարժումը կազմակերպելու իր մարտավարութեան մէջ ընդգրկած է քիզիլպաշ ցեղախումբերու հետ համագործակցելու և դաշինքներ ստեղծելու ուղեգիծը, միաժամանակ այդ ցեղախումբերու աշխարհագրական տարածքներուն վրայ գտնուող հայկական բնակավայրերը կազմակերպելու գործը յատուկ ուշադրութեան առարկայ դարձուցած է:

Ինչպէս սոյն յօդուածի խորագիրը կը թելադրէ, նշուած փաստագրութիւնները քանի մը ուրուագծեր են ՀՅ Դաշնակցութեան և Տէրսիմի ալևի ցեղախումբերու միջև համագործակցութեանց պատմական հոլովոյթին: Այստեղ պէտք է նշել, սակայն, որ եթէ 1937ի Տէրսիմի ըմբոստութենէն երեք տասնամեակ առաջ ապստամբութեան դեկավար և տէրսիմցիներու առաջնորդ Մէլիտ Ռիզան համագործակցած է դաշնակցական ֆետայի գործիչ Քեռիի հետ, մեծ է հաւանականութիւնը, որ Տէրսիմի ապստամբութեան ժամանակահատուածին ՀՅԴի հետ կայացած է համագործակցութիւն: Դաշնակցութեան պատմագրական աղբիւրներու մէջ կը յիշուի «Նեմեսիս» գործողութեան մասնակից,

հետագային Սուրիոյ խորհրդարանի անդամ Հրաչ Փափագեանի անունը՝ որպէս Տէրսիմի հետ կուսակցական յարաբերական կապ 30ական թուականներուն: Դժբախտաբար, երախտաշատ դաշնակցական ընկ. Հրաչ Փափագեանը այդ մասին որևէ յուշագրութիւն կամ գրական աւանդ չէ թողած: Հաւանաբար ժամանակն է, որ ՀՅԴ արխիւներու ծալքերուն մէջ յամեցող 1930ական թուականներու ՀՅԴ-Տէրսիմ համագործակցութեան պատմութիւնը լորջ ուսումնասիրութեան արժանանայ: ■

Օգտագործված աղբյուրներ և գրականության ցանկ

- 1- Տնն MattiMoosa, Extremist Shiites: The Ghulat Sects, Նիւ Եորք, 1987, էջ 433:
- 2- Աւօ, «Յեղափոխական ապում», Պեյրոթ, 1966, էջ 333:
- 3- Տնն Լազեան Գ, «Դէմքեր հայ ազատագրական շարժումէն», Մոսթայելլօ, 1933, էջ 15:
- 4- Տնն «Դիւան ՀՅ Դաշնակցութեան», Ա հատոր, Պոսթըն, 1934, էջ 325:
- 5- «Դիւան ՀՅ Դաշնակցութեան», Բ. հատոր, էջ 353:
- 6- Տնն «Դիւան ՀՅ Դաշնակցութեան», Բ հատոր, Պոսթըն, էջ 226:
- 7- Տնն Լազեան Գ, «Դէմքեր հայ ազատագրական շարժումէն», Մոսթայելլօ, 1993 էջ 17:
- 8- Տնն «Դրօշակ», 1903, Մեպտեմբեր, թիւ 9, էջ 126:
- 9- «Դրօշակ», 1904, Յունիս, թիւ 6, էջ 82:
- 10 «Նիւթեր ՀՅ Դաշնակցութեան պատմութեան համար», Դ հատոր, Պեյրոթ, էջ 190:
- 11- Տնն Երևանեան Գ, «Պատմութիւն Չարսանճաքի հայոց», 1956 էջ 406:
- 12- Տնն Նոյն տեղում, էջ 213:
- 13- «Դրօշակ», 1907, Փետրուար, թիւ 2, էջ 20:
- 14- Տնն «Դրօշակ», 1926, օգոստոս-հոկտեմբեր, թիւ 8-10, էջ 255:
- 15) Տնն Ռուբէն, «Հայ յեղափոխականի մը յիշատակները», Ե հատոր, Թեհրան, 1982, էջ 67:
- 16) Տնն Ռուբէն, «Հայ յեղափոխականի մը յիշատակները», Դ հատոր, Թեհրան, 1982, էջ 27:



Ռուբեն Տէր-Մինասյան



Կորյուն



Կերսիմի Բերի



Մելիքի Ավերիս

Կարսի անկումը. պատճառներ և դասեր

Անի Մելքոնյան

ԵՊՀ պատմության ֆակուլտետի շրջանավարտ, ՀՅԳ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության անդամ

Հոկտեմբերի 30-ին լրանում է Կարսի հանձնման 100-րդ տարելիցը, մի իրադարձություն, որը խորքային առումով մեզ համար ողբերգական նշանակություն ունեցավ՝ վերջ դնելով գերմարդկային ջանքերի գնով ստեղծված հայկական պետության գոյությանը:

1920 թ. սեպտեմբերի 23-ին քենայական Թուրքիան առանց պատերազմ հայտարարելու հարձակվեց Հայաստանի Հանրապետության վրա: Սկսվեց թուրք-հայկական պատերազմը, որը տևեց շուրջ երկու ամիս: Սեպտեմբերի 28-ից ծավալվեցին վճռական ռազմական գործողությունները: Ի սկզբանե պատերազմն անհաջող ընթացք ունեցավ հայկական կողմի համար: Ոստիսը գրավեց Սարիղամիշն ու Մերդենները: Չխորանալով պատերազմի մանրամասնությունների մեջ՝ ասենք, որ վճռորոշ էին հատկապես Կարսում և Սուրմալում ընթացող ռազմական գործողությունները: Սուրմալուի ճակատում հայկական զորքը Դրոյի հրամանատարությամբ հաղթական մարտեր էր մղում, մինչդեռ Կարսում դրությունն աղետալի էր. զորքը փաստացի չէր կատարում տրված հրամանները, ինչպես վկայում է Ս. Վրացյանը. «...Համաձայն տրված հրամանի, հոկտեմբերի 30-ի առավոտյան մեր զորքերը պիտի անցնեին հակահարձակման... Սակայն առաջին գունդը մերժեց կատարել հրամանը և տեղից չշարժվեց: Հուսահատ և անզոր գնդ. Մազմանյանը ամենքի աչքի առաջ մատուցեց երկու գնդակից ինքնասպանություն գործեց...»¹: Սակայն անգամ պատվախնդիր սպայի ինքնասպանությունը հայոց զորքին չչթափեցրեց, և նույն օրը՝ հոկտեմբերի 30-ին, առանց լուրջ դիմադրության, Կարսն ընկավ, ինչն էլ իր կնիքը դրեց հետագա իրադարձությունների վրա, որոնք Հայաստանի համար ընթացան գահավեժ արագությամբ. «Կարսի անկումը ամեն տեսակետի սարսափելի աղետ եղաւ: Իսկապէս այդ օրէն սկսած՝ Հայաստանի անկախութեան օրերը հաշուած էին... զինուորական ուժն այլևս դադարած էր պաշտպան հանդիսանալ Հ. Հանրապետութեան: Միւս կողմէն Հայաստանը՝ զրկուած Կարսէն ու Կարսի նահանգէն նորէն կ'ամփոփուէր նեղ սահմաններու մէջ, որոնց վրայ պէտք է ապրէին տեղական բնակիչները, և նոր կոչուած զինուորները, մասամբ ալ հայ գաղութներէն»²:

Կարսի անկումը շրջայական ռեակցիայի ազդեցություն ունեցավ, և մի քանի օր անց՝ նոյեմբերի սկզբներին, հանձնվեց նաև Ալեքսանդրապոլը: Լիակատար ջախջախումից խուսափելու և քիչ թե շատ պատվաբեր հաշտություն կնքելու նպատակով նոյեմբերի 18-ին կողմերի միջև վերջնական զինադադար կնքվեց, և դադարեցվեցին ռազմական գործողությունները: Իսկ դեկտեմբերի 2-ին ՀՀ կառավարությունը իշխանությունը հանձնեց բոլշևիկներին՝ վայր դնելով իր լիազորությունները:

Վերջին հարյուրամյակում շատ է քննարկվել այն



հարցը, թե ի վերջո ինչ տեղի ունեցավ Կարսում, ինչն էր պատճառը, որ հայկական բանակը, որը բավարար չափով հանդերձավորված ու զինված էր, առանց կռվի հանձնեց Կարսը, այն դեպքում, երբ թվում էր, թե Կարսում են հավաքվել բազմաթիվ հայրենասեր հայ երիտասարդներ, բայց «Այդ «հայրենասեր» հայ երիտասարդները, հայտնվելով դիրքերում, վճռական պահին նախ սկսում էին գոռալ, թե «... մեր ընկեր բոլշևիկների դեմ մենք կռվել չենք ուզում, եկող թուրքերը մեր ընկերներն են», հետո ցուցադրաբար զցում էին զենքը և դիմում փախուստի, հորդորելով մյուս զինվորներին հետևել իրենց օրինակին»³:

Հայկական բանակի վրա իր ազդեցությունն էր ունեցել հայ բոլշևիկների քայքայիչ քարոզչությունը, որի նպատակն էր ամեն կերպ հասնել Հայաստանի Հանրապետության պարտությանը: Այս մասին է վկայում նաև նրանց հղված «Հույժ գաղտնի» վերնագրված հեռագիրը, որն այսօր պահվում է Հայաստանի ազգային արխիվում: Այդ հեռագրում կարդում ենք. «Հայաստանի կոմունիստների (բոլշևիկների) կենտրոնական կոմիտեն հրահանգում է կուսակցության բոլոր կազմակերպություններին, թե՛ թիկունքում, թե՛ ռազմական գոտիներում և հատկապես Կարսի Գարնիզոն մեկնող բոլշևիկներին անհատ զինվորների շրջանում և առանձին հավաքություններում...», ինչպես նաև թոռուցիկների միջոցով ծավալել լայն պրոպագանդա ընդդեմ պատերազմի, հիմնական խնդիր դարձնելով՝

Թուրքիան այլևս նախկին Թուրքիան չէ և Հայաստանի նկատմամբ ագրեսիվ նպատակներ չունի:

Քենայական Թուրքիան Խորհրդային Ռուսաստանի դաշնակիցն է և պայքարում է իր ազգային

ազատության համար՝ ընդդեմ իմպերիալիզմի (Անգլիայի, Ֆրանսիայի, Հունաստանի):

Հանրապետական Հայաստանի հաղթանակը Թուրքիայի վրա՝ կնշանակի իմպերիալիզմի ուժեղացումը Մերձավոր Արևելքում և դրանով իսկ կվտանգի հեղափոխության հաղթանակը Անդրկովկասում, ապա՝ նաև՝ Արևելքի խորհրդայնացումը:

Հայ բոլշևիկ կոմունիստների խնդիրը պետք է լինի՝ արագացնել հանրապետական Հայաստանի պարտությունը, որով և կարագացվի Հայաստանի խորհրդայնացումը: Այս նպատակի համար պետք է.

Կազմալուծել հայկական կոմկոլ բանակը բոլոր միջոցներով, դրանք են.

ա) կազմակերպել դասալքություն և ամեն կերպ խանգարել գորահավաքին:

բ) ռազմաճակատներում հասկացնել զինվորներին, որպեսզի նրանք չկրակեն առաջացող թուրքական զինվորների վրա, այլ լքելով դիրքերը վերադառնան թիկունք:

գ) չենթարկվել սպաների հրամաններին և հարկ եղած դեպքում ոչնչացնել նրանց:

Այս ամենի հետ ամենաէականն է հասկացնել հանրապետական Հայաստանի զինվորներին, որ հաղթող թուրքական ասքյարը հեղափոխական ասքյար է, որը ոչ միայն իրեն թույլ չի տա որևէ գործողություն պարտված երկրի վերաբերյալ, այլ կօժանդակի աշխատավոր հայ ժողովրդին՝ ազատվելու իմպերիալիստական գործակալ դաշնակցությունից:

Նորից ու նորից բացատրել, որ դաշնակցականների տիրապետությունից ազատվելով՝ Հայաստանը ընդմիջտ կկապվի Ռուսաստանի հետ, ընդմիջտ վերջ կտրվի պատերազմին և սովին, ու մշտական ընդհարումներից քայքայված երկիրը կլիանա Ռուսաստանի հացով և մասնակիցը կդառնա համաշխարհային հեղափոխության մեծ գործի:

Ծանոթություն - Գրությունը կարդալ սահմանափակ ժողովում և կարդալուց հետո անմիջապես այրել:

Հայաստանի կոմ. կուս. կենտրոնական կոմիտեի անդամներ՝ Ս. Կասյան, Ա. Միսկյան, Ա. Նուրիջանյան, Շ. Ամիրխանյան, Ի. Դովլաթյան, Ա. Հովհաննիսյան Նո. 218, Բաքու, 1920 ՄԵՊ. 20»⁴:

Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, հայ բոլշևիկները պարտաճանաչ կերպով կատարեցին իրենց վրա դրված պարտականությունը և, օգտագործելով Կարսի նահանգի քաղաքական ու ռազմական ղեկավարության միմյանց հետ ունեցած մեղմ ասած վատ փոխհարաբերություններն ու հակասությունները, հասան իրենց նպատակին՝ ապահովելով Հայաստանի պարտությունը թուրք-հայկական պատերազմում: Նահանգի ռազմաքաղաքական ղեկավարությունն իր տեղում չէր, կրտսեր սպայական կազմում էլ հիմնականում ռուսական կամ Կարմիր բանակում ծառայած զինվորներ էին, ուստի Կարսի հայկական զինուժը հեշտությամբ ընկավ թուրք-բոլշևիկյան թակարդը,



Կարսը

և ամենևին պատահական չէր, որ Հայաստանի նկատմամբ իրենց դավադիր ծրագրերն իրականացնելու համար քեմալա-բոլշևիկյան ուժերի կողմից որպես թիրախ նախ և առաջ ընտրվեց հայոց բանակը. «Այն որպես առաջնային թիրախ ընտրելը պայմանավորված էր երկու հանգամանքով. պետությունը օտար ներխուժման առաջ պաշտպանվելու անընդունակ դարձնելու համար անհրաժեշտ էր նախ քայքայել և կազմալուծել բանակը, երկրորդ հանգամանքն այն էր, որ հայկական բանակի նախկին ռուսաստանյան սպայակազմի գերակշռող մասն իրեն առաջվա նման համարում էր Ռուսաստանի, այլ ոչ թե Հայաստանի գորակալ: ... Հակապետական գործունեություն ծավալելու համար ամենևին երկրորդական չէր նաև այն հանգամանքը, որ հայկական բանակի կրտսեր զինվորականների շարքերում հանդիպում էին նախկինում Կարմիր բանակում ծառայած հայ զինվորներ, կրտսեր պետական ծառայողներ»⁵:

Հայ բոլշևիկները չգիտեին արդյոք, թե ինչ հետևանքներ կարող էր ունենալ Հայաստանի համար իրենց քայքայիչ գործունեությունը: Գիտեին և համերաշխ էին Մուստաֆա Քեմալի արտահայտած մտքի հետ՝ «Մենք պետք է ոչնչացնենք հայկական բանակը և հայկական պետությունը»⁶: Քեմալի այս միտքը լրացնելու է գալիս նաև ժամանակի հայտնի բոլշևիկ գործիչ Անաստաս Միկոյանը. «...միտքը «Մեծ, Միացյալ և Անկախ Հայաստանի» մասին հանդիսանում է խիստ հետադիմական, վտանգավոր ու հանցավոր ցնորական մի գաղափար, որի դեմ պետք է պայքար ծավալի բոլշևիկյան կուսակցությունը...»⁷:

Հայկական պետությունը վերացնելու, Հայաստանի տարածքներ նվաճելու իր ձգտումներում, ինչպես արդեն ասացինք, Թուրքիան մենակ չէր. նրա հետ էր ոչ միայն բոլշևիկյան Ռուսաստանը, այլև հայ բոլշևիկը, որն այնքան էր օտարացել իր ազգից ու թշնամանքով լցվել հարազատ պետության նկատմամբ, որ առանց վարանելու զոհաբերեց իր ազգի ու պետության շահերը՝ հանուն ինչ-որ անիրական «համաշխարհային հեղափոխության», և այլևս կասկած չկա, որ նրանք Հայաստանը զոհաբերում էին գիտակցաբար, ոչ թե միամտության կամ անտեղյակության պատճառով, ինչպես հաճախ որոշ շրջանակներում փորձում

են բացատրել նրանց քայլերը: Ահա Հայաստանի բոլշևիկյան կուսակցության տրամաբանությունը. «...Եթէ, կ'ըսէին անոր ականաւոր գործիչները, համաշխարհային յեղափոխութեան գերագոյն նպատակներու համար հարկաւոր կը լինի զոհել մէկ միլիոն Հայեր.- պէտք է զոհել»⁸:

Ահա այսպէս հայ բոլշևիկը, հայ ազգի դարավոր թշնամի թուրքի և ռուս բոլշևիկի հետ ձեռք ձեռքի տված, ոչ միայն Միացյալ և Անկախ Հայաստանի, այլ նաև հայկական պետության գոյության դեմ էր պայքարում, և ամենևին պատահական չէր, որ Թիֆլիսի «Կոմունիստ» թերթը հոկտ. 24-ին գրում էր ցնծութեամբ ««...Թուրքերի յարձակումը Հայաստանի վրայ մեծ հրճուհի պատճառեց բոլշևիկներին»»: «Մտում է միայն ուրախանալ, որ Դաշնակցական Հայաստանը գտնուում է այն պոզահարող կովի վիճակում, որին Աստուած եղջիրներ չի տուել»⁹:

Իսկ Բաքվի նույնանուն թերթը ներբողներ էր ձնում Մուստաֆա Քեմալին ու փառաբանում թուրքերին, որ գալիս էին «ազատելու» Հայաստանի աշխատավորությանը:

Մի փոքրիկ հատված այդ օրերին Կարսի նահանգապետ Ստեփան Դորդանյանի հուշերից. «Երբ թիւրք զորաները ներս խուժեցին Կարս, փողոցում երևացին կասկածելի տիպի ռուսներ և Կովկասի թուրքեր... Պարզ էր, որ ազգերի ինքնորոշման այդ նախանձախնդիր արկածախնդիրները ուղեկցում էին Կարաբեքիրի բանակը՝ որպէս պրօպագանդիստներ, բերելով իրանց հետ թոյնը, որ ճաշակել էր հայ զինվորը դեռ մայիսեան օրերում...»¹⁰: Ներխուժելով Կարս՝ թուրքերը, ինչպէս բնորոշ է իրենց, իսկական կոտորած կազմակերպեցին: Այդ օրերին գերված Ա. Բաբայանի վկայությունն է մեզ փոխանցում Ս. Վրացյանը. «...Հայերը ենթարկվում էին կոտորածի, գեղեցիկ կանայք տարվում էին հարճության, տղամարդիկ քշվում էին Թուրքիայի ներսը: ...Մեր գերության հինգերորդ օրը, մեզ այցելեցին չորս հայեր՝ ուղեկցությամբ մի քանի տաճիկ սպաների, զարդարված կարմիր լաթերով: Կարսի հայ կոմունիստներն էին դրանք. պատում էին հանրակացարանները և իրենց թշնամիներին մատնում տաճիկներին: Հեղկոմների անդամներ էին...»¹¹:

Արդարությունը պահանջում է ասել, սակայն, որ Կարսի անկման մեջ միայն բոլշևիկները չէին մեղավոր, իր տեղում չէր նաև ռազմաճակատի հրամանատարությունը, որը անհետատեսություն դրսևորեց և շուրջ 2500 արևմտահայ զինվորներին, որոնք չէին ընդունում ոչ թուրքերին, ոչ էլ բոլշևիկներին, Կարս քաղաքում կենտրոնացնելու փոխարեն, բաշխեց ռազմաճակատով մեկ, մինչդեռ նրանք կարող էին Կարս քաղաքում լուրջ դիմադրող ուժ լինել թուրքերի դեմ, բացի այդ՝ վճռական պահին դեպի Կարս արշավող Կարաբեքիրի զորքին թիկունքից հարված չհասցրեց գնդապետ Հասան Փաշայանի զորամասը, կրավորական կեցվածք էր ընդունել Կարսի բերդի շտաբի պետ Վահան Տեր-Առաքելյանը,



Կարսի նահանգապետ Ստեփան Դորդանյան

և այս համապատկերում իր բարձունքում չէր նաև ժամանակի ամենահեղինակավոր զինվորականներից մեկը՝ գեներալ Դանիել Բեկ-Փիրումյանը:

Այս իրադարձությունները միանգամայն տեղավորվում են Կարսի նվաճման քեմալա-բոլշևիկյան ծրագրի՝ հայ բոլշևիկների «առաքելության» տրամաբանության մեջ:

Հոկտեմբերի 30-ի Կարսի ամոթալի հանձնումը, ըստ էության, վճռեց Հայաստանի Հանրապետության հետագա ճակատագիրը: Կարճ ժամանակ անց թուրքերի ձեռքն անցավ նաև Ալեքսանդրապոլը, տեղի բոլշևիկները շտապեցին իրենց ոգևորությունը հայտնել և ողջույնի խոսք հղել թուրքերին. «Ալեքսանդրապոլի պրոլետարիատը և չքավոր գյուղացիությունը՝ ազատված հայկական դարավոր լծից, հղում է եղբայրական և սրտալի ողջույնը Թուրքիայի կոմունիստական կուսակցությանը...»

Կեցցե Թուրքիայի կոմ. կուսը
Կեցցե Կարմիր հեղափոխական Արևելյան բանակը
Կեցցե կոմունիզմը
Կեցցե Սովետական Հայաստանը
Ար. Տեր-Մարտիրոսյան, Մկ. Խաչիկյան
Նոյեմբեր 1920»¹²:

Կարսի թեման հաճախ օգտագործվել է քաղաքական նպատակների, ավելի հստակ՝ Առաջին հանրապետության ղեկավարներին կամ ՀՅԴ-ին թիրախավորելու համար, մինչդեռ Կարսի հանձնումը, որը, ինչպէս տեսանք, Հայաստանի Հանրապետության թիկունքում լավ կազմակերպված դավադրություն էր, որում ներգրավված էին թե՛ հայ բոլշևիկները և թե՛ հայկական բանակի որոշ ռուսասեր սպաներ, ողջ հայ ժողովրդի պարտությունն էր: «Կարսի ամոթը ՀՀ կառավարությանը չէ միայն, այլ ողջ հայ ժողովրդի: ...Կարսի պատերի տակ պարտվողը հայ զինվորն ու զորավարը չէին միայն, այլ բովանդակ հայությունը, հայ ժողովուրդն իր ամբողջության մեջ»¹³, - իրավացիորեն նշում է Գ.



Հովհաննես Մազմանյան

Նժդեհը:

Կարսի հանձնումը չափազանց ծանր նստեց Հայաստանի վրա. նախ՝ երկիրը կորցրեց իր անկախությունը, ապա՝ 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերով Հայաստանը զրկվեց մի շարք տարածքներից, նույն թվականի հուլիսի 5-ին Արցախը ապօրինաբար կցվեց Ադրբեջանին, Կարսի պայմանագրով Նախիջևանն արդեն տրվել էր այդ երկրին, Հայաստանին մնաց միայն Զանգեզուրը, այն էլ՝ Նժդեհի գլխավորությամբ մղված երկարատև ու հերոսական պայքարի շնորհիվ:

Կարսի դասերը

Թուրք-բոլշևիկյան բարեկամությունը, ինչպես տեսանք ու ինչպես բազմիցս համոզվել ենք, ձևակերպվեց մեր հաշվին. Հայաստանը նվաճվեց ու բաժան-բաժան արվեց թուրք-բոլշևիկյան միացյալ ուժերի կողմից: Հարյուր տարի է անցել արդեն, բայց Կարսի անկման կամ հանձնման թեման մեկ դար անց էլ կարևոր է, հատկապես դասեր քաղելու առումով՝ նախկին սխալները չկրկնելու համար, քանի որ, ինչպես ասում են, պատմությունը կրկնվելու հատկություն ունի:

Այսօր Հայաստանի մերօրյա հանրապետության համար 1990-ականներին ազատագրված Արցախը ունի նույն կարևորությունը, ինչ Առաջին հանրապետության համար Կարսը, և, ցավոք սրտի, այսօր էլ կան հասարակական ու քաղաքական շրջանակներ, որոնք շարունակական քարոզչություն են տանում այն ուղղությամբ, որ «այս թուրքը նախկին թուրքը չէ», «թուրքը բարեկամ է»՝ այս կոչերը համեմտելով չափազանց գայթակղիչ խաղաղության խոստումով՝ միաժամանակ ծաղրելով Միացյալ և

Անկախ Հայաստանի գաղափարն ու վտանգավոր համարելով ազգ-բանակ հայեցակարգը: Ահա թե ինչու Կարսի ողբերգության մասին պետք է խոսել ու հիշեցնել, որպեսզի հայ զինվորն ու հայ ժողովուրդը հերթական անգամ ծուղակը չընկնեն, «բարեկամության» և «խաղաղության» քարոզների տեղատարափի պայմաններում կամ որևէ արտաքին ուժի հետ հույս կապելիս հիշեն Արամի պատգամը. «Մէնակ ենք և պէտք է ապաւինենք միայն մեր ուժերին...»:

Օգտագործված աղբյուրներ և գրականության ցանկ

- 1- Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 508-509:
- 2- Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Ֆրանսիա, 1968, էջ 280:
- 3- Հարությունյան Վ., Կարսի հանձնումը: Զինվորական դավադրության վարկածը, «ՎԷՄ» համահայկական հանդես, Եր., 2018, թիվ 4 (64), էջ 317-318:
- 4- ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 275, թ. 1:
- 5- Հարությունյան Վ., Կարսի հանձնումը: Զինվորական դավադրության վարկածը, էջ 298:
- 6- Հարությունյան Վ., Առաջին Հանրապետություն. Կարսի վերջնախաղը, Եր., 2018, էջ 112:
- 7- Նույն տեղում:
- 8- Խատիսեան Ալ., նշվ. աշխ., էջ 266:
- 9- Վրացեան Ս., Հայաստանը բոլշևիկեան մուրճի և թրքական սալի միջև, Պեյրոթ, 1953, էջ 111:
- 10- Հարությունյան Վ., Կարսի հանձնումը: Զինվորական դավադրության վարկածը, ՎԷՄ, էջ 318:
- 11- Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 509:
- 12- ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 189:
- 13- Նժդեհ Գ., Որդիների պայքարը հայրերի դեմ, Եր., 2015, էջ 21:

1) Աղբյուրներ

1. ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 275, թ. 1:
2. ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 189:

2) Գրականություն

1. «Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանեանի յուշերը», աշխատասիրութեամբ՝ Վլադիմիր Յարութինեանի, Եր., 2018:
2. Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Ֆրանսիա, 1968:
3. Հարությունյան Վ., Կարսի հանձնումը: Զինվորական դավադրության վարկածը, «ՎԷՄ» համահայկական հանդես, Եր., 2018, թիվ 4 (64):
4. Հարությունյան Վ., Առաջին Հանրապետություն. Կարսի վերջնախաղը, Եր., 2018:
5. Նժդեհ Գ., Որդիների պայքարը հայրերի դեմ, Եր., 2015:
6. Վրացեան Ս., Հայաստանը բոլշևիկեան մուրճի և թրքական սալի միջև, Պեյրոթ, 1953:
7. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993:

Մարգարէն

Միւլէոն Զաւարեանի անմեռ յիշարակին



Վանա Իշիան

Զարկ, զարկ, թո՛ղ բացուի ծանր դոնակը հողէ պարսպարանի...

Աշխարհը կործանուեցաւ քո պրոնզէ ուրբերուն փակ, կեանքը հալեցաւ քո պողպատէ բազուկներուն մէջ... և ունայնութիւնը խաւարի նման կը փարսածուի անսահման փիեզերքի բոլոր կողմերը:

Զարկ, զարկ, պիտի բացուի դոնակը յափերէնական:

Մարգարէ՛, կ'ըսեն, որ դու չկաս այլևս... Կ'ըսեն, որ քո հիծուած էութիւնդ ցամքած է խալաթ: Կ'ըսեն, թէ լուսն է պարզամը քո դալկահար շրթոնքներուն վրայ... Եւ ես ինչպէս Թովմնաս անհաւար, կ'ուզեմ միտել եղէգը քո կողին, որովհետեւ անհաւար մըն եմ, նզովեալ անհաւար մը:

Զարկ, զարկ դոնակը ցուրտ հիւղակի:

Մարգարէ՛, աշխարհի ունայնութիւնը կ'ոչնչանայ լոյսի ճաճանչներէն, և մահը կը սոսկայ ոգիի ժպիտներէն, և դո՛ւ, ո՛վ ոգի, ոգի լոյսի և ճշմարտութեան, ով րեասալ քեզ, քո նիւթական գոյութիւնը, որպէսզի վկայէ քո մահը:

Զանգը քո հոգու ղողանջեց անվերջ սուրբ պարգամները մեծ ճշմարտութեան: Սակայն աշխարհը կեղծիք, պտութիւն միայն երազեց:

Եւ երբ բազմամարդ փողոցներու մէջ սիրոյ պարզամը կը հնչեցնէիր, հոն՝ պարերու փակ, շարքերով նստած դահիճները կը հրճուէին: Խաւարը պարսած էր անոնց աչքերը, յիփոթիւնը ամուր-ամուր գոցած էր անոնց ականջները, և դո՛ւ, ո՛վ ոգի, ով րեասալ քեզ, որպէսզի վկայէ նոյնպէս քո մահը:

Եւ երբ անհուն խնդումով կը սաստնէիր երկրէ երկիր՝ երգելով երգը մարդասիրութեան, հենց այն ժամանակ ուժեղ, ահարկու, անկուշտ գայի պէս կը կրծէ միւր անգոր փկարի:

Զարկ, զարկ, թո՛ղ բացուի դուռը քար լոռութեան:

Մարգարէ՛, կ'ըսեն, թէ պարսած է քո սիրտը: Ինչո՞ւ անհունութիւնը գեղեցկի ամբարեցիր հոն, ինչո՞ւ սիրոյ ովկեանը հոն լեցուցիր և բարիի փիեզերքը բովանդակեցիր. նեղ է... ն՛եղ է, և չհիմնացան սիրտիդ հողէ պարերը, խախարուեցան անոր սիւները, ու ռումբի պէս պայթեցաւ անիկա, ցնցեց արար աշխարհը... իցի՛ւ թէ աշխարհը դիմանայ այդ ցնցումին:

Մարգարէ՛, կ'ըսեն ճամբորդ ես դու:

Զարկ, զարկ դուռը հիւղակի, և թո՛ղ բացուին դոնակը սանրարամեփի: Կ'ըսեն, թէ հոն է աղբիւրը ամէն չարութեան... հոն կը դարբնուի խաւարը աշխարհի... հոն կ'ամրանայ շղթան որպտութեան, և հոն կը սրուի մանգաղը մահուան... կ'ըսեն, թէ սատուածն անգամ անգոր պայքարի, անգորութեան մէջ անհիծեց զանոնք, գնաց քաշուեցաւ փոքրիկ պարտէզը բարիին, գեղեցկին: Իջիր, Մարգարէ՛... Իջիր ահաւոր քո խարսգանով, անհնայ փոքր դժոխքը ահաւոր, քշիր խաւարը, դո՛ւրս քաշիր ոգին անհուն բարութեան, քանդիր շղթան սուրի, կեղծիքի և ճշմարտութեան թևերու վրայ աշխարհը դարձիր: Եւ կեանքը կորագլուխ իր մոլորութեան մէջ գուցէ այն արեւն իր մէջքը շփելէ՝ ողիղ նայելու քո հուր աչքերուն: Ո՛վ կարող է այժմ ողիղ նայիլ ճշմարտութեան:

Մարգարէ՛, կ'ըսեն, թէ դու մեռած ես, բայց ես անհաւար եմ, ահաւոր և սարսափելի անհաւար:

Երբ մեռած է լոյսը, երբ մեռած է ճշմարտութիւնը:

Եւ անհաւար մըն եմ, թէկուզ եղէգը կողիդ միտեմ:

Իշիան
«Աշխարհանք», Վան
Կիրակի, 20 Հոկտեմբեր 1913, Թիւ 49



ՄԻՄՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀՅԴ հիմնադիր երրորդության անդամ
1865, գ. Այգեհատ, (Լոռի) - հոկտեմբերի 14, 1913 թ, Կ. Պոլիս

ԴՐՕՇԱԿ